ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ

ԼԵԶՎԱԿԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՒ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ
ԼԻՆԳՎԱ
2025

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ

ԼԵԶՎԱԿԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՒ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ
ԼԻՆԳՎԱ
2025

ՀՏԴ 811.19(07)
ԳՄԴ 81.51ց7
Գ 697

Երաշխավորվել է տպագրության Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի գիտական խորհրդի 12.06.2025 թ. № 10 նիստի որոշմամբ:

Գյուրջինյան Դ. Ս.
Գ 697 Լեզվական դժվարությունները հաղթահարելու ուղեցույց / Դ. Ս. Գյուրջինյան.- Եր.: «Լինգվա» հրատ., 2025.- 176 էջ:

Տարբեր խմբավորումներով հակիրճ ներկայացվում են հայերենի ուղղագրությանը, բառապաշարին, բառագործածությանը, բառակազմությանը, ձևաբանությանը և շարահյուսությանը, առհասարակ հայերեն խոսքին, արևելահայերենի և արևմտահայերենի առնչություններին վերաբերող իրողություններ: Տրվում են խորհուրդներ, հուշումներ, դժվարությունները հաղթահարելու բանալիներ: Հասցեագրված է հայերեն խոսող և գրող, հայերեն սովորող, հայոց լեզվով հետաքրքրվող բոլոր մարդկանց:

ՀՏԴ 811.19(07)
ԳՄԴ 81.51ց7

ISBN 978-9939-56-153-0
© Լինգվա, 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Զգո՜ւյշ լինենք յ-ի նկատմամբ (12 դեպք) **8**
2. Ուղղագրական վթարներ. **բ – պ – փ** (12 բառ) **11**
3. Ուղղագրական վթարներ. **գ – կ – ք** (13 դեպք) **14**
4. Ուղղագրական վթարներ. **դ – տ – թ** (12 բառ) **17**
5. Ուղղագրական վթարներ. **ձ – ծ – ց** (13 դեպք) **21**
6. Ուղղագրական վթարներ. **ջ – ճ – չ** (11 բառ) **24**
7. **Ր / ռ**. Ուղղագրության և ուղղախոսության դժվարություններ (12 դեպք) **27**
8. **Հ**-ի ուղղագրությանն ու արտասանությանը առնչվող դժվարություններ (20 դեպք) **30**
9. **Այսուհետև** կամ **և**-ին առնչվող դժվարություններ (11 դեպք) **34**
10. Կրկնավորների ուղղագրության դժվարություններ (9 դեպք) **38**
11. **Ի** նախդիր ունեցող բառերին և կապակցություններին առնչվող դժվարություններ (9 դեպք) **41**
12. Ավանդույթի ուժը. **ի – յ – հ** անցման դժվարությունների մասին (9 դեպք) **45**
13. Ցկյանս կրթություն (**ց** նախամասնիկով բառերի մասին) (10 բառ) **47**
14. Գրաբարյան կառույցները ճիշտ գործածելու մասին (5 կառույց) **50**
15. Տոնական և հիշատակի օրերի անունների գրության դժվարություններ (7 դեպք) **53**
16. Հաճախ աղավաղվող հայերեն բառեր (8 բառ) **56**
17. Բառի կազմությունը սխալ ընկալելու հետևանքները (11 դեպք) **58**

18. Բառավերջում **ն** կամ **ը** պե՞տք է, թե՞ ոչ (10 դեպք) **63**
19. Բնիկ որտեղացի՞ ես (15 դեպք) **67**
20. Հետիոտն դեպի Արագածոտն (-**ոտն** վերջնաբաղադրիչով բառերի մասին) (6 դեպք) **70**
21. Հայերեն «ծաղկեփունջ» (7 բառափունջ) **73**
22. **Բավական – բավականին** և համանման այլ բառազույգեր (8 բառազույգ) **77**
23. Չշփոթել -**ական** և -**ային** ածանցներով նույնարմատ բառերը (7 բառազույգ) **81**
24. -**Ություն** և -**ույթ**. ինչպե՞ս չշփոթել դրանցով կազմված բառերը (7 բառազույգ) **85**
25. **Ակամայից** և մյուս բառերի մասին. ընդունե՞լ, թե՞ մերժել (6 բառ) **90**
26. Տառային հապավումների գործածության դժվարությունների մասին (11 դեպք) **93**
27. Երբ արևելահայն ու արևմտահայը չեն հասկանում իրար (6 դեպք) **96**
28. Արևելահայն ու արևմտահայը պետք է հասկանան իրար (3 դեպք) **99**
29. **Ու** հոլովման բառերի մասին (7 դեպք) **102**
30. **Վա** / **ի**, **ու**, **ան**. գործածության յուրահատկություններ (14 դեպք) **104**
31. Գոյականի հոգնակին կազմելու դժվարություններ (12 դեպք) **109**
32. Միավանկ վերջնաբաղադրիչով բառերի հոգնակին կազմելու դժվարություններ (11 վերջնաբաղադրիչ) **112**
33. Թվականների գրության և արտասանության դժվարությունների մասին (18 դեպք) **118**

34. Անձնական դերանունների գործածությանն առնչվող դժվարություններ (11 դեպք) **122**
35. **Ս**, **դ**, **ն**, **ը** հոդերի գործածության դժվարությունների մասին (12 դեպք) **125**
36. **-Ե՞լ**, թե՞ **-ալ** (10 դեպք) **129**
37. **Չ**. վտանգված բայեր (9 բայ) **133**
38. Հրամայական բայաձևերի գործածության դժվարություններ (10 դեպք) **136**
39. **Պիտի** և **պետք** **է** եղանակիչների գործածության մասին (7 դեպք) **139**
40. Հայերեն բառերով, բայց օտար մտածողությամբ ձևավորված կառույցներ (10 դեպք) **141**
41. Խորթ **մոտ** (5 դեպք) **144**
42. Սեղմ և ճիշտ (10 դեպք) **146**
43. Հարցական նշանի գործածության դժվարություններ (14 դեպք) **149**
44. Մի չարաշահման մասին. **կողմից** **153**
45. **Եվ**, **ու** շաղկապների նմանություններն ու տարբերությունները (10 դեպք) **155**
46. **Ո՞ր**, թե՞ **ով** **158**
47. **Որպեսզի** շաղկապի գործածության դժվարությունների մասին (6 դեպք) **161**
48. Կրկնադիր և զուգադիր շաղկապների գործածության մասին (7 դեպք) **164**
49. Բարևի և բարևին պատասխանելու երանգները (9 երանգ) **168**
50. Ավանդական ուղղագրությամբ գրվածը ճիշտ կարդալու կանոններ (10 դեպք) **172**

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ուղեցույցի դեր կատարող այս գրքում տարբեր խմբավորումներով հակիրճ ներկայացվում են հայերենի ուղղագրության, բառապաշարի և բառագործածության, բառակազմության, ձևաբանության և շարահյուսության բազմաթիվ իրողություններ, արևելահայերենի և արևմտահայերենի առնչություններին, առհասարակ հայերեն խոսքին վերաբերող այլազան հարցեր՝ իրենց լուծումներով: Ընտրվել են հատկապես այնպիսի իրողություններ, որոնք գործածության և այլ կարգի դժվարություններ են հարուցում հայերեն խոսող և գրող մարդկանց համար:

Քննարկվող յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ տրվում են խորհուրդներ, հուշումներ, դժվարությունները հաղթահարելու բանալիներ:

Գիրքը ստեղծվել է հայերենի նկատմամբ սիրով և ընթերցողի նկատմամբ պատասխանատվության զգացումով: Այն գրված է հանրամատչելի լեզվով, հնարավորինս խուսափելով լեզվաբանական տերմիններ գործածելուց:

Այստեղ արտացոլված են հայերենագիտության մեջ ընդունելության արժանացած տեսակետներ, մոտեցումներ, հեղինակի հետազոտական աշխատանքի արդյունքները, որոնք տասնամյակների ընթացքում քննություն են բռնել դպրոցական և համալսարանական տարբեր դասագրքերում, ձեռնարկներում, բառարաններում, գիտական և գիտահանրամատչելի աշխատանքներում:

Հիմա սկսվում է մեր գրավոր և բանավոր խոսքը բարելավելու և կատարելագործելու աշխատանքը:

Գիրքը կարող է օգտագործվել ուսումնական տարատեսակ պարապմունքների ժամանակ, այստեղ ընդգրկված նյութերը կարող են քննարկման առարկա դառնալ դպրոցներում և համալսարաններում, հիմք ծառայել նմանատիպ այլ հարցերի

առանձնաբար կամ խմբով անդրադառնալու, ինքնուրույն աշխատանք կատարելու։

Եթե այս գիրքը նպաստի հայերեն գրավոր և բանավոր խոսքը բարելավելու գործին, մենք մեզ լիովին վարձատրված կզգանք։

Հ.Գ. Գիտահանրամատչելի այս գիրքը ծնունդ է առել և փորձարկվել նախ համացանցում։ Գրքում ամփոփված 50 նյութերն ամենամսյա պարբերականությամբ հրապարակվել են Art365.am մշակութային կայքում (Հայկ Համբարձումյանի և Շուշան Կարապետյանի առաջարկությամբ ու գործակցությամբ)։ Այնուհետև դրանք վերահրապարակվել են ՀՀ լեզվի կոմիտեի պաշտոնական կայքում, տարածվել սոցիալական ցանցերում, այլուր։

Համացանցային հրապարակումները հետաքրքրել են մարդկանց, եղել են քննարկումներ, արվել առաջարկություններ և լրացումներ։ Այդ ամենը հաշվի առնելով՝ հեղինակը նյութը լրամշակել է տպագրության պատրաստելուց առաջ։

Գրքի նյութերը «Հայերենի ուղեցույց» վերնագրով հեռուստատեսային 25 կարճ հաղորդումների հիմք են դարձել «Բուն» հեռուստատեսությունում (տնօրեն Գեմաֆին Գասպարյանի նախաձեռնությամբ և իր գործընկերների աջակցությամբ)։ Հաղորդումները վարել է հեղինակը։

Այս գրքում արծարծված շատ հարցերի հեղինակն անդրադարձել է տարբեր լսարանների առջև հանդես գալով և քննարկում ծավալելով։

Շնորհակալություն գրքի ստեղծմանը նպաստած բոլոր մարդկանց։

Դ. Գ.

1. ԶԳՈ՛ՒՅՇ ԼԻՆԵՆՔ Յ-Ի ՆԿԱՏՄԱՄԲ

(12 դեպք)

Յ կիսաձայնի գրությանը հայերեն սովորողներն առնչվում են գրել սկսելու առաջին իսկ օրերից: Ասվում է, որ **յ** գրվում է **ա**-ից և **ո**-ից հետո, ինչպես՝ **տղայի** և **երեկոյի**: Ինչո՞ւ: Որովհետև գրաբարում (հին հայերեն) բառավերջում **ա**-ից և **ո**-ից հետո **յ** է գրվել՝ տղայ և երեկոյ, այդպես էլ արքայ – **արքայի** և այլն: Մյուս ձայնավորների դեպքում **յ**-ն բնականաբար չի գրվում, ինչպես՝ **ափսեի**, **վերարկուի** (գրաբար **ափսէ**, **վերարկու**) և այլն. **յ** չի եղել, չենք էլ գրում: Ամեն ինչ հստակ է:

Դժվարություններ են ծագում մի շարք բառերի գրության և արտասանության ժամանակ:

1. ԶԳՈՒՅՇ, ԱՇԽՈՒՅԺ

Զգույշ և **աշխույժ** բառերը մարդիկ հաճախ արտասանում են առանց **յ**-ի և այդպես էլ գրում են, որը սխալ է: Բայց չմոռանանք, որ **յ** չկա սրանցից կազմված **զգուշանալ**, **զգուշորեն**, **զգուշություն**, **աշխուժանալ**, **աշխուժություն** և այլ բառերում, քանի որ հնչյունափոխություն է տեղի ունեցել. **ույ**-ը դարձել է **ու**:

2. ՏՈՒՅԺ

Շա՛տ հին բառ է, **յ**-ով հասել է մինչև մեր օրերը: **Յ**-ն «հեռանում է» նոր բառ կազմելիս, ինչպես՝ **տուժել** (բայց ո՛չ երբե՛ք «տուժվել»), **տուժանք**, որը **տուգանք**-ի «երկվորյակն է»: Նույն պատկերն է, որն ունենք **զգույշ** և **աշխույժ** բառերի պարագայում. **ույ** – **ու** հնչյունափոխությունն է:

3. ՁՅՈՒԹ

Այս բառում **յ**-ն և՛ արտասանվում է, և՛ գրվում (ուստի ոչ մի դեպքում՝ «ձութ»): Ի դեպ, **յ**-ն գրվում է **ձյութ**-ից կազմված բառերում նույնպես՝ **ձյութել**, **ձյութածածկ**, **ձյութապատ**:

4. ՀԱՄԲՈՒՅՐ

Այս կարևոր բառն անզգորեն աղավաղում են՝ ասելով «համբյուր» և սխալ կազմելով նաև գործողության անունը՝ «համբյուրել» (այս սխալներով ձայնագրված երգեր կան. դրանք տևական ժամանակի ընթացքում անընդհատ տարածվում են): Այնինչ **համբույր**, որից էլ օրինաչափորեն՝ **համբուրել** (առանց յ-ի):

5. ԱՂՅՈՒՍԱԿ ԵՎ ՍՅՈՒՆԱԿ

Աղյուսակ և **սյունակ** բառերը միանման կազմություն ունեն. **աղյուս** և **սյուն** արմատներին միացել է –**ակ** ածանցը: Բայց ոմանք -**ակ**-ը դարձնում են –**յակ** (ամենայն հավանականությամբ՝ արմատի յ-ի ազդեցությամբ)՝ առաջ բերելով «փափուկ ձևեր» («աղյուսյակ», «սյունյակ»), որոնք անկասկած սխալ են:

Ոմանք այդպես «քնքշացնում են» **պայուսակ**-ը՝ ասելով «պայուսյակ», կրկին սխալ:

6. ԲՈՒՅԺ, ԲՈՒՅԾ

Այս արմատն առանձին չի գործածվում (գրաբարից մի քանի վկայություն կա միայն): Բառեր կազմելիս կենսունակ է: Երբ առաջին բաղադրիչ է, ապա **բույժ**-ը դառնում **բուժ**՝ **բուժարան**, **բուժել**, **բուժիչ**, **բուժաշխատող**, **բուժքույր**, **բուժակ** և այլն: Բայց երբ վերջին բաղադրիչ է, ապա **բույժ**-ն անփոփոխ է մնում. յ-ն արտասանվում և գրվում է: Այսպես՝ **ակնաբույժ**, **մանկաբույժ**, **վիրաբույժ**, **հոգեբույժ**, **ատամնաբույժ**, **անասնաբույժ**, **ասեղնաբույժ** և այլն (բայց, իհարկե, **ակնաբուժություն**, **վիրաբուժություն** և այլն):

Այդպես էլ **բույծ**-ի դեպքում է՝ **բուծել**, **բուծարան**, բայց **մեղվաբույծ**, **անասնաբույծ**, **ճագարաբույծ**, **ծաղկաբույծ** և այլն:

7. ՔՐԻՍՏՈՆՅԱ

Գրաբար **քրիստոնեայ**, նոր ուղղագրությամբ՝ **քրիստոն-յա**։ «Քրիստոնիա»-ն և «քրիստոնեա»-ն սխալագրություններ են, ուստի մերժելի են։

Քրիստոնեական բառի մեջ **ե**-ն ճիշտ է, քանի որ **յա**-ն հնչյունափոխվել է **ե**-ի, ինչպես որ ունենք **մատյան – մատենա-գիր**, **Մատենադարան**, **ատյան – ատենապետ**, **ատենակալ** և այլն։

8. ՔՆՔՈՒՇ

Այս բառի յ-ն արդեն չի գրվում. **քնքույշ** տարբերակը հանդիպում է դասական գրականության մեջ։

9. ԱՆՈՒՇ – ԱՆՈՅՇ (ԱՆՈՒՅՇ)

Անուշ-ն արևելահայերենում ընդունված գրությունն է։ Արևմտահայերենում յ-ով են ասում և գրում՝ **Անոյշ** / **անոյշ** (կարդացվում է **անույշ**), թեև յ-ից հրաժարվելու կողմնակից-ներ կան։

10. ՆՈՎՈԿԱԻՆ, ՊՈԵՄ

Փոխառյալ բառերում **ա**-ից և **ո**-ից հետո յ գրելու կանոնը (դրա մասին սկզբում խոսեցինք) այստեղ չի գործում, ուստի **նովոկաին** (դեղամիջոց է), **պոեմ** և այլն։ Այդպես էլ **կոկաին**, **պոեզիա**։ Ի դեպ, վերջինիս փոխարեն եթե գործածենք հայակազմ **քնարերգություն** բառը, հարցը միանգամից կփակվի։

11. ՓՐԿՎԵԼՈՒ ՀՈՒՅՍՈՎ, ՀՈՒՍՈՎ ԵՄ

Հույս բառի ձևերն են՝ **հույսի**, **հույսին**, **հույսից**, ուստի ասում ենք. «Փորձանքից փրկվելու **հույսով** դիմեցի այդ քայլին»։ **Յ**-ով, բնականորեն։

Բայց **եմ** բայի ձևերի հետ գործածվելիս առանց յ-ի է։ Այսպես՝ «**Հուսով եմ** (այսինքն՝ **հույս ունեմ**), որ օգտակար գործ է արվում» կամ «**Հուսով ենք**, որ լավ օրեր կգան»։

12. ՎԱԼԵՐԻ

Ռուսական անձնանունները, որոնք ий-ով են վերջանում, հայերեն գրվում են առանց վերջին հնչյունի: Այսպես՝ Валерий – **Վալերի**, Анатолий – **Անատոլի**, Василий – **Վասիլի** և այլն:

Ռուս հոգևորականների անունները բացառություն են, ինչպես՝ Ռուսական եկեղեցու Ալեքսիյ Երկրորդ, Սերգիյ պատրիարքների անունները:

Իսկ ահա ей-ի դեպքում –յ-ն թե՛ արտասանվում և թե՛ գրվում է, ինչպես՝ **Ալեքսեյ**, **Անդրեյ**, **Սերգեյ**:

2. ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՎԹԱՐՆԵՐ. *Բ - Պ - Փ*

(12 դեպք)

Բաղաձայնների ուղղագրության ուսուցումը դպրոցում սկսում են **բ** – **պ** – **փ**-ից: Ուսուցիչները տարիներ շարունակ սովորեցնում են ճիշտ գրելու կանոնները, բայց «վթարներն» անպակաս են, և պիտի ջանք թափել դրանք վերացնելու ուղղությամբ:

Ընտրել ենք «ուղղագրական վթարների» 12 դեպք:

1. Աճապարանք կամ արագություն ցույց տվող **հապ** արմատ ունենք, որից կազմվել են բոլորիս հայտնի **հապա**, **հապճեպ**, **հապշտապ** բառերը: Ուշադրություն. կարող ենք մտապահել, որ **հապճեպ**, **հապշտապ** բառերում երկու **պ** ունենք, նույն տառը պիտի գրել: Ոմանք *հափշտապ* են գրում թերևս **հափշտակել** բառի առաջին չորս տառերի (հնչյունների) ազդեցությամբ: Խորհուրդ. գրելիս մի պահ հապաղում եք և վստահաբար գրում **հապշտապ**՝ խուսափելով վթարից:

2. Այլ է **հափշտակել** բառի հարցը. այստեղ հենց **փ** էլ գրվում է: Այսինքն՝ ինչպես արտասանում, այնպես էլ գրում ենք, ուստի «վթարային իրավիճակ» չպիտի ստեղծել:

3. **Խար** արմատից կազմված բառերում **բ** է գրվում, թեև **փ** ենք արտասանում: Այսպես՝ խաբել, խաբեբա (ուշադրություն. այստեղ էլ երկու **բ** ունենք), խաբեություն, խաբուսիկ, հուսախաբություն, երազախաբություն և այլն:

Նրանք, ովքեր գիտեն **խաբկանք** բառը, երբեք չեն սխալվում, քանի որ, որպես կանոն, գրագետ են լինում:

4. Նմանության հիման վրա **երբ**, **երբեմն**, **երբեք** բառերի հետ մտովի սխալ կապ ստեղծելով՝ ոմանք **երփներանգ**, **երփնավառ** «գունավառ. բազմագույն գեղեցիկ փայլով ցոլացող» բառերը գրում են **բ**-ով և անշուշտ սխալվում են: Սրանցում **երփն**՝ «գույն» նշանակող արմատն է:

5. **Թպրտալ** բառը շատերը **փ**-ով են արտասանում և այդպես էլ գրում են, բայց դա ընդունելի չէ: Հանուն ճշմարտության պիտի ասենք, որ հայերենի տարբեր բառարաններում գրանցվել են նաև **թպրտալ** բառի տարբերակները՝ **թփրտալ** (որպես բարբառային բառ), նույնիսկ **թփռտալ** (որպես ժողովրդական բառ): Ուղղագրական նոր բառարաններում միայն **թպրտալ**-ն է տրված, դպրոցներում հենց դա են սովորեցնում:

6. **Արփի** «արև» բառի, ինչպես նաև **Արփիար**, **Արփենիկ**, **Արփինե**, **Միրարփի** անունների **փ**-ի ազդեցությամբ **ջրարբի** «ոռոգովի, ջրովի. ջրով հագեցած» բառը սխալմամբ հաճախ գրում են **փ**-ով, այնինչ այստեղ **արբ** «խմել» արմատն է: Այդ արմատը կա նաև **արյունարբու** «արյուն խմող, արյան ծարավի», **արբենալ** «գինովնալ, հարբել», **գինարբուք** «կերուխում, խրախճանք» բառերում: Պարզ է, չէ՞, որ **հարբել** և **հարբեցող** բառերն էլ են **բ**-ով գրվում:

7. Արմատի յուրահատուկ կրկնությամբ է կազմվել **ճեփ-ճերմակ** «բոլորովին ճերմակ» բառը (**ճերմակ** բառի առաջին վանկի **ր**-ն փոխվել է **փ**-ի): Այդպես է նաև **լեփ-լեցուն**, **դափ-դատարկ**, **դեփ-դեղին**, **նոփ-նոր**, **սեփ-սև**, հիմնականում

արևմտահայերեն **խոփ-խոշոր** «շատ մեծ՝ խոշոր» և այլ բառերում: Ինչպես տեսնում ենք, սա մեկ դեպք չէ, այլ համակարգային իրողություն է: Այնպես որ **պ** գրելն անտեղի ու սխալ է: Ուստի միայն **ճեփ-ճերմակ**՝ **փ**-ով:

8. Հայտնի է, որ մի շարք բառերում **ղ**-ից հետո գրվում է **բ** (արտասանվում է **պ**): Այսպես՝ **աղբ**, **աղբյուր**, **եղբայր**, **ողբ**: **Հղփանալ** «առատությունից՝ լիությունից երես առնել, շփանալ» բառը սրանցից տարբեր է: Այստեղ **փ** է գրվում և արտասանվում, ուստի պիտի զգույշ լինել և չսխալվել:

9. Ժողովրդական մի բառ կա՝ **ցփնել**, որ նշանակում է «ցողել, շաղ տալ», փոխաբերաբար՝ «աննպատակ ծախսել, վատնել»: Բառարաններում գրանցված է նաև **ցպնել** ձևով (ոմանք այդպես էլ արտասանում են), բայց դրանից հղում է արվում **ցփնել** բային: Ընդունված է բառի **փ**-ով գրությունը:

10. **Ախպեր**-ը **եղբայր** բառի ժողովրդական տարբերակն է արևելահայերենում: Այս ձևով շատ է հանդիպում նաև գեղարվեստական գրականության մեջ, արձանագրված է բառարաններում: Արևմտահայերեն ժողովրդական խոսքում **եղբայր**-ը դարձել է **աղբար** (Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբա՞րը» հիշեցիք):

Այս **աղբար**-ից Հայաստանում առաջացավ **ախպար** տարբերակը, որով տեղացիները կոչեցին հայրենադարձված արևմտահայերին (ցավալի մի փաստ): Եթե **աղբար**-ը սովորական բառ է, չեզոք կամ դրական իմաստով, ապա **ախպար**-ը միայն բացասական երանգավորում ունի:

11. Ուղղագրական խայտառակ վթար է **շփվել** բառի *շբվել* գրությունը, որ հաճախ ենք տեսնում համացանցային գրառումներում՝ մեսրոպատառ և լատինատառ (այստեղ էլ հաստատակամորեն ո՛չ ասենք այլատառ հայերենին): Բարեբախտաբար **շփում**-ը ճիշտ են գրում: Մնում է «սրԲազան պատերազմ» հայտարարել սխալագրությանը-*(~~շբվել~~, ~~shbvel~~):*

12. Նույնքան խայտառակ վթար է **խփել** բայի փոխարեն *խբել* գրությունը: Սխալ են գրում նրանք, ովքեր դպրոցից աղոտ հիշում են, որ մի շարք բառերում արտասանվում է **փ**, բայց գրվում է **բ**: Այո՛, **սրբել**, **որբ**, **ուրբաթ**, **շաբաթ**, **համբերել**, **Գաբրիել**, բայց ո՛չ ~~**խբել**~~: «Գրագիտական գյուտեր» պետք չէ անել, **փ** արտասանվում, **փ** էլ գրվում է՝ **խփել**: Ինչպես որ **փ**-ով ենք գրում **խուփ** «կափարիչ» բառը:

Մի փոքրիկ ուշադրություն և ջանք, ու կտիրապետենք ուղղագրական վթարներից խուսափելու նուրԲ արվեստին:

3. ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՎԹԱՐՆԵՐ. *Գ - Կ - Ք*

(13 դեպք)

Դպրոցում սովորածին հաճախ անդրադառնում ենք ամբողջ կյանքի ընթացքում՝ լրացնելու մեր գիտելիքը, վերացնելու կասկածներն ու անվստահությունը, վերհիշելու իմացածը, ինչպես և շտկելու սխալները: Մարդիկ երբեմն սխալ են արտասանում և գրում **գ**, **կ** և **ք** ունեցող բառերը:

Գ-կ-ք-ին առնչվող հաճախադեպ «ուղղագրական վթար-ներից» ընտրել ենք 13-ը:

1. սայթա**ք**ել

Գրվում է **ք**-ով, քանի որ շա՜տ հին **աք** արմատն է, որ «ոտք» է նշանակում: Այս **աք**-ից է կազմվել **աքացի** բառը, որ ժողովրդական խոսքում դարձել է **քացի** (քացով խփել): Պարզ է, որ այսքանից հետո **սայթաքել** բառը մարդիկ այլևս **կ**-ով չեն գրի:

2. վար**ա**կ

Վարակ բառը ոմանք բառը սխալմամբ արտասանում են **ք**-ով: Եթե ճիշտ՝ **կ**-ով արտասանենք, ապա գրելիս դժվարության առջև չենք կանգնի: Եվ ճիշտ կգրենք թե՛

վարակ-ը և թե՛ նրանից կազմված բառերը՝ **վարակել** (**վարակվել**), **վարակիչ**, **վարակազերծել**:

3. վարկաբեկել

Վարկաբեկել բառը նշանակում է «վարկը՝ հեղինա-կությունը գցել, հեղինակազրկել»: **Վարկ** արմատն է. **վարք** բառի հետ կապ չկա, ուստի **կ**-ով պիտի արտասանել և գրել:

4. կողպեք

Կազմվել է **կողպել** բայից՝ -**եք** ածանցով: Թերևս բառի առաջին տառի ազդեցությամբ ոմանք վերջում էլ են **կ** գրում, որ ճիշտ չէ: Բառավերջում **ք**-ի հստակ ամրապնդմանը կնպաստեն –**եք** ածանցով կազմված մյուս բառերը, ինչպես՝ **արժեք**, **նշանդրեք**, **տնօրինեք**, **հիմնարկեք** «հիմնադրում, հիմքը գցելը»:

5. տեգր

Բառը երկար ճանապարհ է անցել (V դարի հայերենում գործածված կա)՝ **տայգր – տագր – տեգր**: Տեգրը ամուսնու եղբայրն է:

Այսօր **տեգր**-ն ընդգծված **ք**-ով ենք արտասանում, բայց ավանդույթին՝ **տայգր**-ից սկիզբ առած գրությանը հետևելով՝ գրում ենք **գ**:

6. պատշգամբ

Ցանկալի է այս բառը **գ**-ով արտասանել, բայց անգամ այլ կերպ (**կ**-ով) արտասանելու դեպքում **գ**-ով է գրվում (ձեռագիր մատյաններում հայ գրիչները **կ**-ով էլ են գրել): Նաև **շքապատշգամբ** բառն ունենք:

7. դիցուք

Դիցուք բառը շատ է հանդիպում երկրաչափության դպրոցական դասագրքերում: Նշանակում է «ենթադրենք, ասենք թե, դնենք թե»: Աշակերտներն այդքան շատ տեսնում

են **դիցուք** բառը, բայց հետագայում, երբ գրելիս են լինում, սկսում են վարանել՝ **ք**-ո՞վ գրել, թե՞ **կ**-ով:

Ք-ով: **Դիցուք**-ը գրաբարյան քարացած ձև է, **դնել** անկանոն բայի երկրորդ ապառնի ժամանակի հոգնակի առաջին դեմքն է:

8. գրքույկ

Կազմվել է **գիրք** բառից՝ -**ույկ** ածանցով, որը բառին նվազական նշանակություն է հաղորդում: Չպետք է շփոթել –**ույք** ածանցով բառերի հետ (**պլիտույք**, **կահույք**): Բառավերջում այստեղ **կ** է՝ **գրքույկ**: Գրքույկների տարբեր տեսակներ կան՝ **զինգրքույկ**, **սանգրքույկ**:

9. նախկին

Նախկին նշանակում է «առաջ՝ սկզբում եղած՝ տեղի ունեցած. առաջվա», «նախորդ, երբեմնի»: Ձևային ինչ-ինչ նմանություն և իմաստային հեռավոր կապ զգալով **նախքան** «որևէ բանից առաջ», «որևէ բանի նախորդելով» (կազմությունը՝ նախ+քան) բառի հետ՝ որոշ մարդիկ սա ասում և գրում են **ք**-ով (նախքին), որն անշուշտ սխալ է, մերժելի: Սրանք շատ տարբեր են, ուստի **նախքան**, բայց **նախկին**:

10. էգուց

Էգուց-ը խոսակցական բառ է, նշանակում է «վաղը, այսօրվան հաջորդող օրը», փոխաբերաբար՝ «ապագա»: Արտասանվում է **ք**-ով, բայց գրվում է **գ**, քանի որ **այգ** «առավոտ» արմատն է. էգուցը վաղն առավոտն է, երբ այգը բացվում է:

11. մարդիկ

Ժամանակակից հայերենում գոյականի հոգնակին սովորաբար կազմում ենք –**եր** կամ –**ներ** մասնիկներով: Կան բացառություններ, որոնցից մեկը **մարդիկ**-ն է, որը կազմվում է –**իկ** մասնիկով: Սրանից էլ՝ **տղամարդիկ**, **նախամարդիկ**:

Այս բառերը ոմանք սխալմամբ գրում են **ք**-ով, ապա փորձում հիմնավորել, թե դա գրաբարից է գալիս: Այդպես չէ: Գրաբարյան մասնիկը **ք**-ն է, ինչպես՝ **սահմանք**, **ծովք**: Գրաբարում եղել է **մարդք** և **մարդիկ**, բայց ո՛չ –*իք* (~~մարդիք~~): Իսկ երբ հիշենք **մարդկային**, **մարդկություն** բառերը, ամեն ինչ տեղը կընկնի:

12. Սարգիս – Սաքո

Սարգիս անձնանունը **ք**-ով արտասանում, բայց կանոնի համաձայն **գ**-ով ենք գրում (այստեղից էլ **Սարգսյան** ազգանունը):

Ժողովրդական խոսքում անունը ձևափոխվել, դարձել է **Սաքո**: Հիշենք Հովհ. Թումանյանի «Լոռեցի Սաքո» ստեղծագործությունը:

Ասենք նաև, որ արևմտահայ գրության մեջ **գ**-ն պահպանվում է՝ **Սագօ**:

13. Գրիգոր

Այս անձնանունը վաղուց ի վեր տարածված է հայերի մեջ: Անվան երկրորդ **գ**-ն **ք** է արտասանվում, բայց դա որևէ նշանակություն չունի. գրում ենք **Գրիգոր**, **Գրիգորյան**: Հավելենք, որ **Գրիգորիս**-ի մեջ հենց **գ** էլ արտասանում ենք: **Գրիգոր** անվան ժողովրդական **Գիքոր** տարբերակում **ք** ենք գրում (հիշենք Հովհ. Թումանյանի «Գիքորը»):

Անվան ժողովրդական մյուս տարբերակը զուգագրություն ունի՝ **Գոքոր** և **Գոգոր**:

4. ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՎԹԱՐՆԵՐ. *Դ - Տ - Թ*

(12 դեպք)

Համացանցում, զրասենյակային գրություններում և այլուր «ուղղագրական վթարները» շարունակվում են: Դրանք կանխելու կամ գոնե նվազագույնի հասցնելու նպատակով

ներկայացնում ենք **դ**-**տ**-**թ**-ի ուղղագրությանն առնչվող «վթարային» 11 դեպք:

1. **Ձեռքդ** (քո ձեռքը), **տունդ** (քո տունը), **մատիտդ** (քո մատիտը) ... Այս **դ**-ի մասին գրագետ մարդիկ անընդհատ գրում են, բացատրում, որ սա **դ** հոդն է, ճիշտ կերպով այն կապում են **դու**, **դա**, **այդ** բառերի **դ**-ի հետ, բայց շատերը համառորեն շարունակում են սխալվել ու բառի վերջում *տ* գրել (հետևելով արտասանությանը), ասենք այսպես՝ *~~Ծնունդտ~~ շնորհավոր:* Այո՛, բառավերջում **դ** կա, որին ավելանում է ևս մեկը՝ **դ** հոդը, ու լինում է երկու **դ**՝ Ծնուն**դդ** շնորհավոր: Այդպես էլ՝ կոկոր**դդ**, մար**դդ**, վար**դդ** և այլն:

2. **Զարտուղի** բառը նշանակում է «կողմնակի», «խոտոր» և գրվում է **տ**-ով շատ պարզ պատճառով: Բառը կազմված է հետևյալ բաղադրիչներից՝ **զ** նախդիր, **արտ**- նախածանց և **ուղի** արմատ, այսինքն՝ «ուղուց՝ բուն ճանապարհից դուրս»: Ոմանք, լավ չիմանալով բառի կազմությունը և իմաստը, **զարտուղի** բառի սկզբնամասը նմանության հիման վրա կապում են **զարդ**-ի հետ և բառը սխալմամբ գրում **դ**-ով: Ավելի «հեռատեսները» (չակերտները չանտեսեք) **զարթնել** / **զարթուն** բառերի հետ են կապում ու **թ**-ով գրում: Եվ կրկին սխալվում են: Ուշադրություն դարձնենք՝ **արտ**- նախածանց՝ **տ**-ով, ուստի **զարտուղի**:

3. **Արդուկ** և **արդուկել** բառերի մասին խոսելիս մշտապես հիշեցվում է, որ գործ ունենք «ձև» նշանակող **արդ** արմատի հետ, որ արդուկը ձև է տալիս հագուստին: Դրա համար են այդպես գրվում:

Ժողովուրդը արդուկի գործառույթը համարում է ճմռթված հագուստը հարթեցնելը, հետևաբար հաճախ ասում և գրում է *հարթուկ* և *հարթուկել*: Բառերն այս ձևով նույնիսկ բառարաններում են գրանցվել, բայց, որպես կանոն, դրանցից հղում է արվում կանոնական **արդուկ** և **արդուկել** բառերին:

Կարի ֆաբրիկաներում կան **արդուկարաններ** և **արդուկիչներ**, բայց սրանք, իհարկե, հազվադեպ են գործածվում: Կրկին **դ**-ով են գրվում:

4. Իրար շատ նման երկու բայ ունենք՝ **բրդել** և **բրթել**, որոնք նույն ձևով էլ արտասանվում են (**թ-ով**): Տարբերակենք: **Բրդել**-ը, որ նշանակում է «կտոր-կտոր անել», «մանրացնել», գրվում է **դ**-ով: Սրանից են առաջացել **բրդուճ**-ը, **մածնաբրդոշ**-ը:

Բրթել-ը, որ նշանակում է «հրել», գրվում է **թ**-ով:

Չպետք է խառնենք ու առաջինը՝ **բրդել**-ը և նույնարմատ մյուս բառերը **թ**-ով չգրենք:

5. **Տաքդեղ**-ը կծու (կամ քաղցր) պղպեղն է: Շատերն այս բառում **ք**-ից հետո հաճախ **տ** են արտասանում ու սխալմամբ այդպես էլ գրում: Բայց եթե այդ մարդիկ իմանան, որ այստեղ շա՛տ հին **դեղ** արմատն է, որ սկզբնապես նշանակել է «խոտ», ապա՝ «բուժիչ խոտ», իսկ այժմ՝ «բնական և քիմիական ծագմամբ բուժանյութ», ապա **տաքդեղ**-ը վստահորեն միշտ կգրեն **դ**-ով:

6. Երդիկը հայկական ժողովրդական տան կտուրի մեջ թողնված բացվածքն է, որ ծառայում էր որպես լուսամուտ և օդանցք: Երդիկ ունենում են նաև թոնրատները: Բառը գրվում է **դ**-ով՝ **երդիկ** (արմատն է **երդ**), թեև ոմանք կապում են **երթ** արմատի հետ և գրում **թ**-ով, որ ճիշտ չէ:

Դ-ն ամրապնդելու համար ասենք, որ ունենք գրեթե մոռացված **երդակից** բառը, որ նշանակում է «հարևան, դրկից», նաև **երդակալ**՝ «երդիկը փակելու առարկա (սալաքար, տախտակ)», **երդահարկ**՝ «ըստ երդերի՝ ծուխերի գանձվող հարկ»:

7. Կրկնակի **դ**-ով ունենք **դդում**, **դդմիկ, դդմազգի, դդմապուր** և ուրիշ բառեր (նույնիսկ **Դդմաշեն** գյուղ կա): Երկրորդ **դ**-ն արտասանվում է **թ**, դրա պատճառով էլ ոմանք հրաժարվում են նույն տառը գրելուց և, անշուշտ, սխալվում են:

8. **Բացօթյա** բառը նշանակում է «բաց երկնքի տակ»: Ունենք նաև սակավ գործածվող **բացօթյակ**՝ «բացօթյա տեղ, բաց երկնքի տակ գիշերելու տեղ»: Սրանցում **օթ** հին արմատն է, որից կազմվել են **օթևան** «գիշերելու՝ գիշերը մնալու տեղ», «հանգրվան», **օթոց** «ննջարան, սենյակ», **գիշերօթիկ** «գիշեր ու ցերեկ տվյալ հաստատությունում մնացող ու սնվող» բառերը: Այս դեպքում վստահաբար **թ** է: **Օդ** արմատի հետ կապ չունի:

Կա նաև **բացօդյա** համեմատաբար նոր բառը (**դ**-ով), որ նշանակում է «բաց օդում, շենքերից դուրս»: Ասենք՝ *«Թռչունների բացօդյա ճախրը գրավեց ուշադրությունս»*: Այս բառը հազվադեպ է: Սրա ազդեցությամբ շատ հին **բացօթյա**-ն ոմանք սխալմամբ գրում են **դ**-ով:

9. **Խորթ**, **խորթանալ**, **խորթություն** բառերը գրվում են այնպես, ինչպես արտասանվում են: Մարդիկ գիտեն բազմաթիվ բառեր, որոնցում **ր**-ից հետո **թ** է արտասանվում, բայց գրվում է **դ**, ինչպես՝ **արդար**, **արդեն**, **բարդ**, **բերդ**, **բուրդ**, **երդվել**, **յարդ**, **հաղորդիչ**, **նյարդ**, **վարդ**, **օրհորդ**, և սրանց ազդեցությամբ նրանք **խորթ** բառի վերջում (ու նրանից կազմված բառերում) թյուրիմացաբար **դ** են գրում: Կրկնենք՝ **խորթ**, **խորթանալ**, **խորթություն**:

10. **Խորդուբորդ** «անհարթ» բառն արևելահայերենում այժմ **դ**-երով է գրվում, արևմտահայերենում՝ **տ**-երով՝ **խորտուբորտ** (հիմնականում այդպես է):

11. Տան կամ բնակարանի այն մասը, որտեղ պահվում են տանն անհրաժեշտ կամ գործածությունից մասամբ դուրս եկած իրերը, գործիքները, կոչվում է **խորդանոց**: Բառարաններում կարող ենք տեսնել **խորդանոց** և **խորթանոց** տարբերակները, ընդ որում բառարանագիրները նախընտրելի են համարում **թ**-ով տարբերակը: Սակայն ժողովուրդն այս բառը հիմնականում **դ**-ով է արտասանում, այդպես էլ գրում է (բայց, իհարկե, հազվադեպ): Արևմտահայերենում էլ է

խորդանոց: Եթե քվեարկելու լինենք, ես միանշանակ կընտրեմ **խորդանոց**-ը:

12. **Թատերական** բառի հիմքում **թատրոն** բառն է: Ուստի սխալ է «թաթերական» արտասանելը, առավել ևս՝ գրելը:

5. ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՎԹԱՐՆԵՐ. *Ձ - Ծ - Ց*

(13 դեպք)

Հայերեն գրողների համար երբեմն դժվարություններ են առաջ գալիս **ձ-ծ-ց** բաղաձայններ ունեցող մի շարք բառերի գրության ժամանակ, չնայած որ դրանք մարդկանց հիմնականում ծանոթ են դպրոցական տարիներից:

Ընտրել ենք **ձ-ծ-ց**-ի ուղղագրությանն առնչվող «վթարային» 13 դեպք: Կրկնում ենք բաց թողածը:

1. **Փառապանծ** «փառավոր ու պանծալի» և **սիզապանծ** «սեզ և պանծալի, վեհորեն գեղեցիկ» բառերի վերջում **ծ** է գրվում, թեպետ շատերը սխալմամբ **ձ** են գրում: Համոզված **ծ** գրելու համար հիշենք **պանծալի** բառը և չենք սխալվի:

2. **Կցկտուր** «կապ, կապակցություն չստեղծող՝ անկապ», «անավարտ մասերից՝ կտորներից կազմված, միասնական ամբողջություն չկազմող» բառը գրվում է **ց**-ով, թեպետ ոմանք այստեղ էլ **ծ** գրելու գայթակղություն են ունենում (հավանաբար **կծկել** բայի ազդեցությամբ): Պիտի հիշենք **կից**, **կցել** բառերը ու **կցկտուր**-ը վստահ գրենք **ց**-ով:

3. **Կծկել** բայը **ծ**-ով է գրվում: Ոմանք շփոթում են **կցկտուր**-ի հետ ու **կծկել**-ը **ց**-ով գրում: Ծ-ն մտքում մեկընդմիշտ ամրակայելու համար հարկավոր է մտաբերել **կծիկ**-ը:

4. Եթե բաղադրիչների բաժանենք **կաթնահունց** բառը, ապա կունենանք **կաթով հունցված** (խմորեղեն) կապակցությունը: Եվ երբեք **ձ**-ով չենք գրի. **հունցել** բայը «թույլ չի տա»:

5. **Ճրագալույց** բառն ըստ բաղադրիչների մեկնաբանվում է «ճրագներ լուցանելը՝ վառելը»: **Լուցանել** գրաբարում նշանակում է «վառել» (հիշենք **լուցկի**-ն): Բառը առավելաբար եկեղեցական նշանակություն ունի՝ «Ծննդյան և Զատկի նախատոնակներին եկեղեցիներում բազմաթիվ ճրագներ և ջահեր վառելը»: **Ց**-ով:

6. **Փայծաղ** (սա մարդու և ողնաշարավոր կենդանիների արյունաստեղծ գործարանն է) բառում **ծ** է, չնայած շատերը բառն արտասանում են ընդգծված **ց**-ով, հարկ եղած դեպքում այդպես էլ գրում (ոմանք վերջում անգամ *խ* են գրում): Միշտ **ծ**-ով է եղել, իսկ գրաբարում՝ **ն** վերջնահնչյունով՝ **փայծաղն**: Եթե բառը ճիշտ արտասանենք, ապա ճիշտ էլ կգրենք:

Մի երիտասարդ ժամանակին ինձ ասաց, որ այս բառը ճիշտ գրելու համար հիշում է **ծաղիկ** բառը՝ **ծաղ** - **փայծաղ**: Բայց դրանց միջև, իհարկե, ոչ մի կապ չկա: Ուղղակի օժանդակող մի հնար է:

7. **Մտացածին** բառ ունենք, որ նշանակում է «մտքից ծնված, մտքով հնարված, երևակայությամբ ստեղծված»: Ոմանք **ծին** արմատի **ծ**-ի ազդեցությամբ ասում ու գրում են *մտածածին*, որն անշուշտ սխալ է: Այստեղ **ց** է, քանի որ գրաբարյան **միտք** բառի սեռական հոլովաձևն է **մտաց**: **Մտացածին**, այսինքն՝ մտքի ծնունդ:

8. Բաղադրյալ մի ածանց ունենք՝ -**վածք**, որ կազմված է դերբայական -**ված** վերջավորությունից և -**ք** մասնիկից՝ **թխվածք**, **այրվածք**, **կազմվածք**, **կառուցվածք**, **սանրվածք**, **կոտրվածք** և այլն:

Սրանք չպիտի շփոթել **լվացք**, **գնացք** և նման ուրիշ բառերի հետ, որոնք բոլորովին ուրիշ կազմություն ունեն: Այստեղ **–ք** ածանցն ավելանում է **լվաց** և **գնաց** հիմքերին:

9. **Հաստարակած** բառն աշխարհագրական տերմին է, նշանակում է «երկրի պտույտի առանցքին ուղղահայաց մեծ

շրջագիծը, որ հավասար հեռավորություն ունի երկու բևեռներից և երկրագունդը բաժանում է երկու հավասար մասերի»: Գրաբարում նշանակել է ուղղակի «կես», «հավա-սար», հիմքն է **հասարակ**, որից բաղադրված **հասարակեալ** / **հասարակած**-ը հավասար կիսվածն են ցույց տալիս:

Ակամա հիշում ենք հայ դասական Մուրացանի «Հասա-րակաց որդեգիրը» պատմվածքը: Այստեղ **հասարակաց**-ը նույն **հասարակ** բառի հոլովաձևն է, որ նշանակում է «ընդհանուրի, ամենքի, բոլորի»: Սա **ց**-ով է: Նույն հոլո-վաձևով բաղադրված **հասարակաց տուն** կապակցությունը նշանակում է «անառականոց»:

Այսպիսով՝ աշխարհագրական գիտաբառը՝ **հասարա-կած**, քարացած հոլովաձևը՝ **հասարակաց**:

10. **Հանդիպակաց** «դիմացի» բառի վերջի **ց**-ն հեշտ բացատրելի է՝ **հանդեպ+ա+կաց** «դիմացը կանգնած». **կենալ** «կանգնել», «կանգ առնել», «մի տեղում, մի դրության մեջ մնալ», որից էլ՝ **կաց** (հմմտ. **վեր կենալ** - **վեր կացա**):

11. **Չ**, **ծ**, **ց** ունեցող մի շարք բառերի գրությունը պարզապես պիտի հիշել: Այսպես. **ուրց**՝ **ց**-ով, **դաղձ**՝ **ձ**-ով (**ուրցով** թեյ, **դաղձով** թեյ), իսկ **կուրծք**-ը՝ **ծ**-ով (սրանից էլ՝ **կրծքավանդակ**, **կրծքամիս**, **կրծոսկր**):

13. Ոմանք բառերի գրությունը հիշում են նման հնչյունակազմ ունեցող բառերի հակադրության միջոցով, ինչպես՝ **խուրձ**, բայց **պախուրց** «սանձ, սանձափոկ», **անցուդարձ**, բայց **ապաթարց** (կետադրական նշան. Աստղ մ'ալ ես կ'երթամ յաւելուլ երկնից - Պ. Դուրյան):

14. **Չվածեղ** բառի կազմության տարբեր մեկնաբանու-թյուններից ամենից հավաստին սա է. ձված եղ (յուղ). հարած ձուն լցնում են եռացող յուղի մեջ և տապակում: Թվում է՝ յուղն առատ է եղել, որ այդպես են կոչել: Ոմանք գրում են *ձվաձեղ* (թերևս բառասկզբի ձ-ի ազդեցությամբ), այդպես էլ

արտասանում են: **Ձված**-ի վերջի **ծ**-ն հաշվի առնելով՝ պիտի գրել **ձվածեղ**:

Ի դեպ, արևմտահայերենի բեյրության երկհատորյա բացատրական բառարանում **ձուածեղ** բառից հղում է արվում **ձուազեղ**-ին (**զեղել** նշանակում է «ածել, լցնել»): Բայց ժողովրդի բերանում այդ բառը չկա:

6. ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՎԹԱՐՆԵՐ. *Ջ - Ճ - Չ*

(11 դեպք)

Դպրոցական ուսումնառության երկար ու ձիգ տարիների ընթացքում հայերենի ուսուցիչները սովորեցնում են բառերը ճիշտ գրելու՝ ուղղագրության կանոնները, բայց, ինչպես ցույց են տալիս փաստերը, «վթարները» շարունակվում են: Եթե մի քիչ լարենք մեր ուշադրությունը, ամեն ինչ տեղը կընկնի. կսկսենք ավելի գրագետ գրել:

Ընտրել ենք **ջ-ճ-չ**-ի ուղղագրության «վթարային» 11 դեպք:

1. Հայկական շատ համով մի ճաշ կա, անունը՝ **քրջիկ**: Այս ճաշը եփում են թթու դրած կաղամբից և ձավարից: Գրվում է **ջ**-ով, քանի որ առաջացել է **քուրջ** «մաշված՝ քրքրված շոր. ցնցոտի» իմաստն ունեցող բառից: Այս ճաշն էլ թթու կաղամբի կտորտանքից, ժողովրդի լեզվով ասած՝քրջերից են եփում, ուստի պիտի գրենք **ջ**-ով:

2. Թվում է՝ խնդիր չկա. **չ** ասում, **չ** էլ գրում ենք՝ **զեղչ**: Բայց միջին դասարաններում սովորածը ոմանք հետագայում մոռանում են, և խանութների ապակիներին հայտնվում է *զեղջ*-ը, ոմանց գրավոր խոսքում՝ նույնիսկ *զեղճ*-ը:

Ուրեմն նախ բառի ճիշտ արտասանությունը պիտի սովորեցնենք՝ զեղՉ: Այդպես էլ պիտի գրենք՝ զեղչ, նաև զեղչել:

3. Սովորեցնողների համար գլխացավանք է դարձել նաև զղջալ բառը (սրանից էլ՝ **զղջում**): Այստեղ **ղջ** ենք գրում **ողջ**, **ամբողջ**, **աղջիկ** և կամ **բղջախոհ** «ցանկասեր» բառերի նման: **Զեղչել** բառի ազդեցությա՞մբ է, թե՞ մեկ այլ պատճառով, ոմանք դժվարանում են ճիշտ կողմնորոշվել «վթարային իրավիճակում» և սխալվում են՝ **ջ**-ի փոխարեն է՛լ *չ*, է՛լ *ճ* գրելով կամ էլ **ղ**-ի փոխարեն՝ *խ*:

Կարգ ու կանոնով ամեն բան դնենք իր տեղը՝ **զեղչ**, **զեղչել**, բայց՝ **զղջալ**, **զղջում**:

4. Ոմանց համար «ուղղագրական վթարի» առիթ կարող է դառնալ **զիջել** բառը, որի բառափնջում են **զիջում**-ը, **փոխզիջում**-ը: Անկասկած **ջ**-ով, միայն **ջ**-ով. կանոն է:

5. **Աղջիկ** բառն ունի ժողովրդական տարբերակներ, որոնք հանդիպում են գրականության մեջ՝ **աղջի** և **ախչի** ձևերով: Այսպես.

> **Աղջի՛**, անաստված, նստի՛ր վրանում,
> Ի՞նչ ես դուրս գալիս, խելքամաղ անում:
>
> (Հովհ. Թումանյան, «Անուշ»)

- Հորս ու մորս ասա,- լսեց ամուսնու ձայնը,– առաջինը իրե՛նց հրավեր արա, ա՛յ **ախչի**, նրանք պիտի նստեն սեղանիդ գլխին (Վ. Պետրոսյան, «Կրակե շապիկ»):

Անկախ սրանցից՝ **աղջիկ** բառի կանոնական գրությունը նույնն է:

6. **Փուչ** «մեջը դատարկ, սնամեջ», «անիմաստ, անհեթեթ» բառի հարցը հեշտ կարող ենք լուծել, եթե հաշվի առնենք, որ նույն արմատից են **փչել**, **փչոց** «սուտ», **փչան** «սուտասան», **փուչիկ**, **փչանալ** բառերը: Այսքանից հետո որևէ մեկը վստահաբար **փուչ**-ն այլևս չի գրի **ջ**-ով:

Բայց այստեղ մի բայց կա. արևմտահայերենում այս բառը գրում են **փուճ** ձևով, սրանից էլ՝ **փճանալ**:

7. Միայն ջ-ով են գրվում **պղպջալ** և **պղպջակ** բառերը, որքան էլ այս կամ այն բարբառի կամ խոսվածքի ազդեցությամբ այս բառերը տարբեր կերպ արտասանենք: V դարից սկսած՝ **պղպջակ**-ը այսպես է գրվում (դարերի ընթացքում ճ-ով գրողներ էլ են եղել, ինչպես հիմա): Այսպիսով՝ **պղպջալ** և **պղպջակ**՝ միայն ջ-ով:

8. Արտասանական նմանության հիման վրա ոմանք շփոթում են **թռչել** «սավառնել, թևածել» և **թրջել** «խոնավացնել, թացացնել» բայերի գրությունը: Պարզ է, որ **թրջոց**-ը **թրջել** բայից է կազմվել: Ուստի ուղղագրական վթարն այսուհետև պիտի բացառել:

9. Մի բառ կա, որ գայթակղության քար է դարձել շատերի համար. քանի՜ աշակերտ և ուսանող է միավոր կորցրել այս բառը սխալ գրելու պատճառով: Դա **խառնիճաղանջ**-ն է: Ժամանակին այս բառը բառարաններում տրվում էր գրության երկու ձևով՝ **խառնիճաղանճ** (ճ-ով) և **խառնիճաղանջ** (ջ-ով):

Տարբերակների մրցակցությունում ի վերջո հաղթեց **խառնիճաղանջ**-ը՝ ջ-ով. արևելահայերենի ուղղագրական բառարաններում արդեն միայն սա է տրվում: Արևմտահայերենում ճ-ով գրությունը տակավին պահպանվում է (ճ գրում, բայց ջ են արտասանում):

10. Ոմանք շփոթում են **միջև** (երկնքի և երկրի միջև, իմ և քո միջև) և **մինչև** (մինչև տուն, մինչև երեկո) բառերի գրությունը: Պարզապես պիտի չշփոթել, այլապես արտառոց սխալներ ենք ունենում:

11. Արևելահայերեն **հաչել**, **հաչան**, արևմտահայերեն **հաջել**, **հաջան**, բայց սրանք իրար չեն խանգարում. յուրաքանչյուրը ճիշտ է իր համակարգում: Համեմատենք. արևել. «**Հաչան** շունը չի կծում», արևմտ. «Խածան շունը ***հաջան*** չ'ըլլար»:

Աջակողմյան երթևեկությամբ հաջողություն մաղթենք բոլորին ուղղագրության խաչմերուկներում, վայրէջքներին ու վերելքներին:

7. Ր / Ռ. ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(12 դեպք)

1. Կանոն է. **ր** արտասանում, **ր** էլ գրում ենք կամ **ր** գրվածը **ր** էլ պիտի կարդանք: Օրինակ՝ **ր**ոպե, վայ**ր**կյան, բա**ր**եկի**ր**թ:

2. Մարդիկ կան, որոնք **ր**-ով գրվող մի շարք բառեր արտասանում են ընդգծված **ռ**-ով և սխալվելով այդպես էլ գրում են: Արտառոց է, երբ **կրծել**, **կրճտացնել**, **հրճվանք, գարշելի** կամ **արժանի** բառերը **ռ**-ով գրված ենք տեսնում:

3. **Արհամարհանք** բառը, որի կազմում երկու **արհ** կա, ոմանք շփոթում են **առ** նախամասնիկ ունեցող բառերի հետ (ինչպես օրինակ՝ **առողջանալ**, **առինքնել**) և **ռ**-ով գրում, ընդ որում երկրորդ **հ**-ն էլ անտեսում են՝ ~~առհամարանք~~: Լիովին անհիմն է և մերժելի:

4. Քաղաքագետները, վերլուծաբանները, լրագրողները և ուրիշներ հաճախ սխալ՝ականջ ծակող **ռ**-ով են արտասանում **Իրան** և **Գերմանիա** երկրանունները [~~Իռան~~, ~~գեռմանիա~~]: Այնինչ պիտի ասել **ր**-ով, ինչպես բազմաթիվ ուրիշ անուններ՝ **Արգենտինա**, **Ուրուգվայ**, **Սիրիա**, **Թուրքիա**, **Նիգերիա** և այլն: Զարմանալի է, որ **Իրան**-ը սխալ արտասանողները **Իրաք**-ը ճիշտ են արտասանում:

Ճավելենք, որ խոսակցական լեզվում ոմանք **ր**/**ռ**-ին մոտ հնչյուն են արտասանում **Ֆրանսիա** և **Բրազիլիա** երկրանուններում: Այդ մարդկանց խորհուրդ է տրվում **ր** արտասանել, որքան հնարավոր է:

5. Ն բաղաձայնից առաջ արտասանվող **ռ** հնչյունը **ռ** տառով էլ գրվում է, ինչպես՝ **առնել**, **բռնել**, **դառնալ**, **եղեռն**, **խառնիխուռն**, **սպառնալ**։ Բացառություն են՝ «**Ինտերնացիոնալ**» (կա նաև փոքրատառով), **ինտերնետ** «համացանց»։

Այս կանոնի թելադրանքով տասնամյակներ շարունակ գրվել է **կիբեռնետիկա** (**ռ**-ով)։ Հիմա, երբ հայերենում հայտնվել են նույնահիմք նոր կազմություններ, մարդիկ գրելիս դժվարանում են՝ **կիբեռհանգագործությո՞ւն**, թե՞ **կիբերհանգագործություն**, **կիբեռանվտանգությո՞ւն**, թե՞ **կիբերանվտանգություն**, **կիբեռհարձակո՞ւմ**, թե՞ **կիբերհարձակում**։ Համացանցում, պաշտոնական գրագրության մեջ և այլուր զույգ ձևերն էլ հանդիպում են, ավելի շատ՝ առաջինները։ Հաշվի առնելով **կիբեռնետիկա** բառում **ռ**-ի կայուն վիճակը՝ առաջնությունը կարելի է տալ **ռ**-ով տարբերակներին։ Ի դեպ, դրանք հենց **ռ**-ով էլ արտասանվում են։

6. **Ռ**-ով է գրվում **պառկել** բայը, որը ոմանք, «մեղմաբար» սխալվելով, գրում են **ր**-ով։ Շատերը սխալվողներին կատակով բացատրում են, որ պարկի մեջ դնելու հետ կապ չկա, ուստի **ռ**-ով պիտի գրել։ **Պարկ** բառի հետ իսկապես կապ չկա. **պառկել** բառի արմատն է **պառակ**, որ «կող» է նշանակում, այստեղից էլ **պառկել**՝ «կողի վրա մեկնվել»։

7. **Բարբառ** բառն առաջացել է **բառ** արմատի կրկնությունից. առաջին եզրի **ռ**-ն տարբերվելով հնչյունափոխվել է **ր**-ի. այդպես էլ գրում ենք։ Գրության և արտասանության բացարձակ նույնություն չկա, բայց ուղղագրությունը հստակ է՝ միայն **բարբառ**, որից էլ՝ **բարբառային, բարբառախոս, բարբառագետ**։

Այդ նույն ձևով բառի առաջին եզրում **ր**, վերջում **ռ** է գրվում նման կազմություն ունեցող մի շարք բառերում (և նրանցից կազմվածներում)։ Այսպես՝ **գրգիռ** (**ջղագրգիռ**, **դյուրագրգիռ**, **գրգռել**), **թրթիռ** (**թրթռալ**), **մրմուռ** «ցավ, կսկիծ» (**մրմռալ** «ցավել»), **սարսուռ** «բուռն հուզմունքից կամ վախից

առաջացող դող. սարսափ» (**սարսռազդու** «սարսափելի»), **կարկառ** «քարակույտ, ժայռի դուրս ցցված մասը» (**կարկառել** «ձեռքը մեկնել՝ երկարել՝ պարզել», **կարկառուն** «դուրս ցցված», փոխաբերաբար՝ «աչքի ընկնող, նշանավոր, երևելի» (մարդու մասին): Պարզ է, չէ՞, թե ինչպե՛ս է ձևավորվել **կարկառուն** բառի փոխաբերական այս իմաստը. անվանի մարդիկ ժայռի դուրս ցցված մասի պես առանձնանում են իրենց շրջապատից:

8. Կան արմատի կրկնությամբ կազմված բառեր էլ, որոնք, ի տարբերություն նախորդ կետում թվարկվածների, ձայն են ցույց տալիս: Սրանք **ռ**-երով են գրվում՝ **գռռգռռալ** (**գռռգռռոց**, **ամպագոռգոռ**), **հռհռալ** (**հռհռոց**), **կռկռալ**, **ճռճռալ**, **մռմռալ** «մռլտալ, մռմռոց հանել», «քրթմնջալ», **փռփռալ** «քամուց թրթռալ, ծածանվել» (օրինակ՝ «Ուժեղ քամուց **փռփռում է** լեռան գլխին ամրացված եռագույն դրոշը»):

Ուսուցիչները սովորաբար հանդիպադրում են **մրմռալ** «ցավել» և **մռմռալ** «մռլտալ», նաև «քթի տակ անորոշ ձայներ հանել, քրթմնջալ» բառերը. **վերքը մրմռում է** և **կատուն մռմռում է**: **Մռմռալ** բառի «քրթմնջալ» իմաստի համար մի օրինակ բերենք գեղարվեստական խոսքից, որ միաժամանակ ցույց է տալիս, թե մարդն էլ կարող է մռմռալ. «Իսկ սրբազանը, փոխանակ շնորհակալ լինելու, քթի տակ **մռմռում է**» (Հ. Մկրտչյան, «Մի հայի պատմություն»):

9. **Փրփուր** բառում երկու **ր** կա (ոմանք **ռ**-երով են արտասանում և գրում): Սրանից կազմվել է **փրփրել** «փրփուր դառնալ, փրփուրի վերածվել», նաև «չափազանց զայրանալ, կատաղել» բայը: Օրինակներ՝ «Ծովը նորից **փրփրել է**», «Պետը **փրփրել է**, գրիչը կոտրել»: Ունենք նաև **փրփրադեզ** և այլն:

10. **Թրթուր** բառում նույնպես երկու **ր** կա: Սրանից է կազմվել **թրթուրավոր** բառը (**թրթուրավոր** մեքենա՝ տրակտոր):

Նույն կերպ՝ **մարմար** բառում: Սա, նաև **մարմարե**, **մարմարակերտ** բառերը **ր**-երով են գրվում ու արտասանվում:

11. **Գանգուր** և **ժխոր** բառերի վերջում **ր** է գրվում (և արտասանվում):

12. Որոշ բառերի գրությունը կարելի է մտապահել հակադրությունների միջոցով և այլևս չշփոթել: Այսպես. **թրջել** «խոնավացնել, թացացնել»՝ **րջ**-ով (հմմտ. **թրջոց**) և **թռչել** «օդում սլանալ. թևածել»՝ **ռչ**-ով (հմմտ. **թռչուն**):

Ռ և **ր** բաղաձայններն իրար նման են, բայց և տարբեր: Մասնագիտական լեզվով ասած՝ **ռ**-ն բազմաթրթիռ է (արտասանության ժամանակ լեզուն թրթռում է մի քանի անգամ), իսկ **ր**-ն միաթրթիռ է (լեզուն մեկ թրթիռ է կատարում): Չշփոթենք ո՛չ արտասանելիս, ո՛չ էլ գրելիս:

8. *Հ-Ի* ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆՆ ՈՒ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅԱՆԸ ԱՌՆՉՎՈՂ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(20 դեպք)

Հայերենի բաղաձայնների ուղղագրությունը սովորեցնում են հիմնականում հակադրման և զուգադրման միջոցով: Դա արվում է ըստ հնչյունների (և տառերի) եռյակների (**բ** - **պ** - **փ**, **գ** – **կ** – **ք**, **դ** – **տ** – **թ**, **ձ** – **ծ** – **ց**, **ջ** – **ճ** - **չ**) և երկյակների (**ղ** – **խ**, **վ** – **ֆ**, **մ** - **ն**, **ր** - **ռ**, **ժ** – **շ**, **զ** – **ս**):

Հ-ի դեպքն ուրիշ է. սա հակադրություն չունի: Այս պարագայում բառի մեջ կա՛մ **հ** կա, կա՛մ էլ չկա, բայց լինելու կասկածը կա: Հ-ի լինել-չլինելու հարցն է երբեմն շփոթեցնում մարդկանց:

Ներկայացնենք **հ**-ի ուղղագրության ու արտասանության առնչվող դժվարությունները և դրանք հաղթահարելու հնարները:

1. **Արհամարհել** բառի երկրորդ **հ**-ն չի արտասանվում, բայց գրվում է: Ոմանք դա մոռանում են: Ավելին, բառի սկզբնամասում **ր**-ի փոխարեն էլ **ռ** են գրում՝ շփոթելով **առ** նախամասնիկի հետ (որոշ բարբառախոսներ նույնիսկ ասում են *առ եմ համարում*): Ի՞նչ անել: Հարկավոր է իմանալ և հիշել, որ բառի կազմում երկու **արհ** կա (այս մասին նշել ենք **ր** – **ռ**-ի ուղղագրության բաժնում ևս): Եվ վերջ:

2. **Արհավիրք** բառի մեջ ոմանք ավելորդ **հ** են գրում թերևս **արհամարհանք** բառի ազդեցությամբ:

3. **Աշխարհայացք** բառը գրելիս ոմանք զարմանում են, թե բառն ինչո՛ւ է այդպիսին, երբ **աշխարհ**-ի վերջում **հ** կա, մի **հ** էլ **հայացք**-ի սկզբում: Անգամ մտածում են երկու **հ** գրելու մասին: Բառակազմությունն այսպիսի ընթացք է ունեցել. **աշխարհ+ա+հայացք** – *աշխարհահայացք*, որից կրկնվող **հա**-ն կրճատվել է, ուստի ունենք **աշխարհայացք**:

4. **Խոր** արմատից ունենք **խորին** բառը, որը տարբեր իմաստներ ունի՝ «մեծ, ուժգին, սաստիկ, ծանրակշիռ» (**խորին հարգանք՝ ականածանք** և այլն):

Եվ ահա **խորհել** «մտածել» բառի ազդեցությամբ ոմանք **խորին**-ը սխալմամբ գրում են **հ**- ով: Սրանք շփոթելի չեն: **Խորհել** բառի արմատը **խորհ**-ն է (**խորհուրդ**, **խորհրդակից**, **խորհրդատու**, **խորհրդանիշ**), **ր**-ի անկումով՝ **խոհ**-ը (**լրջախոհ**, **համախոհ**, **խոհեմ**):

5. **Ընդ** նախամասնիկով կազմված բազմաթիվ բառերից մեկը **ընդհանուր**-ն է, որը կազմվել է **ընդ** և **հանուր** բաղադրիչներից: Այստեղ **հ** գրելը պարտադիր է, որքան էլ արտասանության ժամանակ **հ**-ն ոմանք «չեզոքացնում են» (**դհ**-ն **թ** դարձնելով): Մարդիկ այս բառի ազդեցությամբ **ընդամենը** բառում **հ** են գրում՝ ~~ընդհամենը~~: Չի կարելի, քանի որ **ամենը** բառն է:

6. **Ընդարձակ** բառի մեջ էլ են ոմանք **հ** խցկում՝ այն սխալմամբ կապելով **հարձակվել** բառի հետ: Այնինչ **արձակ**-ն է (Արձակ դաշտերի ամայության մեջ նա մեղմ շշնջաց – Վ. Տերյան):

7. **Ընդհատել**, **ընդհակառակը**, **ընդհարվել** բառերում **հ** կա, քանի որ **հատել**, **հակառակը**, **հարվել** բառերն են: Գուցե արտասանելիս **հ**-ն ընդգծված չի հնչում, այնուամենայնիվ գրելը պարտադիր է, քանի որ բառի տեսքն է աղավաղվում, որը կարող է սխալ ընկալման պատճառ դառնալ:

8. Իրար նման երկու տարբեր բառեր կան, որոնք զանազանվում են **հ**-ի առկայությամբ / բացակայությամբ: Այդ բառերն են՝ **հովիար** «ձեռքի փոքրիկ հարմարանք հով անելու համար» (Կնոջ ձեռքին **հովիար** կար) և **հովար** «գլխարկի կիսաշրջանաձև առաջամասը» (Տղայի գլխարկի **հովարն** անսովոր երկար էր):

9. **Ամպհովանի** բառը նշանակում է «մեծ և զարդարուն քառակուսի հովանոց կաթողիկոսի և բարձրաստիճան ուրիշ հոգևորականների համար»: Բառի կազմում **հով** արմատը կա, և **հ**-ն արտասանվում ու գրվում է:

10. **Հեղ** արմատից ունենք **հեղել** (նշանակում է «թափել, լցնել»), **հեղուկ**, **արյունահեղություն** և այլն: Արմատի կրկնությամբ և երկրորդ **հ**-ի անկումով առաջացել է **հեղեղ** բառը, որից էլ շատ հին ժամանակներում կազմվել են **ջրհեղեղ**, **հեղեղատ**, **հեղեղել** բառերը և V դարում գործածվել հայերեն Աստվածաշնչում:

11. Այսօր **հեղհեղուկ** «փոփոխական, անհաստատ, անկայուն» գրվող բառը ավանդական ուղղագրությամբ գրվել է **յեղյեղուկ**: Սա կազմվել է **յեղ** արմատի կրկնությամբ (այս արմատը տեսնում ենք **յեղափոխութիւն** բառի մեջ): Հայաստանում անցյալ դարում կատարված ուղղագրության փոփոխությունից հետո բառը գրվում է **հ**-երով՝ **հեղհեղուկ**: Մարդիկ այս բառի

ազդեցությամբ կասկածներ են ունենում **հեղեղատ** բառը գրելիս, այնինչ դրանք կապ չունեն: Ուստի **հեղհեղուկ**՝ երկու **հ**-ով, **հեղեղատ**՝ մեկ **հ**-ով:

12. Արմատի կրկնության հիման վրա է կազմվել **հայթայթել** բառը, որը մի ժամանակ գրվել է *հայթհայթել*, սակայն հետագայում երկրորդ **հ**-ն ընկել է: Թե՛ արևելահայերենում և թե՛ արևմտահայերենում գրվում է **հայթայթել**, առանց երկրորդ **հ**-ի: Այն գրելը սխալ է:

Այդպես էլ **անհեթեթ** «անիմաստ, անմիտ» բառն է գրվում մեկ **հ**-ով:

13. **Հայհոյել** բառը կազմվել է **հայ** բնաձայնության կրկնության հիման վրա: Բառի երկու **հ**-երն էլ գրվում և արտասանվում են: Այդպես էլ **հայհոյանք**, **հայհոյախոս, հայհոյություն**:

14. **Շնորհ** արմատից բազմաթիվ բառեր են կազմվել՝ **շնորհալի**, **շնորհավոր**, **շնորհակալ**, **ապաշնորհ**, **բարեշնորհ** և այլն: Այս կարգի բառերից թերևս միայն **անշնորհք** բառի գրության ժամանակ են մարդիկ սխալվում, երբ **հ**-ն չեն գրում: Այնինչ այդ **հ**-ն արմատի վերջին հնչյունն է:

15. **Նշխար** բառի վերջում **հ** չկա, երբևէ չի եղել: Սխալվողները շփոթում են **րհ** ունեցող բառերի հետ (**աշխարհ**, **ճանապարհ** և այլն):

16. **Ապաշխարել** «զղջալ գործած սխալի՝ հանցանքի համար, ջանալ մեղքը քավել ու դարձի գալ» բառը շատերը կապում են **աշխարհ** բառի հետ և գրում **հ**-ով: Այնինչ այդպես չէ, ուստի պիտի գրել առանց **հ**-ի, ինչպես նաև **ապաշխարանք**, **ապաշխարություն**:

17. **Հեկեկալ** «արտասվել, լաց լինել» բառը կազմվել է արմատի կրկնությամբ, բայց երկրորդ **հ** բառի կազմում երբեւէ չի եղել (չի գրվել), հետևաբար ներմուծելն ուղղակի սխալ է:

18. **Նախագահ** բառի վերջում **հ** կա, քանի որ **գահ** արմատն է: Ոմանք այդ **հ**-ն զեղչում են և ասում «Նախագան եկավ», որն ականջ ծակող սխալ է: Պիտի ասել՝ «**Նախագահը** եկավ», «**Նախագահը** ելույթ ունեցավ», «**Նախագահը** ստորագրեց հրամանը»: Հարկավոր է հստակ որոշել և բառավերջի **հ**-ն վստահորեն ասել:

19. Լավ չիմանալով **անպատեհ** «անտեղի, անհարմար, ոչ պատշաճ» բառը՝ ոմանք այն արտասանում են առանց բառավերջի **հ**-ի, որ ճիշտ չէ: Այդ մարդկանց ասենք, որ բնականորեն ունենք նաև **պատեհ** «պատշաճ, հարմար, համապատասխան» բառը, որից կազմվել է **անպատեհ**-ը: Այդ երկուսի հարադրումով գործածում ենք **պատեհ-անպատեհ** «տեղին-անտեղի» կապակցությունը (օրինակ՝ «**Պատեհ-անպատեհ** հիշեցնում էր իր բարեկամի մասին»):

20. **Հովհաննես** բառում **վ**-ից հետո **հ** կա: Անձնանունը համառոտագրում ենք հենց **հ**-ի վրա: Այսպես՝ **Հովհ. Թուման-յան**, **Հովհ. Այվազովսկի**:

9. *ԱՅՍՈՒՀԵՏԵՎ* ԿԱՄ *ԵՎ*-ԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(11 դեպք)

Մեսրոպ Մաշտոցը ստեղծել է հայերենի այբուբենի երեսունվեց տառերը՝ **ա**-ից մինչև **ք** (եթե տառանուններով ասենք՝ այբից մինչև քե): Միջին դարերում հայերենի այբուբենին ավելացել են **օ**, **ֆ** տառերը: Հավելված տառերը մաշտոցյան այբուբենին միանում էին **և** շաղկապի միջոցով:

Այդ գրանշանը յուրահատուկ է. առաջացել է **ե**-ի և **ւ**-ի (վյունի) կցման հետևանքով: Դասական ուղղագրությամբ՝ **եւ**, այժմ՝ **և**:

Անդրադառնանք **և**-ի գրության, **և** կամ **եվ** ունեցող բառերի ուղղագրության դժվարություններին՝ ներկայացնելով 11 դեպք:

1. Եվ

Մեծատառ **և**-ն արտահայտվում է երկու տառով՝ **Եվ** (Ե-ն մեծատառ, երկրորդ տառը՝ **վ**-ն՝ փոքրատառ, ավանդական ուղղագրությամբ՝ **Եւ**): Օրինակ՝ **Եվրոպա**, **Եվրասիա**, **Եվա**, **Եվպատորիա** և այլն:

Սա էլ նախադասության սկզբում. «**Եվս** երկու աջակից ունեցանք»:

2. Եվրոպա – եվրոպացի, արևմտաեվրոպական

Եվրոպա անունից կազմված բառերի (ոչ հատուկ անունների) սկզբում և բառամիջում գրվում է **եվ**՝ **եվրոպացի**, **եվրոպական**, **արևմտաեվրոպական**, **հնդեվրոպական** (հնդեվրոպական լեզվաընտանիք) (ոչ թե «հնդևրոպական», ինչպես անցյալում էին գրում):

3. տնական, անձրև, ևս

Բառամիջում և բառավերջում **և**-ը գրվում է մեկ տառով: Օրինակ՝ **արևային**, **երևույթ**, **տերև**: Բառասկզբում հազվադեպ է՝ **ևս**, **ևեթ** (վաղը **ևեթ**):

4. ԵՐԵՎԱՆ

Երբ որևէ բառ, արտահայտություն կամ նախադասություն գրում ենք մեծատառերով, ապա գրվում է ԵՎ: Այսպես, օրինակ, Հայաստանի մայրաքաղաք Երևանի անունը՝ **ԵՐԵՎԱՆ**, ոչ թե ԵՐևԱՆ, ԵՐԵւԱՆ կամ ԵՐԵվԱՆ, ինչպես երբեմն տեսնում ենք տարբեր տեղերում: Կրկնում ենք՝ այս դեպքում բոլոր տառերը մեծատառ:

Նույն կերպ սխալ է, երբ ազդագրում գրված է լինում, օրինակ, «ՍԵՐ և ԽԱՐԴԱՎԱՆՔ». պիտի լինի «ՍԵՐ ԵՎ ԽԱՐԴԱՎԱՆՔ»՝ բոլորը մեծատառ:

5. հոգեվարք

Բառեր կան, որոնցում **եվ** ենք գրում, քանի որ **վ**-ով սկսվող բաղադրիչ ունենք: Ահա այսպես՝ **գերեվարել** (< վարել): **Գերի** բառի **ի**-ն դարձել է **ե** և «հանդիպել» **վարել** բայի **վ**-ին, դրա համար էլ գրվում է **եվ**: Այդպես էլ **հոգեվարք**, որ «հոգու վարքն» է, **տարեվերջ** (տարվա վերջը), **ոսկեվարս** (ոսկե վարսեր՝ մազեր): Սխալվում են հատկապես **գերեվարել** և **հոգեվարք** գրելիս:

6. ոսկևորել

Երբ **ի**-ով վերջացող բառին հաջորդում են **ա** հոդակապը և -**վոր** ածանցը (կամ պարզապես –**ավոր**-ը), տեղի է ունենում հնչյունափոխություն և գրվում է **և**: Այսպես՝ **հոգևոր** (< հոգի+ա+վոր), **ոսկևորել** (< ոսկի+ա+վորել) «ոսկեզօծել, ոսկեջրել», **գոտևորել** (< գոտի+ա+վորել) «գոտի կապել մեկին», «գոտի անցկացնել», «չորսբոլորը եզերել, շրջապատել»: Պարզ երևում է, որ **վ**-ով սկսվող բառամաս չունենք, ուստի գրում ենք **և**: Այդպես էլ՝ **արժևորել** «արժեքավորել»:

Հավելենք, որ վերջերս գործածվում է նաև **գոտիավորել** բառը, որ նշանակում է «գոտիների բաժանել» (այստեղ, իհարկե, **և**-ի խնդիր չի առաջանում, հիշատակում ենք, քանի որ **գոտևորել** բայի չհնչյունափոխված բաղադրիչներն են):

7. սերկևիլ

Այս և համանման բառերը (օրինակ՝ **առևանգել**) գրում ենք **և**-ով, քանի որ **եվ** գրելու հիմքեր չկան:

8. այսուհետև

Այս բառն առաջացել է **այս** և **հետ** բառերի գրաբարյան գործիական հոլովի ձևերից: **Այսու** բաղադրիչի համար կարող ենք համեմատել **այսուամենայնիվ** բառի հետ, **հետև**

բաղադրիչի համար՝ **որովհետև**-ի: Շատերը գիտական խոսքում, պաշտոնական գրություններում **այսուհետև**-ի փոխարեն գրում են **այսուհետ**: Ավելին, ոմանք **այսուհետև** գրողներին նույնիսկ ուղղում են, թե իբր ճիշտ ձևը **այսուհետ**-ն է: Բայց բառը մկրատողները հաշվի չեն առնում, որ լեզվում համակարգային կապեր կան, որոնք անթույլատրելի են դարձնում այդ կարգի միջամտությունները: Այսպես, եթե ընդունելի համարենք **այսուհետ**-ը, այդ դեպքում ի՞նչ անենք նույն կառուցվածքն ունեցող **այնուհետև**-ի հետ: Սա **այնուհետ** դարձնելն ուղղակի արտառոց կլինի: Ուստի **այսուհետև** և **այնուհետև**, երկուսն էլ բառավերջի **և**-ով:

9. Անդրեև

Ռուսական ազգանունների վերջում գրում ենք **և**, ինչպես՝ **Ալեքսեև**, **Պրոկոֆև**, **Սերգեև**: Այդպես էլ այլալեզու անձնանունների դեպքում, ինչպես՝ **Զբիգնև** և այլն (հայկական **Պարգև**-ի նման):

10. գուցեև / գուցե և

Գուցե «թերևս, հավանաբար» բառը ունենք, որը հաճախ գործածում ենք **և**-ի հետ՝ **գուցե և** «կարող է պատահել, հնարավոր է»: **Գուցե**-ն և **և**-ը այնքան են միասին ու սերտ գործածվել, որ կցվել են ու ավելի շատ անանջատ են գրվում՝ **գուցեև**: Եվ մարդիկ երբեմն չեն կողմնորոշվում՝ միասի՞ն գրեն, թե՞ անջատ: Հիմա անցման շրջան է, և երկու ձևն էլ ընդունելի պիտի համարել՝ **գուցեև** կամ **գուցե և**: Նկատելի է, որ ի վերջո հաղթելու է անանջատ գրությունը, քանի որ երկու բաղադրիչների միջև արտասանական դադար գրեթե չկա:

Այդպես էլ ունենք **ուստի - ուստիև / ուստի և**, **թեպետ - թեպետև / թեպետ և**:

Այնինչ **բայց և այնպես** / **բայցևայնպես**: Կրկին հավասարարժեք են, բայց բաղադրիչներն ավելի շատ առանձին են գրվում:

11. Կապակցության բաղադրիչներն առանձին շեշտելու դեպքում գրել են **նախ և առաջ**: Ժամանակին այս գրությունն արձանագրվել է նաև ուղղագրական բառարանում: Վերջին ժամանակները միտում կա բաղադրիչները միասին գրելու՝ **նախևառաջ**: Գրության երկու ձևերն էլ ճիշտ են:

10. ԿՐԿՆԱՎՈՐՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(9 դեպք)

Ժամանակակից հայերենի (տվյալ դեպքում՝ արևելահայերենի) ուղղագրության ամենադժվար, միաժամանակ վիճահարույց հարցերից է բառերի և բառակապակցությունների բաղադրիչների միասին, անջատ կամ գծիկով գրությունը: Թեև մշակված կանոններ կան, սակայն դեռևս նկատվում է գրության որոշ անմիօրինակություն, որը հայերեն գրողների համար ճիշտ կամ սխալ լինելու երկմտություն է առաջ բերում:

Արձանագրենք 9 դեպք:

1. Գծիկով են գրվում յուրատեսակ այն կրկնավորները, որոնց առաջին բաղադրիչի կամ նրա սկզբնամասի բաղաձայնը փոխվել ու դարձել է՝

- ✓ **փ – դափ-դատարկ**, **ճեփ-ճերմակ**, **լեփ-լեցուն**,
- ✓ **ս – կաս-կարմիր**, **մաս-մաքուր**:

Ի դեպ, արևելահայ և արևմտահայ ժողովրդական խոսքում այսպիսի բազմաթիվ կազմություններ կան՝ **դեփ-դեղին**, **սեփ-սև**, **նոփ-նոր**, **խոփ-խոշոր**, **միս-մինակ** և այլն: Այս կարգի որոշ միավորներ այստեղ-այնտեղ երբեմն պատահում են նաև անանջատ՝ միասին գրությամբ: Բայց միանման մոտեցումը բազում հոգսերից է ազատում: Ուստի գրենք գծիկով:

2. Անանջատ են գրվում այն կրկնավորները, որոնց առաջին բաղադրիչը –**ե** մասնիկով է (նշանակում է «-ից»), ինչպես՝ **սարեսար** «սարից սար», **դռնեդուռ**, **տնետուն**, **դարեդար**:

Կազմությունների երկար կամ կարճ լինելը կապ չունի. բոլորը ենթարկվում են նույն կանոնին: Գրվում են միասին, առանց գծիկի՝ **սերնդեսերունդ**, **ամսեամիս**, **գյուղեգյուղ**: Անգամ **երկրեերկիր**, երբ երկու **ե** է, և գծիկ դնելու գայթակղություն է առաջանում: Այդպես էլ **աշխարհեաշխարհ**:

3. **Տարեցտարի** «տարի առ տարի, մի տարուց մյուսը», «ամեն տարի հաջորդաբար» բառի բաղադրիչներն անանջատ են գրվում, ինչպես որ **օրեցօր** բառինը: Թեև բացատրական բառարաններում արձանագրվել է գրության զուգաձևություն՝ **տարեցտարի** և *տարեց-տարի*, բայց գծիկով գրությունն այսօր սխալ է համարվում:

4. **Ի** նախդիր ունեցող կրկնավորները հիմա միասին են գրվում, ինչպես՝ **հնիհն**, **փոխնիփոխ**, **կույրիկույր** «կուրորեն», **բացեիբաց**: Այդպես էլ **մերթ ընդ մերթ** և **մերթընդմերթ** զուգաձևությունների մրցակցությունում հաղթել է երկրորդը՝ անանջատ գրություն ունեցողը:

5. Սովորաբար անջատ են գրվում **առ** նախդիր ունեցող կրկնավորները՝ **բանակ առ բանակ**, **թուփ առ թուփ**, **ժամանակ առ ժամանակ**, **տող առ տող**, **բառ առ բառ**, **ժամ առ ժամ** և այլն: Բայց այստեղ էլ կան կազմություններ, որոնց բաղադրիչները մարդիկ երբեմն միասին են գրում, ինչպես՝ **դեմ առ դեմ** / *դեմառդեմ*: Աչքին խորթ է (կարդալն ու գրելն էլ դժվար է) հատկապես երկար բառերի միասին գրությունը, օրինակ՝ **վայրկյանառվայրկյան**: Միավորող մեկ շեշտով արտասանելն էլ գրեթե անհնար է:

Առ նախդրով բոլոր կրկնավորներն առհասարակ կարելի է անջատ գրել և հարցը փակել:

6. Մի ժամանակ գծիկով են գրվել, բայց հիմա առանց գծիկի՝ անջատ են գրվում կրկնավոր այն կազմությունները, որոնց բաղադրիչներից մեկը հոլովված է, իմաստն էլ հստակ զիտակցվում է: Այսպես՝

✓ **թև թևի**, **ուս ուսի**, **մեջք մեջքի**, **գլուխ գլխի**, **կողք կողքի**,
✓ **գյուղից գյուղ**, **երկրից երկիր**, **քաղաքից քաղաք**, **տնից տուն**, **աշխարհից աշխարհ**:

7. Վերջնականորեն միացել և միասին են գրվում **մեկմեկու**, **մեկմեկի** բառերի բաղադրիչները: Բայց և չպիտի զարմանանք, երբ դասական գրականության մեջ հանդիպենք առանձին կամ գծիկով գրության:

8. **Ն.Ս.Օ.Տ.Տ.** համառոտագրությունը բացելիս (Նորին Սուրբ Օծություն Տեր Տեր) ինչպե՞ս գրել՝ **Տեր Տե՞ր**, թե՞ **Տեր-Տեր**: Առանձին գրելու ավանդույթ է ձևավորվել, հատկապես որ այդ բառերն առանձին էլ շեշտվում են :

Գուցե ավելորդ է, բայց ասենք, որ ժողովրդական խոսքում գործածվող **տերտեր** «քահանա» բառի կրկնվող բաղադրիչները ձուլվել ու միասին են գրվում:

9. Մանկական խաղ կա, որ կոչվում է **տունտունիկ**: **Տուն-տուն**-ը գծիկով գրվող սովորական կրկնավոր է, բայց նրանից **–իկ** ածանցով նոր բառ է կազմվել, ուստի գծիկը վերացել է, և բաղադրիչները միացել են:

11. *Ի* ՆԱԽԴԻՐ ՈՒՆԵՑՈՂ ԲԱՌԵՐԻՆ ԵՎ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(9 դեպք)

Այսօրվա հայերենում կան **ի** նախդիր ունեցող բազմաթիվ կապակցություններ, որոնք գրաբարյան (կամ գրաբարատիպ) քարացած կառույցներ են: Դրանք հաճախադեպ են թե՛ գրավոր և թե՛ բանավոր խոսքում: Գրասենյակային բառապաշարի անքակտելի մաս են **ի պաշտոնե**, **ի տնօրինություն**, **ի լրումն**, **ի կատարումն**, **ի փոփոխումն**, **ի գիտություն**, **ի պատասխան** և այլն, որոնք սովորական են նաև մամուլի լեզվում: Ամենօրյա գործածություն ունեն, հանրածանոթ են **ի հիշատակ**, **ի ծնե, ի դեպ, ի շահ**, **ի տարբերություն** և այլն:

Ի նախդիր ունեցող որոշ կապակցություններ գործածելիս մարդիկ տարատեսակ դժվարություններ են ունենում: Դրանց մի մասն առնչվում է մասնավորապես կապակցությունների գրությանը, նաև իմաստ(ներ)ին և գործածությանը: Ներկայացնենք մի փունջ:

1. Ի ՏԵՍ

Ի նախդիր ունեցող կապակցությունների բաղադրիչները հիմնականում գրվում են առանձին, ինչպես՝ **ի դեպ**, **ի նշան**, **ի նպաստ**, **ի սկզբանե, ի պատիվ** և այլն: Այդպես է նաև եռաբաղադրիչ բայերի դեպքում՝ **ի վիճակի լինել**, **ի զորու լինել**, **ի չիք դառնալ**, **ի սպաս դնել** և այլն:

2. ԻԶՈՒՐ

Այժմ անանջատ են գրվում **իզուր**, **իհարկե**, **իսպառ** բառերը: Դրանք սկզբնապես անջատ են գրվել, հիմա այդպես են գրվում միայն ավանդական ուղղագրությամբ տեքստերում (ի զուր, ի հարկէ և ի սպառ):

3. Ի ՄԻՋԻ ԱՅԼՈՑ / ԻՄԻՋԻԱՅԼՈՑ

Ի միջի այլոց գրաբարյան կապակցությունը նշանակում էր «ի թիվս այլոց, ուրիշների թվում»: Կապակցության բաղադրիչները ժամանակի ընթացքում կցվեցին, և ձևավորվեց բառ՝ **իմիջիայլոց**, որը բառային յուրահատուկ իմաստ ձեռք բերեց: Բառային միավորը ակադեմիական բացատրական բառարանում արձանագրված է երեք իմաստով: Այսպես.

1. «Առանձին ուշադրություն չդարձնելով, հատուկ նշանակություն չտալով» (այսինքն՝ «հենց այնպես»): Օրինակ՝ Նկատել եմ, որ բոլոր գործերդ իմիջիայլոց ես անում:

2. «Ի դեպ»: Օրինակ՝ Արամը, իմիջիայլոց, վերջերս չարացել է:

3. «Ի թիվս այլոց, ուրիշների թվում» նախնական իմաստն արդեն հնացած է: Այս իմաստով գործածելիս բաղադրիչներն առանձին պետք է գրվեն, ինչպես եղել է անցյալում (նաև այսօր, երբ մեկն ավանդական ուղղագրությամբ է գրում):

Բայց ահա էդ. Աղայանի հանրածանոթ բացատրական բառարանում բառը գրանցվել է **ի միջի այլոց** ձևով: Ի՞նչ անի այս երկու բառարաններից օգտվող մարդը: Պիտի արձանագրի, որ եղել է զուգաձևություն, բայց այժմ անանջատ գրությունը հաղթել է: Բաղադրիչների առանձին շեշտադրումը գրեթե անհնար է:

4. Ի ԾՆԷ

Բացառական հոլովի գրաբարյան քարացած ձևն է (**ի ծնէ**. ուղղագրության հայաստանյան փոփոխությունից հետո բառավերջում **ե** է գրվում՝ **ի ծնե**), նշանակում է «ծնունդից սկսած, ծնված օրից»: Առանձին շեշտադրումը թույլ չի տալիս երկու բաղադրիչները միավորել, այդ պատճառով էլ անջատ է գրվում, թեև ոմանք սխալմամբ միասին են գրում:

5. Ի ԲՆԵ

Ի բնէ-ն (արմատն է **բուն**) նման է **ի ծնէ**-ին. նշանակում է «ծնված օրից, բնույթով, այսպես ասած՝ ի բնութենէ՝ բնությամբ»: Արտասանվում է *ի բընէ՛*: Երբեմն գրում են միասին: Երբ միասին է գրվում (իբնե), ընթերցողը չի կարող ճիշտ շեշտադրությամբ կարդալ, քանի որ խաթարվում է բառի տեսքը: Ասենք, որ անանջատ գրությամբ գրանցվել է ակադեմիական բացատրական բառարանում («բնականից, ի ծնե» իմաստով), բայց այդ գրությունը ժամանակի ընթացքում մերժվել է: Ուղղագրական հետագա բառարաններում միայն առանձին գրությամբ է՝ **ի բնե**:

6. Ի ԶԵՆ

Զինվորներին ուղղված հրաման է, զենք վերցնելու, կռվի՝ մարտի բռնվելու կոչ: Բառացի նշանակում է «դեպի զենք, զենքի»: Առհասարակ առանձին է գրվում, բայց թյուրի-մացության պատճառ կարող է դառնալ այն, որ ակադե-միական բացատրական բառարանում միասին գրությամբ է տրված: Հետագա բառարաններում համատարած առանձին գրությամբ է, զուգաձևություն չկա, ուստի պիտի գրել առանձին՝ **ի զեն**:

7. ՆԿԱՏԻ ԱՌՆԵԼ / Ի ՆԿԱՏԻ ԱՌՆԵԼ

Համացանցում և այլուր մարդիկ հաճախ են կրքոտ վիճաբանում այս կապակցությունների մասին: Ոմանք անգամ «անգրագետ» են պիտակում **ի նկատի առնել** կապակցության կողմնակիցներին:

Սկզբնապես եղել են նախդրավոր կառույցները՝ **ի նկատի առնել**, **ի նկատի ունենալ**: Սրանք նշանակում են «հաշվի առնել, ուշադրություն դարձնել» և ... այո՛, «նկատի ունենալ»: Այդպես է գրված ակադեմիական բացատրական բառարանում: Ի՞նչ պիտի եզրակացնել: **Ի**-ով հին ձևերը լիովին դուրս չեն մղվել արդի լեզվից. կան մարդիկ, որ

գործածում են պատվական հնություն ունեցող տարբե-րակները: Եվ նրանց անգրագիտության մեջ մեղադրելը, մեղմ ասած, սխալ է:

Պարզ է, որ հաղթելու են **նկատի ունենալ** և **նկատի առնել** միավորները, ուստի պետք չէ անտեղի բանավեճեր սկսել: Լեզուն այս հարցը բնականորեն կկարգավորի (կամ արդեն կարգավորել է):

8. ՇՆՈՐՀԻՎ

Շնորհիվ-ն այս շարքում չպիտի լիներ, սակայն դրվել է, քանի որ շատերն ասում են «ի շնորհիվ»: Սա սխալ է: **Շնորհիվ**-ը ո՛չ գրաբարում, ո՛չ էլ հետո երբևէ չի գործածվել **ի** նախդիրով, քանի որ դա հակասում է լեզվի օրինաչափություններին. գրաբարում գործիական հոլովաձևի հետ [շնորհ-իւ] **ի** նախդիր երբեք չի գործածվել: Ուստի միայն և միայն ՇՆՈՐՀԻՎ:

9. ՍՐՏԱՆՑ

Սրտանց-ը ևս այս շարքում չպիտի լիներ, քանի որ **ի**-ով չպիտի գործածվի. դա սխալ է: Մարդիկ «սրտի խորքից, ամբողջ սրտով՝ հոգով, անկեղծությամբ» իմաստն արտա-հայտող այս բառը շփոթում են **ի սրտե** հոմանիշ միավորի հետ և անտեղի **ի** ավելացնում **սրտանց**-ին:

Ի սրտե-ն գրաբարյան բացառական հոլովաձևն է, որ սոսկ «սրտից» չի նշանակում, այլ «սրտանց, սրտով, անկեղ-ծորեն»: Եզրակացություն՝ **ի սրտե**, բայց **սրտանց**:

12. ԱՎԱՆԴՈՒՅԹԻ ՈՒԺԸ. *Ի – Յ – Հ* ԱՆՑՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(9 դեպք)

Հին հայերենում՝ գրաբարում, **ի** նախդիրը ձայնավորով սկսվող բառերից առաջ դառնում է **յ**, որը **հ** է կարդացվում: Տերունական աղոթքից գիտենք. «Եղիցին կամք քո որպէս յերկինս [հերկինըս = երկնքում] և յերկրի [հերկրի = երկրի վրա]»:

Հայաստանում 1922 թ. ուղղագրության փոփոխությունից հետո բառասկզբի յ-ն գրվում է **հ**: Ավանդաբար գրվել է **յիշատակ**, այժմ նոր ուղղագրությամբ՝ **հիշատակ** և այլն:

Ժամանակակից հայերենում գործում է գրաբարից փոխանցված ավանդույթը, երբ **ի**-ն, որակապես փոխվելով, ձուլվում է բառին: Կան մի շարք քարացած ձևեր, որոնք անխաթար պահպանվել են, բառի արժեք ձեռք բերել և արձանագրվել բառարաններում:

Մարդիկ ձայնավորով սկսվող բառերը **ի** նախդիրի հետ գործածելիս տարատեսակ դժվարություններ են ունենում, նաև տարբեր սխալներ անում:

Ներկայացնենք նախդրավոր միավորների մի փունջ՝ անհրաժեշտ պարզաբանումներով:

1. ՀՕԳՈՒՏ (յօգուտ)

Նշանակում է «մեկի կամ մի բանի օգտին»: Ոմանք սխալմամբ ասում են «ի օգուտ», ոմանք՝ «օգուտ մեկի»: Չշփոթենք, որ **օգուտ** բառը շարունակում է իր ինքնուրույն գործածությունը (օրինակ՝ **օգուտ չունի**)

Ոմանք **հօգուտ**-ի և նախդրավոր մյուս միավորների պարագայում փորձում են հիմնավորել, թե իրենք պարտավոր չեն գրաբարյան կանոնը պահպանել, որ **ի – յ** (հ) անցումը գրաբարյան իրողություն է և չպիտի կիրառվի ժամանակակից հայերենում:

2. ՀՕԴՍ ՑՆԴԵԼ (յօդս ցնդել)

Առաջին բաղադրիչը բառացի նշանակում է «դեպի օդ», ամբողջ կապակցությունը՝ «վերանալ, անհետանալ, չքանալ, ոչնչանալ»: Այս **հօդս**-ը բայ է կազմում նաև **ցնդեցնել**-ի հետ՝ **հօդս ցնդեցնել**՝ «ոչնչացնել, վերացնել» իմաստով:
Երբեմն **հ**-ն չըմբռնելով և ավելորդ համարելով՝ սխալմամբ գործածում են «օդս ցնդել» ձևով:

3. ՀՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ (յուրախութիւն)

Նշանակում է «մեկի ուրախության համար»: **Ի** նախդրին առնչվող օրինաչափությունն իմացողների ականջն է սղոցում «ի ուրախություն» սխալ կազմությունը:

Իսկ երբ **ի** և **ուրախություն** միավորների միջև դնում ենք **մեծ** բառը, ճիշտ է և լիովին ընդունելի՝ **ի մեծ ուրախություն**:

4. ՀԱՄՈԹ (յամօթ)

Նշանակում է «իբրև ամոթանք»: Գրագետ մարդկանց խոսքում սովորական է, հանդիպում է մամուլում և հրապարակախոսության մեջ: Այսպես. «Եվ **համոթ** մեզ՝ մենք այս ամենը հանդուրժում ենք»:

5. ՀԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ (յաջակցութիւն)

Նշանակում է «որպես աջակցություն»: Հաճախ են ասում և գրում, իհարկե սխալվելով, «ի աջակցություն»: Բոլորովին վերջերս լրատվականները սկսել են գործածել **հաջակցություն** ճիշտ ձևը:

6. ՀՈՏՆԿԱՅՍ (յոտնկայս)

Հոտնկայս նշանակում է «ոտքի կանգնած»: Հաճախ ասում են առանց **հ**-ի՝ «ոտնկայս», նաև «ոտնկաց»: Անխոցելի տարբերակը **հոտնկայս**-ն է:

7. ՀԸՆԹԱՑՍ (յընթացս)

Ի նախդիրը միացել է ***ընթացք*** բառին: Գրաբարյան կանոնով **ք**-ն, որը ծագել է հոգնակիի մասնիկից, հայցակա-

նում դարձել է **ս**: Նշանակում է «ընթացքում», նաև «զուգահեռաբար»: Վերջին տարիներին բավական տարածվել է, բայց երբեմն պատահում է նաև «ընթացս» սխալ ձևը (չիմաստավորելով բառասկզբի **հ**-ն՝ այն զեղչում են):

8. ՀԱՉՍ (յաչս)

Նման է **հընթացս**-ին. այստեղ էլ **աչք**-ի **ք**-ն է դարձել **ս**: Նշանակում է «աչքին, աչքում»: Գ. Մահարին «Այրվող այգեստաններում» գրել է. «Ո՞վ պիտի ժառանգեր նրա հոգևոր ու մտավոր հարուստ, երևակայական կալվածները, պանծացներ իր անունը հաչս նորոգ [«նոր»], գալիք սերունդների, ո՞վ...»: Այս միավորը առավելաբար պահպանվել է գրական արևմտահայերենում:

9. ~~Ի ԱՐԴՅՈՒՆՔ~~

Մամուլում, այլուր հանդիպում է կանոնին հակասող «ի արդյունք» սխալ ձևը, բայց կանոնական **հարդյունս**-ն էլ գրեթե չի հանդիպում, շատերի ականջին ու աչքին խորթ է: Ի՞նչ անել: Կարելի է ասել **որպես արդյունք**, **արդյունքը սա է** և այլն:

Ընդհանուր եզրակացություն. ձայնավորով սկսվող բառերից առաջ **ի** նախդիր գործածելը բացառել:

13. ՑԿՅԱՆՍ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ
(ց նախամասնիկով բառերի մասին)

(10 բառ)

Գրաբարում **ց** նախդիր ունենք, որ միշտ բառին միացած է գրվում, հիմնականում նշանակում է «մինչև»՝ «մինչև մի տեղ, մինչև մի ժամանակ, մինչև մի աստիճան»:

Հազարամյակների պատմություն ունեցող հայերեն բառեր կան, որոնցում **ց** մասնիկը կարող ենք մատնանշել: Անզեն աչքով կռահելն անգամ դժվար է, որ, օրինակ, ՑԵՐԵԿ բառում «մինչև» նշանակող **ց** կա: Բառի կազմությունն

այսպիսին է՝ ց+երեկոյ, այսինքն՝ «մինչև երեկո». ցերեկը մինչև երեկո ընկած ժամանակն է:

Կամ էլ դիտարկենք ՑԱՅԳ բառը, որ նշանակում է «գիշեր». ցայգը մինչև այգ՝ լուսաբաց ընկած ժամանակն է: Մի ուշագրավ տող հիշենք սփյուռքահայ բանաստեղծ Վահե-Վահյանից. «Ու **ցայգիս այգ** աւետող եղիր սիրո՜յ դուն համբոյր»:

Ց նախամասնիկով բառերն առհասարակ շատ չեն: Դրանցից մի քանիսին առանձին անդրադառնանք՝ ներկայացնելով 10 բառ:

1. ՑՏԵՍՈՒԹՅՈՒՆ (ց+տեսություն). հրաժեշտի ամենատարածված բառն է:

Շատերը **ցտեսություն** ասելու փոխարեն ասում են «ստեսցյուն», որ ամբողջովին աղավաղում է բառը, կորսվում են **ց**-ն և նրա հաղորդած «մինչև» իմաստը: Մի փոքր ուշադրություն, և **ց**-ն հստակ կարտասանվի:

Լսել եմ, որ որոշ պաշտոնավորներ նեղվում են, երբ իրենց պարզ **ցտեսություն** են ասում: Դա ընկալում են որպես անհարգալից մի ձև, իբր առանց հարգական **Ձեզ**-ի հրաժեշտ տալը տնավարություն է (ակնկալում են «ցտեսություն Ձեզ» լսել): Բոլորովին այդպես չէ: Տարիքով փոքրը մեծին, ենթական իր ղեկավարին հանգիստ պետք է ասի ուղղակի **ցտեսություն** (առանց Ձեզ-ի), քանի որ դա է գրական կանոնական ընդունելի ձևը: Ձեզ / ձեզ-ը լրիվ ավելորդ է, ուստի **ցտեսություն**, այսինքն՝ «մինչ նոր տեսություն»: Էլ ի՞նչ ձեզ:

Սակայն «ցտեսություն Ձեզ (ձեզ)» սխալ արտահայտությունը բավական տարածվել է: Հավանաբար այդպես են ասում ողջույնի **բարև Ձեզ** / **ձեզ** արտահայտության նմանությամբ: Բարևելիս Ձեզ / ձեզ-ը ճիշտ է, քանի որ ողջունողը բարին է մաղթում հանդիպած մարդուն կամ մարդկանց:

Ի դեպ, Հայաստանի որոշ տարածքներում և երբեմն նաև սփյուռքում գործածում են **ցտեսություն** բառի կրճատ ձևը՝ **ցը**

(այսինքն՝ «մինչև»)։ Խոսակցական է, իրար ասում են միայն մտերիմները, հասակակիցները։ Տնավարություն կլինի, եթե պատանին մեծահասակին **ցը** ասի։

2. ՑՄԱՀ նշանակում է «մինչև մահ, մինչև մեռնելը»։ Գործածական է տարբեր կապակցությունների մեջ, ինչպես՝ **ցմահ բանտարկություն**, **ցմահ նախագահ**։ Բայց այս վերջին կապակցության մեջ մահվան գաղափարի ընդգծումը խոսողների մեջ երբեմն մտային տհաճ զուգորդումներ է առաջացնում։

3. Թերևս մահվան գաղափարը չշեշտադրելու նպատակով արևմտահայերենում ստեղծվել է **ցմահ**-ի հոմանիշը՝ ՑԿՅԱՆՍ։ **Ցկյանս նախագահ**. այստեղ արդեն կյանքի գաղափարն է առաջ մղված և ոչ թե մահվան, այսինքն՝ մեկը նախագահ է ամբողջ կյանքի ընթացքում, մինչև իր կյանքի վերջը։ **Ցմահ** և **ցկյանս** կազմություններում **մահ** և **կյանք** բառերի հականշությունը չեզոքացել է։

4. ՑԿՅԱՆՍ բառի դիմաց տասնամյակներ առաջ լույս տեսած բառարաններում նշվում է «հնացած», «գրքային»։ Սակայն վերջերս բառի «կյանքը փոխվել է»։ Հիմա կրթության ոլորտում սովորական են **ցկյանս կրթություն**, **ցկյանս ուսումնառություն** կապակցությունները՝ «կրթություն՝ ուսումնառություն ամբողջ կյանքի ընթացքում» նշանակությամբ։

5. ՑՊԱՀԱՆՋ բառը տասնամյակներ առաջ փոստատներում գործածվում էր փոստային այն առաքումների վերաբերմամբ, որոնք տրվում էին հասցետիրոջ պահանջով (ռուսերեն ասում էին до востребования. մինչև հասցեատերը չպահանջեր, առաքումը չէր հանձնվում նրան)։

Հիմա բառը գործածական է հատկապես բանկային գործում. կան **ցպահանջ անժամկետ ավանդներ** և այլն։

6. ՑՄՐՈՒՐ «մինչև մրուրը (մրուրը որևէ հեղուկի՝ գինու, սուրճի տակի նստվածքն է), մինչև տակը, մինչև վերջ» բառի համար էլ է ասվում, որ հնացած ու գրքային է: Այո՛, հնացած ու գրքային է, բայց տակավին հանդիպում է գեղարվեստական խոսքում. ցմրուր խմում են դառնության բաժակը, վայելքի գինին...

7. Մի շարքում ենք դնում ՑԱՐԴ, ՑԱՅԺՄ և ՑԱՅՍՕՐ հոմանիշ բառերը, որոնք նշանակում են «մինչև հիմա՝ այժմ, մինչև այսօր»: Խոսելու կամ գրելու ընթացքում հաճախ կարճ ձևեր ենք փնտրում: Ահավասիկ. **ցարդ = մինչև հիմա**: Չթողնենք, որ այս կարճ ու պատվական հնություն ունեցող բառերը «հնացած» պիտակավորվեն:

8. Հրաժեշտ տամ ցավոք արդեն հնացած մի ձևով՝ **ցնոր գրություն** (մինչև նոր գրություն): Կամ էլ այսպես՝ **ցնոր հանդիպում** (մինչև նոր հանդիպում):

Ի՞նչ իմանանք, գուցե մոռացված այս կապակցությունները մի օր հրաշքով վերականգնվեն, չէ՞ որ **ց** նախամասնիկի «մինչ» իմաստը հայ հանրությունը գիտակցում է:

14. ԳՐԱԲԱՐՅԱՆ ՔԱՐԱՑԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՃԻՇՏ ԳՈՐԾԱԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(5 կառույց)

Ժամանակակից հայերենը գրաբարի՝ հին հայերենի ժառանգորդն է: Հայերենի զարգացման հին շրջանից մեզ են փոխանցվել ոչ միայն բազնահազար բառեր, այլև բառակապակցություններ, որոնք գրաբարյան ձևավորում ունեն, քարացած կառույցներ են:

Ներկայացնենք 5 քարացած կառույց, որոնք գործածելիս մարդիկ երբեմն սխալվում են:

1. ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՍՐԲՈՑ

Գրաբարյան **սրբություն սրբոց** / **սրբութիւն սրբոց** կապակցությունը ժամանակակից հայերենում նշանակում է «սրբությունների սրբություն»: Ասում են նվիրական, գերագույն սրբություն համարվող իրողությանը, երևույթին: Օրինակներ՝ «**Սրբություն սրբոց** է եղել այդ մատյանը Մշո գավառի ջերմեռանդ հայության համար» (Ս. Կապուտիկյան), «Որքան էլ այդ մժղուկները պղծեին թատրոնը, միևնույն է, թատրոնը հորս համար **սրբություն սրբոց** էր» (Ա. Շեկոյան):

Շատերը սխալմամբ ասում են (ու գրում) *սրբության սրբոց*, որ քերականորեն ճիշտ չէ: Ցավոք, այդ ձևով գրանցվել է հայտնի բացատրական բառարաններից մեկում: Դա ամրապնդում է սխալի դիրքերը:

Սխալ է նաև այս կապակցությունը գծիկով գրելը:

Վերջնականապես ճշտենք՝ միայն **սրբություն սրբոց**:

2. ԸՍՏ ԱՐԺԱՆՎՈՒՅՆ

Գրաբարից նոր հայերենին է անցել **ըստ արժանվույն** (< ըստ արժանւոյն) քարացած կառույցը, որ նշանակում է «ըստ արժանիքի, արժանիքի համեմատ, արժանիքին համապա-տասխան»: Օրինակ՝ «Ես նաև պիտի հետևեի արվեստի բոլոր ճյուղերում կատարվող իրադարձություններին և արձագան-քեի **ըստ արժանվույն**» (Ա. Այվազյան):

Սխալ է *ըստ արժանավույն* ասելն ու գրելը: Ոմանք նույ-նիսկ առանց **ըստ**-ի են ասում՝ *արժանավույն:* Կրկին մերժելի:

Խորհուրդ. չսխալվելու համար նախդրավոր կառույցի փոխարեն կարելի է պարզապես ասել **արժանապես** կամ **արժանիորեն, արժանի կերպով** կամ էլ արդեն հիշատակված-ները՝ **ըստ արժանիքի**, **արժանիքի համեմատ, արժանիքին համապատասխան**:

3. ՄԵԾԱՎ ՄԱՍԱՄԲ

Մեծավ մասամբ-ը գրաբարյան քարացած կապակցություն է (**մեծաւ մասամբ**): Նշանակում է «մեծ մասով, գլխավորապես, հիմնականում», «ավելի հաճախ, առավելապես»: Գրաբարյան այսպիսի ձևավորմամբ փոխանցվել է աշխարհաբարին, գործածվում է մեր օրերում նույնպես: Օրինակներ կարող ենք բերել դասական ու ժամանակակից գեղարվեստական գրականությունից («Դուք նկատե՞լ եք, որ չար լեզուները **մեծավ մասամբ** ճշմարտախոս են լինում» - Ռ. Պատկանյան) և մամուլից («Այսօրվա հասարակությունը **մեծավ մասամբ** շարունակում է ապրել հին մտայնությամբ» - «Ազգ»): Բայց հնացած է:

Առանձին գործածվում է (և դա անշուշտ ճիշտ է) **մասամբ** բառը, որը նշանակում է «մի մասով, մասնակիորեն, ոչ ամբողջովին»:

Բայց ահա ցանկալի չէ գործածել *մեծամասամբ* կազմությունը, որը գոյացել է **մեծավ մասամբ** կապակցության բաղադրիչների անբնական ձուլումից: Ավելի լավ է ասել **մեծ մասամբ** կամ էլ պարզապես **մասամբ**, եթե, իհարկե, չեք ուզում ասել **մեծավ մասամբ**:

4. Ի ԶԱՐՄԱՆՍ

Գրաբարի օրինաչափությամբ **ի զարմանս** կապակցության մեջ **զարմանք** բառի վերջի **ք**-ն դառնում է **ս**: **Ի զարմանս մեկի** նշանակում է «մեկին զարմացնելով, մեկին զարմանք պատճառելով»: Օրինակներ՝ «Միակ նշանավոր դեպքը բժշկի ամուսնությունն էր ու կրկին ծխամորճ ծխելը, որը թողել էր **ի զարմանս** ամբողջ գյուղի» (Զ. Խալափյան), «Նա այդպես էլ չամուսնացավ **ի զարմանս** բոլոր միջնորդների» (Օ. Օքրոյան):

Ի նախդրի սիրահարները, չիմանալով քարացած կառույցի մասին, ասում ու գրում են *ի զարմանք*: Սա հանդիպում է բանավոր խոսքում, նաև գրականության մեջ,

հատկապես թարգմանական գործերում: Օրինակներ՝ «Չնայած սուսկալի քաղցին, *ի զարմանք* բուժակի, նա ուտում էր հանգիստ, առանց շտապելու» (Վ. Հարությունյան), «Բայց *ի զարմանք* Կարոյի, մարդը գնաց ուղիղ դեպի մոլախոտերը» (Ա. Գյումրեցի): Այդպես գործածողները դա անում են հայտնի կապակցությունների հետևողությամբ, ինչպես՝ **ի գիտություն**, **ի տարբերություն**, **ի շահ**: Հաշվի չեն առնում, որ բառավերջում **ք** ունենք, որը փոխվում է **ս**-ի (հմմտ. **օրենք – օրենսդիր, մեղք - մեղսալի**):

5. ԸՍՏ ԻՍ

Գրաբարյան **ըստ իս** նշանակում է «իմ կարծիքով» (**իս**-ը ես անձնական դերանվան հայցական հոլովաձևն է, **զ** նախդիրով՝ **զիս**): Ոմանք «թարգմանաբար» ասում են *ըստ ինձ*, որ անսովոր է հնչում լավ հայերենին վարժ մարդկանց ականջին:

Ընտրություն պիտի կատարել՝ կա՛մ **ըստ իս**, կա՛մ **իմ կարծիքով**: Երրորդ տարբերակն էլ կա՝ **ըստ իմ կարծիքի**:

Ըստ իս (կամ իմ կարծիքով)՝ շուտով հրաժեշտ կտանք *ըստ ինձ*-ին:

15. ՏՈՆԱԿԱՆ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԳՐՈՒԹՅԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(7 դեպք)

Տարվա 365 օրերը միանման չեն. Աշխատողների համար դրանց մեծ մասն աշխատանքային է, փոքր մասը՝ ոչ աշխատանքային: Երկրի քաղաքացիների համար դրանց մեծ մասը սովորական օրեր են, մի մասը՝ տոնական կամ հիշատակի:

Օրացույցներում տոնական և հիշատակի օրերն առանձնանում են գույներով, տարատեսակ նշումներով և

հաստատուն անուններով: Եվ քանի որ դրանք հատուկ անուններ են, ունեն գրության առանձնահատկություն. Հատկապես բաղադրյալ անունները մեծատառ կամ փոքրատառ գրելու որոշ դժվարություններ կարող են լինել: Անշուշտ մշակվել են ուղղագրական կանոններ, ձևավորվել է գրության որոշակի ավանդույթ, և պետք չէ դրանք անտեսել կամ էլ դեմ գնալ դրանց:

1. **Անկախության տոն**

Պետական տոների և հիշատակի օրերի անունների առաջին բաղադրիչը գրվում է մեծատառ, ինչպես՝ **Սահմանադրության օր**, **Գիտելիքի և դպրության տոն**, **Հաղթանակի և խաղաղության տոն**, **Մայրության և գեղեցկության տոն**, **Ցեղասպանության զոհերի հիշատակի օր**:

Ոմանք օտար լեզուների ազդեցությամբ կամ չիմացության հետևանքով մեծատառ են գրում անվան բոլոր բաղադրիչները, որը դեմ է ավանդույթին:

2. **Սրբոց թարգմանչաց տոն**

Եկեղեցական տոների և հիշատակի օրերի դեպքում ևս գործում է նույն կանոնը. Առաջին բաղադրիչը գրվում է մեծատառ: Եթե գրվում է առանց **Սրբոց** բաղադրիչի, ապա **Թարգմանչաց տոն**: Ի դեպ, այդպես է Հայաստանի Հանրապետության տոների մասին օրենքում:

Միաժամանակ պիտի արձանագրենք, որ եկեղեցական շրջանակները հակված են եկեղեցուն առնչվող հասարակ անուններն անգամ մեծատառ գրելու (ասենք այսպես՝ *Սրբոց Թարգմանչաց Տոն* կամ *Սրբոց Թարգմանչաց տոն*):

3. **Սուրբ Ծնունդ**

Բացառիկ լինելու պատճառով **Սուրբ Ծնունդ** անվան երկու բաղադրիչն էլ գրվում է մեծատառ. Խոսքը Հիսուս Քրիստոսի հրաշափառ ծննդյան մասին է:

Այդպես է գրվում նաև թեքված (և քարացած) ձևը՝ **Սուրբ Ծննդյան** և **Հայտնության** (ավելի է նաև **Աստվածհայտնության / Աստվածահայտնության**) **տոն**։

4. **Սուրբ Զատիկ**

Հարության տոնը կոչվում է նաև **Սուրբ Զատիկ**, որտեղ երկրորդ բաղադրիչն էլ է մեծատառ գրվում։ Այդպես է, որովհետև մենաբառ անվանման դեպքում ևս մեծատառ է՝ **Զատիկ**։

5. **Մայիսի 9**

Մեծատառ են գրվում պետական հանրահայտ տոների ամիս-ամսաթվի ամսանուն բաղադրիչները, քանի որ դրանք տոն են նշանակում և բառային ամբողջական անվան փոխարինիչն են։ Այսպես՝ **Մայիսի 1** (**Աշխատանքի օր**), **Մայիսի 28** (**Հանրապետության տոն**), **Ապրիլի 24** (**Ցեղասպանության զոհերի հիշատակի օր**), **Մարտի 8** (**Կանանց տոն**) և այլն։

6. **Ուսուցչի օր**

Առաջին բաղադրիչը մեծատառով է գրվում նաև մասնագիտական օրերի, հիշարժան այլ օրերի ու տոների անվանումներում, ինչպես՝ **Բանակի օր**, **Երկրապահի օր**, **Մայրենի լեզվի օր**, **Ընտանիքի օր**, **Երեխաների պաշտպանության օր**, **Ուսանողների և երիտասարդների օր** և այլն։

Ուշադրություն. **Հայաստանի Հանրապետության քաղաքացու օր**, բայց երբ կրճատ ենք գործածում, ապա լինում է այսպես՝ **Քաղաքացու օր**։

7. **Ծիծաղի օր**

Տարբեր երկրներում, հասարակության տարբեր խմբերում զանազան (երբեմն նույնիսկ տարօրինակ) օրեր կան հաստատված։ Ոչ պաշտոնական այդ օրերի անունները ևս ենթարկվում են ուղղագրական նույն կանոնին։ Օրինակ՝ ապրիլի 1-ն ընդունված է որպես **Ծիծաղի օր** (այդ օրը մարդիկ կատակում են իրար հետ, զվարճալի իրավիճակներ ստեղ-

ծում)։ Ի դեպ, ժողովրդի մեջ տարածված է այդ օրը կոչել այլ կերպ՝ «Խաբելու օր»։ Չմոռանանք՝ միայն առաջին բաղադրիչներն են գրվում մեծատառ։

Վերջին տարիներին Հայաստանում կայունացավ (և սիրվեց) **Գիրք նվիրելու օրը** փետրվարի 19-ին՝ ամենայն հայոց բանաստեղծ Հովհ. Թումանյանի ծննդյան օրը։

16. ՀԱՃԱԽ ԱՂԱՎԱՂՎՈՂ ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԵՐ

(8 բառ)

Հայերեն մի շարք բառեր հաճախ աղավաղված են գործածվում գրավոր և բանավոր խոսքում։ Այդ բառերին մասնագետները (մենք նույնպես) քանիցս անդրադարձել են։

Մեծատառերով ներկայացնում ենք բառերի ճիշտ գրությունը, որպեսզի դրա՛նք ամրակայվեն ընթերցողի հիշողության մեջ և ոչ թե սխալ տարբերակները։

1. ՕՐԱԿԱՆ

Օր արմատին միացել է –**ական** ածանցը՝ **օրական**։ Բայց հաճախ ենք լսում, երբեմն նաև կարդում «օրեկան» սխալ տարբերակը։ Որտեղի՞ց է այս **ե**-ն։

Տարեկան բառի նմանությամբ է գոյացել։ **Տարի** բառի **ի**-ն, -**ական** ածանցի **ա**-ին միանալով, օրինաչափորեն դառնում է **ե**։ **Օրական**-ը ոչ մի կերպ **ե** չի կարող ունենալ։

2. ԲԱՐՅԱՑԱԿԱՄ

Բառը կազմվել է **ա** հոդակապով՝ բարյաց+ա+կամ, ուստի **ա**-ն չպիտի զեղչել ու ասել «բարյացկամ» (կամ էլ «անբարյացկամ»)։

3. ՄՆԱՆԿԱՆԱԼ

Այս բառի հիմնական կազմիչներն են **սին** և **անկ**։ Բայց կազմելիս **սին**-ի **ի**-ն հնչյունափոխվում է չգրվող **ը**-ի՝ **սն** (ինչպես որ ունենք **սնահավատ**, **սնամեջ**), ապա՝ **սնանկ** և

վերջապես՝ **սնանկանալ**: **Անկ**-ի **ա**-ն մնում է անփոփոխ, ուստի լիովին մերժելի է «սննկանալ» տարբերակը:

4. ՈՒԹՍՈՒՆ

Բացատրությունը դյուրին է. կազմվել է **ութ** արմատից և -**սուն** «տասը՝ տասնյակ» նշանակող ածանցից: Սխալմամբ ասում են «ութանասուն» (նաև «ուցուն»): Այսպես են ասում **յոթանասուն**-ի նմանությամբ: **Յոթանասուն** -ի կազմության ընթացքը, սակայն, ուրիշ է. գրաբար **յոթն**, որի սեռական հոլովաձևը՝ **յոթան**, ապա՝ **ա** հոդակապ և -**սուն** ածանցը: Եզրակացություն. Ճիշտ են **յոթանասուն**-ը և **ութսուն**-ը, սխալ են յոթսուն-ը, յոցուն-ը և ութանասուն-ը, ուցուն-ը:

5. ՊԱՏՃԵՆ

Այս բառը վերջում **ն** ունի, ուստի **պատճենը**, **պատճենի**, **պատճենով** և այլն: Գրասենյակներում ասվող և գրվող «պատճե» տարբերակը պարզապես սխալ է:

6. ԻՐՈՔ

Այս կարճ բառը ոմանք «երկարացնում են»՝ դարձնելով «իրոքից», որ լիովին խոտելի է: Այդպես է արվում խոսակցական **իսկականից**, **ստից** և համանման բառերի նմանությամբ թերևս:

7. ՄԱՆՐԱՄԱՍՆ

Բառի վերջում **ն** է, քանի որ գրաբարում եղել է **մասն**, որից էլ՝ **անմասն**, **մասնիկ**, **մասնակի**, **մասնավոր**, **բաղեմասնություն** և այլն: Ամբողջովին մերժելի է **ն**-ի փոխարեն մանրամասն բառի վերջում **ը** դնելը («մանրամասը), ինչպես անում են ոմանք:

8. ՎԱՅՐԿՅԱՆ

Հինգերորդ դարից է հասել մեզ (ավանդական ուղղագրությամբ՝ **վայրկեան**): Արմատն է **վայր**, որի յ-ն սղելը և բառը «վարկյան» դարձնելը սխալ է:

17. ԲԱՌԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ՍԽԱԼ ԸՆԿԱԼԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

(11 դեպք)

Կան բառեր, որոնք իրենց կազմիչ մասերով նման են ուրիշ բառերի և խոսողների մեջ մտային ինչ-ինչ զուգորդումներ են առաջացնում, որը հանգեցնում է սխալների: Բառի կազմությունը սխալ ընկալելու հետևանքով մարդիկ կա՛մ աղավաղում են բառը, կա՛մ սխալմամբ գործածում այլ բառի իմաստով:

Ահա այդպիսի բառերի մի փունջ:

1. ՄԵՂԱՆՉԵԼ

«Բազմաչարչար» այս բայը նշանակում է «մեղք գործել, սխալվել»: Բառի կազմությունը՝ **մեղք** բառի արմատ **մեղ**, գրաբարյան –**անչ**- բայական ածանց և -**ել** մասնիկ: Մարդիկ **մեղանչել** բառի **մեղա** սկզբնամասը կապում են **մեղա՜** «մեղքին՝ հանցանքին թողություն խնդրելու բացական-չություն» նշանակող բառին (մեղա **գալ** «մեղքը խոստովանել և ներում հայցել», **մեղայագիր**, **մեղայական**) և **մեղանչել** բառը սխալմամբ գործածում «զղջալ, ներում հայցել» իմաստով: Ահա արտառոց մի նախադասություն՝ «Մեղադրյալը դատարանում մեղանչում էր»: Ո՛չ, իհարկե. նա նախապես *մեղանչել էր*, իսկ դատարանում *մեղա էր գալիս*, զղջում իր հանցանքի համար:

2. ՀՈԳԱԲԱՐՁՈՒ

Հոգեբան, **հոգեբույժ**, **հոգեպարար**, **հոգեզմայլ** և բազմաթիվ ուրիշ բառերի նմանությամբ **հոգաբարձու** բառը հաճախ սխալ ասում են (նաև գրում) «հոգեբարձու»՝ մտածելով, թե հնչյունափոխված **հոգի**-ն է: Այնինչ այստեղ **հոգ** արմատն է, որը «հոգս» է նշանակում (սրանից էլ՝ **հոգալ**, **հոգ տանել**, **հոգատար**):

Հոգաբարձու բառի երկրորդ արմատը **բարձ**-ն է (գրաբար **բառնալ** «վերցնել», «բարձրացնել»), այսինքն՝ հոգաբարձուն

հոգ է տանում, ստանձնում՝ իր վրա է վերցնում այս կամ այն հաստատության հոգսերը հաղթահարելու, վերացնելու **հոգսը**: Անգամ եթե հոգաբարձուն սիրով՝ հոգով անի իր գործը, միևնույն է, բառն **ա**-ով է՝ **հոգաբարձու**:

3. ՏԱՐԿԵՏՈՒՄ

Այս բառը գործածվում է հատկապես համալսարանական կյանքում, որտեղ բառի «մի բան որոշակի ժամանակով հետաձգել» իմաստը վերաբերում է ուսումնառությունը միաժամանակ ընդհատելուն: **Տար**-նախածանցն է. մի կետում ընդհատում են, մյուս կետում՝ վերականգնում, այսինքն՝ գործ ունենք տարբեր կետերի հետ (տար+կետ+ում): Սխալ է, երբ կարծելով, թե հիմքում **տարի** բառն է, ասում կամ գրում են «տարեկետում»: Թեպետ հանուն ճշմարտության պիտի ասել, որ տարկետումը սովորաբար հենց տարով (կամ տարիներով) է լինում, դրանից էլ առաջ է եկել այս շփոթը:

4. ԼՈՒՍՆՈՏ

Կան մարդիկ, որոնք տառապում են լուսնոտությամբ. նրանք քնի մեջ անգիտակցական գործողություններ են անում. քայլում են, սողում, խոսում, նվագում և այլն: Այդ մարդկանց կոչում են **լուսնոտ** (լատիներեն lunaticus): Բառը 5-րդ դարից կա հայերենում. գործածել է Եզնիկ Կողբացին:
Ասում են նաև **լուսնահար**, **գիշերաշրջիկ**:

Բառի բաղադրիչներն են **լուսին** (հնչյունափոխվել է՝ **լուսն**) արմատը և -**ոտ** ածանցը:

Որոշ մարդիկ սխալ են ընկալում **լուսնոտ** բառի կազմությունը. բառը նմանեցնում են **լողորդ**, **զնորդ**, **վարորդ** և -**որդ** վերջածանց ունեցող այլ բառերի՝ դարձնելով «լուսնորդ»: Ասում են, երբեմն նաև գրում, այնինչ 1500-ամյա բառը **լուսնոտ**-ն է:

5. ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐԵԼ

Բառի կազմությունը՝ գրաբարյան **ի** նախդիր, **ուղի** «ճանապարհ» և **արկանել** «գցել, նետել»: **Ի** նախդիրը, միանալով **ուղի** արմատին, **ու** ձայնավորից առաջ դարձել է **յ**՝ **յուղի** (արտասանվում է *հուղի*) **արկանել** «ճամփա գցել»: Բառասկզբի յ-ն 20-րդ դարի 20-ականների ուղղագրական փոփոխությունից հետո գրվում է ըստ արտասանության՝ **հ**-ով:

Հուղարկավորել նշանակում է «հանգուցյալին տանել գերեզմանոց և թաղել» (ունենք նաև **հուղարկավորություն**, **հուղարկավոր**):

Քանի որ ննջեցյալին հողին են հանձնում՝ հողը դնում՝ հողում թաղում, մարդիկ, չիմանալով **հուղարկավորել** բառի կազմության ընթացքը, բառը ձևափոխել և ասում են «հողարկավորել»: Ճիշտ չէ:

6. ԱՐԴՈՒԿ

Արդուկ բառը կազմվել է «ձև» նշանակող **արդ** արմատից: Արդուկի միջոցով ձև է տրվում հագուստին՝ բնականաբար հարթեցնելով՝ ուղղելով ճմռթված մասերը: «Հարթեցնելու» ընկալումն է պատճառը, որ ոմանք **արդուկ**-ը գրում են «հարթուկ» ձևով, **արդուկել**-ն էլ՝ «հարթուկել» (**արդուկիչ** «արդուկ անող» բառը շատերը չգիտեն, ուստի **հ**-ով և **թ**-ով գրելու հավանականությունը զրո է): «Հարթ»-ով կազմությունները (օրինակ՝ **հարթուկ**) թեև բառարանային գրանցում ունեն, այնուամենայնիվ սխալ են:

7. ԼՈՒՍԱՏՏԻԿ

Լուսատտիկ բառը կազմվել է **լույս** և **տուտ** «պոչ, ծայր» արմատներից, որոնք միացել են **ա** հոդակապով, բառի վերջից ավելացել է -**իկ** ածանցը: Լուսատտիկը փոքրիկ միջատ է, որը մթության մեջ լույս է տալիս (պոչամասից):

Ոմանք բառը գործածում են «լուսատիտիկ» ձևով՝ կարծելով, թե լույս արձակող այս միջատը տիտիկ է անում (այսինքն՝ նստում է) թփերի, խոտաբույսերի տերևներին: Ի

դեպ, ասենք, որ «լուսատիտիկ» տարբերակը ևս բառարանային գրանցում ունի:

Բառի հոմանիշներից են՝ **կայծոռիկ** (կայծ+ոռ+իկ), ժողովրդական **լուսատուտ**, **լուսատտնիկ**, որոնք նույնպես վկայում են **լուսատտիկ**-ի օգտին:

8. ՀԱՇՄԱՆԴԱՄ

Հաշմանդամ բառի բաղադրիչներն են **հաշմ** (նշանակում է «մարմնի որևէ անդամի վնասվածք կամ արատ ունեցող», «վնասված, խեղված») և **անդամ**: **Հաշմ** արմատից կազմվել են **հաշմվել**, **հաշմություն** և այլ բառեր: Բառի հոմանիշն է **խեղանդամ**:

Որոշ մարդիկ այս բառի կազմությունը սխալ են ընկալում՝ կարծելով, թե անդամները հաշվված կամ հաշվառված են (բժշկական, թոշակի և այլ նպատակներով), ըստ այդմ էլ ասում են «հաշվանդամ»: Այնինչ անդամները հաշմվածխեղված են: Այսպիսով՝ **հաշմանդամ**:

9. ՎԱՐԿԱԲԵԿԵԼ

Վարկաբեկել նշանակում է «հեղինակությունը գցել, անվանարկել»: Առաջին բաղադրիչը **վարկ**-ն է՝ «հեղինակություն, պատիվ», երկրորդը՝ **բեկել** «կոտրել»: Այս բառը ոմանք սխալմամբ ասում և գրում են «վարքաբեկել»՝ կապելով **վարք** բառի հետ, որը նշանակում է «վարվելու կերպ՝ եղանակ», «վարքագիծ» և այլն: Այսպիսով՝ **վարքագիծ**, **վարքուբարք**, քանի որ **վարք**-ից են կազմվել, **վարկաբեկել**, **վարկանիշ**, քանի որ **վարկ**-ից են կազմվել:

10. ՁԵՂՆԱՀԱՐԿ

Բառարաններում այս բառը բացատրվում է այսպես՝ «տան ամենավերին հարկը, կտուրի տակ եղած հարկը» կամ էլ «ձեղունի և առաստաղի միջի հարկը»: Սա սովորաբար ցածր, հաճախ նաև թեք առաստաղով սենյակ է:

Իսկ ի՞նչ է ձեղունը: Այն շինության տանիքն է, ծածկը, կտուրը:

Ձեղուն-ը քիչ գործածվող բառ է, շատերին անծանոթ: Սրա հնչյունափոխված հիմքով կազմված ուրիշ բառեր էլ կան՝ **ձեղնաջահ**, **ձեղնալույս**, **ձեղնասենյակ**, **ձեղնախուց**, **ձեղնափայտ** և այլն: Սրանք էլ հազվադեպ են, գրեթե անգործածական, բայց բառարաններում, այնուամենայնիվ, կան, որպես **ձեղուն**-ի բառակազմական իրացումներ:

Ձեղն բառամասի անհասկանալի լինելու պատճառով ոմանք այն կապում են ձեռքի հետ և բառը սխալմամբ ասում «ձեռնահարկ»: Թե ինչպե՛ս է հիմնավորվում **ձեռն**-ի առկայությունը (մի՞թե ընկալում են որպես ձեռքով սարքված), հայտնի չէ:

Բառի կազմությունն իմանալուց հետո այլևս չպետք է սխալվել: Ուստի միայն **ձեղնահարկ**:

Ի դեպ, **ձեղնահարկ** բառը իմանալուց և ճիշտ գործածելուց հետո հայերեն խոսքում վստահաբար կնահանջի նրա օտար համարժեքը՝ ռուսերեն мансарда-ն:

11. ԲԱՆՍԱՐԿՈՒ

Բանսարկու բառը նշանակում է «չարախոս, խառնակիչ»: Բառի բաղադրիչներն են՝ **բան** «խոսք» բառի գրաբարյան հոգնակի հայցականի ձևը (**բանք** / **բանս**), **արկ**, որը հին **արկանել** «գցել, նետել» բայի արմատն է (սրանից առաջացել է –**արկ** ածանցը, ինչպես՝ **ներարկել**, **թողարկել**, **գործարկել** «գործի գցել», **անվանարկել** «անունը գցել. հեղինակազրկել, անունը սևացնել») և -**ու** վերջածանցը:

Արկ-ի և **ու**-ի ձուլումից առաջացել է –**արկու** բաղադրյալ մասնիկը, որը տեսնում ենք մի շարք բառերի մեջ՝ **խուզարկու**, **ահարկու**, **խնկարկու** «խունկ ծխող, բուրվառով խնկարկող մարդ», **բողոքարկու** «բողոքող, բողոքարկող»: Ամեն ինչ հստակ է, բայց ոմանք մտածում են, թե **բանսարկու**-ն բան, այսինքն՝ գործ սարքողն է: Դրա հետևանքով էլ բառն

աղավաղելով՝ ասում են *բանսարքու:* Անշուշտ սխալ է: Չսխալվելու ու միշտ **բանսարկու**-ն **կ**-ով ասելու (նաև գրելու) համար կարելի է հիշել ոչ միայն **խուզարկու**-ն և մյուս բառերը, այլև **վերարկու**-ն (սա էլ վրան են գցում):

18. ԲԱՌԱՎԵՐՋՈՒՄ Ն ԿԱՄ Ը ՊԵ՞ՏՔ Է, ԹԵ՞ ՈՉ

(10 դեպք)

Հայերենը հազարամյակների ճանապարհ է անցել, բազմաթիվ բարբառներ ունի, իսկ ներկա փուլում՝ նաև գրական լեզվի երկու տարբերակներ: Այս ամենի հետևանքով տարատեսակ զուգաձևություններ են առաջացել, հայերեն խոսողներն ու գրողներն էլ տարբեր պատճառներով որոշակի դժվարություններ են ունենում, նաև շեղումներ թույլ տալիս: Դրանցից մեկը բառավերջում **ն** կամ **ը** վերջնահնչյունի առկայությունն է կամ բացակայությունը:

Անդրադառնանք տասը դեպքի:

1. ԱԿՆ

Գրաբարում **ակն** նշանակում է «աչք»: **Ակն**-ից է կազմվել **խաժակն** «խաժ՝ կապտականաչ աչքեր ունեցող» բառը: Օրինակ՝ «**Խաժակն** երիտասարդներ ուրախ ու վստահ մոտեցան Վարդանին» (Դ. Դեմիրճյան):

Կա նաև առանց **ն**-ի՝ **խաժակ** «խաժ աչք» և «խաժ աչքեր ունեցող» իմաստներով բառը: Վերջինս դարձել է անձնանուն՝ **Խաժակ:**

Այդպես էլ ունենք **սևակն** «սև աչքեր ունեցող, սևաչյա», բայց՝ անձնանվան դեպքում առանց **ն**-ի՝ **Սևակ**:

2. ՇՈՂԱԿՆ / ՇՈՂԱԿ

Շողակն բառը նշանակում է «ադամանդ», նույն հնչյունակազմն ունեցող մի **շողակն** էլ ունենք, որը նշանակում է «շողացող՝ պայծառ, փայլուն աչքեր ունեցող»:

Գեղարվեստական խոսքում (հիմնականում չափածո) հանդիպում է նաև առանց **ն**-ի՝ **շողակ** տարբերակը: Այսպես.

Հեռու հարավում, **շողակի** նման,
Հսկա Մասիսի գագաթը փայլեց (Հովհ. Թումանյան):

Գովք է երեք վարդ քույրերին երգդ՝ հակինթ, զինդ ու **շողակ** (Հովհ. Շիրազ):

Ի դեպ, իգական անձնանուն կա՝ **Շողակ**:

3. ԻՆԸ / ԻՆՆ

Այս թվականը գրության երկու տարբերակ ունի. բաղաձայնով սկսվող բառից առաջ՝ **ինը** (**տարեկան**), ձայնավորով սկսվող բառից առաջ՝ **ինն** (**անգամ**): Բաղաձայնով սկսվող **հարյուր** բառի կողքին ևս կարելի է դնել **ինն** տարբերակը՝ **ինն հարյուր**. **հ**-ից և **ա**-ից առաջ **ը**-ն բնական է հնչում. Բաղադրիչներն էլ ձույլ են արտասանվում): Օրինակներ՝ «Հազար **ինն հարյուր** հիսունվեցին Մեսրոպն աքսորից եկավ» (Հ. Մաթևոսյան), «Հազար **ինն հարյուր** քսանին բնակություն է հաստատել Հայաստանի Թալինի շրջանի Քարագլուխ գյուղում» (Մ. Գալշոյան):

Բայց **ինն**-ին մի հատ էլ **ը** ավելացնելը գրագիտության վատ ցուցիչ է:

4. ՏԱՍԸ / ՏԱՍՆ

Այս թվականը ևս **ը** կամ **ն** վերջնահնչյուն ունի: Բառակազմության ժամանակ **ն**-ն պահպանվում է, ինչպես՝ **տասներկու**, **տասնօրյա**, **տասնամյակ, տասնապետ** և այլն:

Գրավոր և բանավոր խոսքում վերջին շրջանում տարածվել է առանց **ը**/**ն**-ի տարբերակը՝ **տաս**: Բայց կանոնը չի փոխվել, և քանի դեռ կանոնի փոփոխություն չկա, պաշտոնական, գիտական խոսքում, լրատվամիջոցներում պետք է կիրառվեն **տասը** և **տասն** տարբերակները:

5. ՉՈՐՍ .... ՈՒԹ

Չորս (գրաբարում՝ **չորք**), **հինգ**, **վեց**, **յոթ**, **ութ** թվականները բառավերջում **ը** կամ **ն** չունեն: Գրաբարում միայն **յոթ**-ն է **ն** ունեցել՝ **եօթն / եւթն**, որը հետագայում ընկել է: Գրական կանոնից շեղում են *չորսը երեխա*, *հինգը տարի*, *վեցը ծառ*, *յոթը օր*, *ութը ամիս* կապակցությունները, որոնք սովորական են բարբառային խոսքում կամ խոսակցական լեզվում:

6. ԸՆԴԱՄԵՆԸ

Բառարանները տվել են միայն **ը**-ով վերջացող տարբերակը՝ **ընդամենը**: **Ընդամենն** ձևը քիչ է գործածվում, որպես կանոն՝ ձայնավորով սկսվող բառերից առաջ: Օրինակ՝ «Փոքրիկ, **ընդամենն** ա՜յ այսքան փոսիկ է արված հաստոցի վրա» (Զ. Խալափյան): Չնայած այս և սակավաթիվ այլ գործածությունների առկայությանը՝ կարող ենք ասել, որ բառի վերջում այժմ ը-ն է ամրակայվել: Խորհուրդ ենք տալիս հենց այդպես էլ գործածել:

7. ԸՆԴՀԱԿԱՌԱԿԸ

Սրանցից բացի եղել է նաև **ընդհակառակ** տարբերակը, որը գրեթե մոռացվել է: Ժամանակի ընթացքում գերիշխող է դարձել **ը**-ով վերջացող տարբերակը՝ **ընդհակառակը**, ուստի բոլոր դեպքերում (ձայնավորից թե բաղաձայնից առաջ) կարելի է հենց դա գործածել:

8. ՈՉ ՄԵԿԸ / ՈՉ ՄԵԿՆ

Ժխտական այս դերանունն այնքան շատ են առանց **ը**-ի (կամ **ն**-ի) ասում, որ բանիմաց մարդիկ սկսել են կասկածել. մի՞թե բառավերջի **ը**-ն (կամ **ն**-ն) պարտադիր չէ: Անշուշտ, պարտադիր է: Այսպես. «Ազատության մարտիկներից **ոչ մեկը** բանտում չի մնա (Գ. Սևունց), «Իր պաշտելի որդիներից **ոչ մեկն** էլ տանը չէր» (Հ. Խաչատրյան):

«Ոչ մեկ» ձևը (ը-ի զեղչումով), որ շատ տարածվել է, լիովին մերժելի է։

9. ՍԱՌԸ / ՍԱՌՆ

Այս բառը **ը** կամ **ն** վերջնահնչյուն ունի, ինչպես **դառը** / **դառն**, **խառը** / **խառն** բառերը։ Կարող է հարց առաջանալ՝ հապա ինչո՞ւ ենք անդրադառնում սրանց, եթե խնդիր չունեն։ Մասամբ ունեն։ Առանց ը-ի՝ **սառ** ձևը կա խոսակցական լեզվում, բարբառներում, պատահում է վերջին երկու դարերի հայ և թարգմանական գրականության մեջ։ Այսպես.

«Դավաճանեցի մի գիշեր ես քեզ,
Ուզեցի ընտրել սիրուհի մի **սառ**...» (Ե. Չարենց)։

Կամ՝ «Ջերմությունից խեղդվելով՝ անզգայաբար դուրս էր գլորվել որմնախորշից և ագահորեն շնչում էր **սառ** օդը» (Զ. Դարյան)։

Պիտի նկատի ունենանք, որ բառը հոլովելիս **ը** կամ **ն** վերջնահնչյունն ընկնում է՝ **սառի**, **սառից**, **սառով**... (Տաք ջրից հանեց մտցրեց **սառի** մեջ)։

Առավել հետաքրքրական է, որ **սառ** բառը գրական արևմտահայերենում գոյական է և նշանակում է «սառույց»։

10. ԽՈՐ

Այս բառը ուղիղ և փոխաբերական իմաստներով շատ է գործածվում, ինչպես՝ **խոր ձոր**, **խոր անդունդ**, **խոր ճգնաժամ**, **խոր ձմեռ**, **խոր գիտելիքներ** և այլն։ Խոսակցական լեզվում հաճախադեպ է նաև **խորը** ձևով։ Հանդիպում է դասականների խոսքում ևս. «Նա ընկել էր **խորը** մտածմունքների մեջ» (Նար-Դոս), «**Խորը** շնչեց և ազատություն տվեց արցունքներին» (Գ. Մահարի)։

Բառարաններում կա՛մ միայն **խոր** ձևն է գրանցված, կա՛մ **խորը** բառից հղվում է **խոր**-ին։ Ի՞նչ անել։ Հնարավորինս խուսափել ավելորդ ը-ից, օրինակ՝ չասել **խորը ցավ**։

Բայց ահա այստեղ **ը**-ն ավելորդ չէ. «**Խորը** մի՛ գնա, Մարդպե՛տ» (Դ. Դեմիրճյան): Սա թվարկվածներից տարբեր դեպք է. նշանակում է «խոր տեղեր կամ տարածքներ, խոր մասեր»:

19. ԲՆԻԿ ՈՐՏԵՂԱՑԻ՞ ԵՍ

(15 դեպք)

Հայերիս սիրած հարցերից մեկն է սա: Տարբեր պատասխաններ են հնչում. ասվում են բառեր, որոնցում երևում են Հայոց աշխարհի հարազատ տեղանունները:

Որևէ տեղացի նշանակող հայերեն բառերի զգալի մասը մարդիկ ճիշտ գիտեն կամ հեշտ են կազմում, ինչպես՝ **երևանցի**, **արցախցի**, **կապանցի**, **գյումրեցի**... Բայց կան տեղանուններ, որոնցից –**ցի**, –**եցի** կամ –**ացի** ածանցներով բառեր կազմելիս մարդիկ երբեմն դժվարանում են:

Ներկայացնենք 15 դեպք:

1. Բաղաձայնով վերջացող բազմավանկ տեղանուններից (եթե հնչյունափոխվող ձայնավոր չունեն) տվյալ տեղացի նշանակող բառեր կազմելիս սովորաբար ավելանում է -**ցի** ածանցը, ինչպես՝ **Արտաշատ – արտաշատցի**, **Սասուն – սասունցի**, **Համշեն – համշենցի**, **Իջևան – իջևանցի**, **Եղեգնաձոր - եղեգնաձորցի**:

Այդպես էլ՝ **Շիրակ - շիրակցի**, թեև բոլորը գիտեն, որ VII դարում երևելի մաթեմատիկոս, տիեզերագետ, տոմարագետ ենք ունեցել՝ Անանիա Շիրակացին:

Նույն կերպ՝ **Տաթև - տաթևցի**, բայց չմոռանանք հռչակավոր Գրիգոր Տաթևացուն (փիլիսոփա, աստվածաբան, ուսուցչապետ, 1346-1409 թթ.):

Աշտարակ - աշտարակցի, թեև ունենք Ներսես Աշտարակեցի (1770-1857 թթ., Ամենայն հայոց կաթողիկոս):

Սևան - սևանցի, թեև XV դարում ունեցել ենք Աբրահամ Սևանեցի անունով փորագրիչ և քանդակագործ:

Այսպիսի բազմաթիվ «հակադրությունների» օրինակներ կարող ենք բերել, քանի որ հազարամյակների պատմություն ունեցող մեր լեզուն ժամանակի ընթացքում որոշակի փոփոխությունների է ենթարկվել:

2. **Գորիս** տեղանունից կազմվում են զուգահեռ ձևեր՝ **գորիսցի** և **գորիսեցի**: Կանոնը նախապատվություն է տալիս **գորիսցի** տարբերակին, իսկ գործածողները հաճախ նախընտրում են **գորիսեցի** տարբերակը:

3. **Գավառ** քաղաքի անունից կազմվում է **գավառցի** բառը, բայց երբ **գավառ** հասարակ անվանն է ավելանում տեղաբնակ նշանակող ածանցը, ապա դա **–ացի**-ն է՝ **գավառացի** («որևէ կամ այսինչ գավառից» իմաստով):

4. **Տավուշ** տեղանունից կազմվում է **տավուշցի**, զուգահեռաբար՝ նաև **տավուշեցի**: Այս ձևերը մրցում են իրար հետ: Հիշենք, որ պատմագիր, մատենագիր, մանկավարժ, եկեղեցական գործիչ Վանական Վարդապետը (1181–1251 թթ.) հայտնի է նաև **Տավուշեցի** անվամբ:

5. Միավանկ տեղանուններից տվյալ տեղացի նշանակող բառեր կազմելիս հիմնականում ավելանում է **–եցի** ածանցը, ինչպես՝ **Վան – վանեցի**, **Խոյ – խոյեցի**, **Կարս – կարսեցի**, **Մուշ – մշեցի**, **Կոշ – կոշեցի**:

Այդպես էլ՝ **Կողբ – կողբեցի**, թեև հանրահայտ է Եզնիկ Կողբացին (V դարի մատենագիր):

6. **Տեղ** գյուղանունից օրինաչափորեն կազմվում է **տեղցի** բառը, իսկ **տեղ** հասարակ անունից՝ **տեղացի**, որ նշանակում է «որոշակի տեղի բնակիչ, նույն տեղի բնակիչ», «տեղի, նույն տեղի»:

7. Բառավերջում **ի** ունեցող տեղանուններից այդտեղացի նշանակող բառ կազմելիս **ի**-ն ընկնում է, ավելանում է –**եցի** ածանցը, ինչպես՝ **Լոռի – լոռեցի**, **Անի – անեցի**, **Փարպի – փարպեցի**, **Մեղրի – մեղրեցի**, **Մարտունի – մարտունեցի**, **Շուշի - շուշեցի**:

Այդպես էլ՝ **Ալավերդի – ալավերդցի**, թեև օտար անընդունելի անունը փոխե՛լը ճիշտ կլիներ:

8. **Էջմիածին** տեղանունից կազմվում են **էջմիածնեցի** և **էջմիածինցի** բառերը, սակայն նախապատվությունը տրվում է առաջինին՝ **էջմիածնեցի** տարբերակին:

9. **Կարին** տեղանունից անցյալում կազմվել է **կարնեցի** բառը (XVII դարում Հակոբ Կարնեցի անունով ժամանակագիրպատմիչ ենք ունեցել): Բառն այսօր էլ գործածական է. նրա հետ մրցում է նոր՝ **կարինցի** անհնչյունափոխ տարբերակը:

10. **Ջուղա** տեղանունից կազմվում է **ջուղացի**, բայց ավանդաբար ունենք **ջուղայեցի** տարբերակը. հայտնի Ջուղայեցիներից հիշենք Հովհաննես Ջուղայեցուն (XVII դարի տպագրիչ) և Սիմեոն Ջուղայեցուն (XVII դարի փիլիսոփա, քերական, մանկավարժ):

11. **Սյունիք** տեղանունից **ք**-ի անկմամբ կազմվում է **սյունեցի,** որ պատվական հնություն ունեցող մի բառ է: Բայց վերջին շրջանում հանդիպում է նաև **սյունիքցի** կազմությունը: Մարդիկ տեղանվանն ուղղակի ավելացնում են -**ցի** ածանցը, ինչպես մյուս դեպքերում: Նախընտրելին, անշուշտ, ավանդական **սյունեցի**-ն է:

12. **Ջավախք** տեղանունից **ք**-ի անկմամբ կազմվում է **ջավախեցի** բառը: Վերջերս տարածվում է նաև **ջավախքցի** տարբերակը:

13. **Վայք** և **Սոթք** տեղանունների **ք**-ն պահպանվում է, բաղաձայնների կուտակումից խուսափելու նպատակով ավելանում է **-եցի** ածանցը՝ **վայքեցի** և **սոթքեցի**:

14. Գաղտնավանկ ունեցող **Ակն**, **Գողթն և Հաճն** տեղանուններից **-եցի** ածանցով կազմվում են **ակնեցի**, **գողթնեցի** և **հաճնեցի** բառերը: Հանդիպում են նաև **ակնցի** և **հաճնցի** տարբերակները:

15. **Վայոց ձոր** տեղանունից անցյալում կազմել են **վայոցձորեցի** բառը, այժմ՝ **վայոցձորցի**:

Եվ այսպես հարյուրավոր, հազարավոր նման բառեր: Եվ այդ բոլորը մեկ բառով՝ **հայաստանցի**:

20. ՀԵՏԻՈՏՆ ԴԵՊԻ ԱՐԱԳԱԾՈՏՆ

(ՈՏՆ վերջնաբաղադրիչով բառերի մասին)

(6 դեպք)

Հին հայերենում մարդու մարմնի մասերից մեկը կոչվում էր **ոտն**, որի հոգնակին էր **ոտք**: Ժամանակակից գրական հայերենում գրաբարյան հոգնակիի **ոտք**-ը դարձել է եզակի թվի ձև, որից էլ կազմվում է **ոտքեր** հոգնակին:

Չմոռանանք, իհարկե, որ այսօր ժողովրդական խոսքում հաճախ ասում ենք **ոտ** (բառավերջի **ն**-ի անկումով), հոգնակին կազմելիս **ն**-ն վերականգնվում է՝ **ոտներ**: Այդպես էլ **ձեռն** – **ձեռք** – **ձեռքեր**, ժողովրդական խոսքում՝ **ձեռ** - **ձեռներ**:

Ոտն արմատը բառակազմական դիրքում առանձնակի դժվարություններ չի առաջացնում: Կազմված բառերն առավելաբար **ն**-ով են (**ոտնահետք**, **ոտնաթաթ**, **ոտնակոխ անել**, **ոտնակ**, **ոտնահարել**, **ոտնաձայն**), հազվադեպ՝ առանց **ն**-ի (**ոտաշոր, ոտիկ**, ժողովրդական խոսքում գրականին բնորոշ **ն**-ի զեղչմամբ՝ **ոտացավ**, **ոտատակ, ոտատեղ**):

Բառամիջի դիրքում էլ առանց **ն**-ի է (**եռոտանի**, **երկոտանի**, **չորքոտանի**):

Անդրադառնանք այն բառերին, որոնց վերջում գրաբարյան **ոտն** արմատն է: Այս բառերը գործածողները երբեմն ունենում են դժվարություններ:

1. ՀԵՏԻՈՏՆ

Սուրբ Գրքում գործածված այս շատ հին բառը նշանակում է «ոտքով գնացող, քայլելով գնացող», «հետևակ», «ոտքով»: Ի դեպ, այս բառի **հետ** արմատի նախնական նշանակությունն է «ոտք» (**հետք** բառը հենց «ոտքի կոխած տեղի նշան» իմաստն ունի):

Հետիոտն-ի **ն**-ն բառի պարտադիր բաղադրիչ է, և սխալ է բառը գրել կամ ասել առանց **ն**-ի:

Հոգնակին կազմվում է –**եր** մասնիկով՝ **հետիոտներ**:

2. ԲՈԿՈՏՆ

Բոկոտն նշանակում է «բոբիկ. բոբիկ ոտքերով» (**բոկ** «բոբիկ, ոտքը մերկ»): Ասենք, որ բառարաններում գրանցվել է նաև **բոկոտ**-ը, առանց **ն**-ի: Նախընտրելին անշուշտ **բոկոտն**-ն է: Ինչո՞ւ: Որպեսզի պահպանվեն ավանդույթը և **ոտն** վերջնաբաղադրիչով բառերի համակարգայնությունը:

Ստեղծվել, բայց շատ չի գործածվում ռուսերեն босоножка [բասանոշկա] բառի համարժեքը՝ **բոկոտիկ**: Սրա կազմիչներն են վերևում հիշատակված **բոկ**, **ոտ** արմատները և -**իկ** ածանցը):

3. ԲԱՐԱԿՈՏՆ, ԵՐԿԱՐՈՏՆ, ԿԱՐՃՈՏՆ, ԿԱՐՄՐՈՏՆ

Այս բառերի առաջին բաղադրիչները ցույց են տալիս ոտքերի (կամ քայլելու) հատկանիշներ: Այսպես՝ **բարակոտն** «բարակ ոտքեր ունեցող», **երկարոտն** «երկար ոտքեր ունեցող», **կարճոտն** «կարճ ոտքեր ունեցող», **կարմրոտն** «կարմիր ոտքեր ունեցող»:

Բառարաններում գրանցված են սրանց առանց **ն**-ի տարբերակները ևս՝ **բարակոտ**, **երկարոտ**, **կարճոտ**, **կարմրոտ**:

Սակայն առանց **ն**-ի գործածելը նպատակահարմար չէ: Ինչո՞ւ: Հաշվի պիտի առնենք, որ ժողովրդական խոսքում ունենք **բարակոտ** «բարակավուն», **երկարոտ** «երկարավուն», **կարճոտ** «մի փոքր կարճ, կարճավուն» և **կարմրոտ** «մի քիչ կարմիր, կարմրին տվող, կարմրավուն» բառերը, որ կարող է շփոթի պատճառ դառնալ:

Բացառություն է **արագոտն** «արագաշարժ ոտքեր ունեցող, արագագնաց, արագաքայլ» բառը, որն առանց **ն**-ի չի հանդիպում:

Լեզուն այս դժվարությունը հաղթահարել է. ստեղծվել են ուրիշ մասնիկներով նույնահիմք բառեր: Այսպես. **կարմրոտն** /**կարմրոտ** տարբերակներից բացի ունենք նաև **կարմրոտանի**, **կարմրոտիկ**, **կարմրոտնիկ**: Կամ էլ հոդակապով՝ **կարճաոտ**, նաև **արագաոտ:** Այնպես որ գործածողները ընտրելու հնարավորություն ունեն:

4. ԿԱՐՃՐՈՏՆ

Սա հացազգիների ընտանիքին պատկանող բույսի անուն է, քչերին է հայտնի: Որպես կանոն՝ գիտեն մասնագետները և չեն սխալվում: Այստեղ հիշատակում ենք նյութի ամբողջականությունը պահպանելու նպատակով:

5. ԽՈՉԸՆԴՈՏ

Գրաբարում եղել է բառավերջի **ն**-ով՝ **խոչընդոտն** (այսինքն՝ խոչ՝ արգելք ոտքի դիմաց՝ առջև): Հետագայում **ն**-ն ընկել է: Մենք այսօր չենք էլ գիտակցում, որ **ոտն** արմատի հետ գործ ունենք:

Հոգնակին կազմվում է բազմավանկ բառերի օրինակով՝ **–ներ** մասնիկով՝ **խոչընդոտներ**: Կարող ենք մեկնաբանել նաև այսպես՝ **ոտն – ոտներ**:

6. ԱՐԱԳԱԾՈՏՆ, ՄԱՍՅԱՑՈՏՆ

Ոտն բաղադրիչն ունենք նաև **Արագածոտն** (գրաբար Ոտն Արագածու / Արագածու ոտն), **Մասյացոտն** (գրաբար Մասեացոտն < Ոտն Մասեաց < Մասիք) տեղանուններում:

Այս միավորները որոշակիորեն տարբերվում են նախորդներից. այս տեղանունների **ոտն**-ը նշանակում է «լեռան ստորոտը», այսինքն՝ «Արագածի ստորոտը», «Մասիսների ստորոտը»: Ի դեպ, V դարից ունենք **լեռնոտն** «լեռան ստորոտը» բառը, որը գրանցված է նաև ժամանակակից հայերենի բառարաններում, բայց հնացած է և գրեթե չի գործածվում:

Հատուկ անունները կայուն են, ուստի անթույլատրելի է առանց **ն**-ի գործածությունը հատկապես գրավոր խոսքում: Բանավոր խոսքում առանց **ն**-ի գործածությունը կարող է ընկալվել որպես խոսքային վթար, դառնալ գրագիտության պակասի ցուցիչ:

21. ՀԱՅԵՐԵՆ «ԾԱՂԿԵՓՈՒՆՋ»

(7 բառափունջ)

Հայերեն հարյուրից ավելի բառերի վերջում տեսնում ենք **ծաղիկ** բաղադրիչը: Սրանք հիմնականում բուսանուններ են, թփերի, խոտաբույսերի և ծաղիկների գիտական և ժողովրդական անվանումներ: Դրանք հայկական լեզվամտածողության արգասիք են: Իհարկե, կան նաև օտար լեզուների ազդեցությամբ կազմվածներ ևս:

Հայախոս մարդը պիտի իմանա և կիրառի հայերեն այս բառերը, եթե անգամ մեկ-երկուսը մի քիչ երկար են օտարալեզու համարժեքներից:

Ծաղիկ վերջնաբաղադրիչով բառերը ներկայացնենք փնջերով:

1. Բույսն անվանելու հիմքում հաճախ ընկած է որևէ առարկայի ու տվյալ բույսի նմանությունը:

Զանգակածաղիկ, որովհետև բույսի ծաղիկները զանգակի նման են (օտար լեզուներում էլ է այդպես՝ լատ. Campanula, ռուս. колокольчик): **Աստղածաղիկ**, քանի որ ծաղիկները կարծես աստղիկներ լինեն (լատ. Aster):

Արևածաղիկ-ի դեպքը մի քիչ տարբեր է: Արևածաղիկը ձևով արեգակի նման է, դրան ավելանում է այն, որ ծաղկաբույլը միշտ արևի կողմն է թեքված: Սրա օտարալեզու համարժեքներում էլ արևը կա:

Չմշկածաղիկ կամ **մույկածաղիկ** (**մույկ** «մի տեսակ ոտնաման») են կոչել արևադարձային երկրներում աճող բույսը, որի պսակաթերթերից մեկի ծայրը շրջված է և մաշիկի ձև ունի:

Մատնոցածաղիկ-ը մատնոցուկի մի տարանունն է. երկուսի հիմքում էլ ընկած է **մատնոց** բառը, որովհետև ծաղիկները մատնոցի են նման (լատ. Digitails «մատնոց»):

Փողածաղիկ. տերևներն այնպես են միացած իրար, որ փող՝ խողովակ են հիշեցնում (հիշենք **փողաշուշան**-ը):

Մարգարտածաղիկ. սրա սպիտակ ծաղկաթերթերը նման են մարգարտահատիկների (շատերը գիտեն ռուսերեն անունը՝ маргаритка):

Խաչածաղիկ. պսակը կազմված է խաչի ձևով դասավորված չորս ծաղկաթերթերից:

Գնդածաղիկ. ծաղիկները մի ծաղկաբույլի մեջ խմբավորված են այնպես, որ գնդի են նմանվում:

2. **Մարդածաղիկ**-ը լոշտակ դեղաբույսի մի անունն է. սրա արմատի ձևը նման է մարդու ուրվագծերին:

Լուսնածաղիկ. սպիտակ, խոշոր ծաղիկներ ունի, լուսնաձև են սերմերը:

3. Արտաքին հատկանիշներից է ծաղկի գույնը: **Ծխածաղիկ** անունով հայտնի ծաղիկը ծխի գույն ունի, չնայած հանդիպում է նաև այլ գունավորումներով:

Հասկանալի է, որ **դեղնածաղիկ** կոչվող թփի ծաղիկները դեղին են, **կարմրածաղիկ** և **սպիտակածաղիկ** կոչվածներինը՝ կարմիր և սպիտակ, **ոսկեծաղիկ բազմաթերթիկ** մոլախոտինը՝ ոսկեդեղին:

4. Բուսանուններ կազմելու հիմքում ընկած են լինում նաև բույսի տերևների, ծաղկաթերթերի և որևէ առարկայի հատկանշային նմանություններ:

Թավշածաղիկ. ծաղկաթերթերը կարծես թավշյա լինեն:
Մոմածաղիկ. տերևներն ասես մոմե՝ մոմապատ լինեն:

5. Բառով նշվում է գործառական նշանակությունը:

Լվածաղիկ. սա հայտնի երիցուկի մի տարանունն է: Բույսն այսպես է կոչվել ամենայն հավանականությամբ այն պատճառով, որ օգտագործվում է միջատների դեմ պայքարելիս:

Կովածաղիկ. սա էլ գնարբուկի ժողովրդական անունն է: Այդ պես են կոչել, քանի որ կերախոտ է կովի համար:

Գինեծաղիկ-ը մանր, սպիտակ ծաղիկներով ջրային թունավոր բույս է, որ այդպես է կոչվում թերևս իր արբեցուցիչ լինելու պատճառով: Ի դեպ, **գինեծաղիկ** են կոչում նաև որթատունկի՝ խաղողի ծաղիկը, որ միանգամայն հասկանալի է, քանի որ խաղողենուց են գինի ստանում:

Զարդածաղիկ, որ ընդհանուր մի անուն է: Բառարանները բացատրում են այսպես՝ «փողոցները, զբոսայգիները, ինչպես նաև շինությունների ներսակողմը զարդարող ծաղիկ»: Կամ էլ **մեղրածաղիկ** «մեղրատու ծաղիկ»:

6. Ծաղկի անվան մեջ «հուշում» կա նրա աճելու տեղի կամ ժամանակի մասին:

Ձնծաղիկ. զարնան ավետաբեր այս ծաղիկը երևում է ձյունը հալվելուն պես, երբեմն հենց ձյան միջից:

Հողմածաղիկ. վաղ գարնանային ծաղկաբույսերից է, որ Արարատյան դաշտում ձմռանն անգամ չի ցրտահարվում, «դիմանում է հողմերին» (ռուս. ветреница):

Ցայգածաղիկ կամ **այգածաղիկ**. առաջին բաղադրիչների (**ցայգ** և **այգ**) հակադրությունն է ուշագրավ: Բացատրությունն այսպիսին է՝ «գիշերը, գիշերվա վերջին կամ էլ լուսադեմին բացվող ծաղիկ»:

7. Դեղաբույսերի բուժիչ հատկությունները ժողովուրդը երբեմն կապել է սրբերի անունների հետ:

Մարեմծաղիկ-ը ժողովրդական բժշկության մեջ լայնորեն օգտագործվող **մարեմխոտ** բուժիչ բույսի անվան մի տարբերակն է: Դեղաբույսի զորությունը վերագրվել է սուրբ Մարիամ Աստվածածնին:

Սուրբ Կարապետի ծաղիկ. սա էլ **անթառամ** բույսի անվան ժողովրդական տարբերակն է:

Չմոռանանք իհարկե, որ **ծաղիկ** վերջնաբաղադրիչով բառերից մի երկուսը բուսանուն չեն: Այսպես՝ **ջրծաղիկ** «(մանկական) վարակիչ հիվանդություն» (այլ է **ջրածաղիկ**-ը՝ «ջրերի մոտ աճող ծաղիկ»), **կռվածաղիկ** «կռվի առիթ ծառայող բան» (բոլորին հայտնի է հատկապես **կռվախնձոր**-ը):

Եզրափակենք գրաբարյան **երկնածաղիկ** բառով, որ գործածվել է **երկնածաղիկ առաքինութիւն** կապակցության մեջ՝ նշանակելով «երկնային ծաղկի նմանվող առաքինություն»: Զարդարվենք այդ առաքինությամբ:

22. *ԲԱՎԱԿԱՆ - ԲԱՎԱԿԱՆԻՆ* ԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ԱՅԼ ԲԱՌԱԶՈՒՅԳԵՐ

(8 բառազույգ)

Բավական և **բավականին** բառերի գործածության յուրահատկությունները ներկայացնելուց առաջ հարկ է անդրադառնալ **–ին** ածանցին, քանի որ այս երկու բառերն իրարից տարբերվում են հենց այդ մասնիկով: -**Ին** ածանցը միանում է հատկանիշ ցույց տվող բառերին և սաստկացնում / զորացնում է նրանց արտահայտած իմաստը: Համեմատենք –**ին** ածանցով զանազանվող բառերի զույգերը:

1. ՄՈՒԹ – ՄԹԻՆ

Մթին-ն ընկալվում է որպես «շատ մութ»: Դիտարկենք այս բառերի գործածությունը Վ. Տերյանի միևնույն քառատողում.

Մեղքի **մթին** քարայրից,
Ուր հսկում ես դու անքուն,-
Մութ ցանկությամբ դյութի՛ր ինձ
Եվ փայփայի՛ր ինձ թաքուն:

2. ՆՈՒՐԲ – ՆՐԲԻՆ

Նրբին, այսինքն՝ «շատ նուրբ»: Ահա այս բառերի համատեղ գործածության մի օրինակ արձակից. «Առաջին անգամ էր լսում նրա ձայնը, որ **նուրբ** հնչեղություն ուներ, մի քիչ երգեցիկ, գուցե ավելի սազական **նրբին** տողերի համար (Ալեքսանդր Թոփչյան):

3. ԽՈՐ – ԽՈՐԻՆ

Խոր բառը, իհարկե, առանց **ը**-ի ավելի լավ է: **Խոր հարգանքով** և **խորին հարգանքով** կապակցությունների իմաստային նուրբ զանազանությունը **–ին** ածանցից է. **խորին**-ն ավելին է արտահայտում, քան **խոր**-ը:

4. ԱՆՀՆԱՐ – ԱՆՀՆԱՐԻՆ

Այս բառերի բառարանային բացատրություններում ընդհանուր շատ բան կա՝ «ոչ հնարավոր», փոխաբերական՝ «անասելի, ծայրահեղ». **անհնար**-ի համար նշվում է նաև «անիրագործելի», **անհնարին**-ի համար՝ «անկարելի», «անդիմադրելի, անհաղթահարելի»:

Համեմատենք չարենցյան հետևյալ տողերը.

Նա ի՛նքն էր կարծես եկել երկիր
Հրաշքով մի սուրբ ու **անհնար**....
Անհնարին էր, որ քո
Երգի ոգին հանճարեղ
Նաիրական իր երգով
Այնժամ երգեր մի արև:

5. ՀԵՇՏ – ՀԵՇՏԻՆ

Հեշտ բառը բոլորը գիտեն, համաժողովրդական գործածություն ունի, բայց **հեշտին**-ը գեղարվեստական խոսքին բնորոշ բառ է (կարող ենք ասել նույնիսկ բանաստեղծական): Սա արդեն չենք մեկնաբանում «ավելի հեշտ», այլ ասում ենք, որ սա նույն հեշտն է, դյուրինը, բառարանները նշում են նաև «հեշտալից, հեշտավետ»:

Ահավասիկ երկու օրինակ գեղարվեստական խոսքից՝ մեկն արձակ, մյուսը՝ չափածո:

Շրջապատը չքանում է, լողում եմ եթերի մեջ, թեթև, **հեշտին** (Հր. Քոչար):

Կյանքն էլ է այդպես դժվար ու **հեշտին** (Պ. Սևակ):

6. ՋԵՐՄ – ՋԵՐՄԻՆ

Ջերմին-ը **հեշտին**-ի պես գեղարվեստական բառ է, քիչ գործածական:

Կանգուն, ողորկ ու **ջերմին**, մարմին մարմարե,
Ամեն սիրո ու սերմի կենսակարմիր արև (Ե. Չարենց):

7. ԴՅՈՒՐ – ԴՅՈՒՐԻՆ

Դյուր - **դյուրին** բառազույգը մյուսներից տարբեր է: Անածանց **դյուր** միավորը ընդհանուր հայերենյան բառ է (գործածվել է երկու գրականներում էլ՝ արևմտահայերենում և արևելահայերենում) և նշանակում է «ջանք չպահանջող, հեշտ»: Բառը հազվադեպ ենք տեսնում հայ դասական գրականության մեջ: Այսպես, օրինակ.

Գնա՛, լուսի՛ն, **դիւր** կ'երթաս (Դ. Վարուժան):

Անահիտը պարզապես կաշկանդվել էր մի հիվանդագին **դյուր** զգացությամբ (Դ. Դեմիրճյան):

Այսօր **դյուր**-ն ամբողջովին դուրս է մղվել գործածությունից, և միայն -**ին** ածանցով կազմված **դյուրին**-ն է գործածվում:

Արևելահայերենում **դյուրին**-ը գործածվում է գերազանցապես գրական խոսքում, իսկ արևմտահայերենում սովորական է նաև առօրյա, ժողովրդական խոսքում:

8. **Բավական** – **բավականին** (պարզ է, որ սխալ է ոմանց գործածած **բավականի** ձևը): **Բավական**-ը գործածության մեծ ընդգրկում ունի, հանդիպում է թե՛ առօրյա, թե՛ գիտական, թե՛ գեղարվեստական ու հրապարակախոսական և թե՛ վարչական խոսքում:

Բավական-ը կարող է գործածվել՝

✓ առարկա ցույց տվող բառերի՝ գոյականների հետ

Երբ վիրավորվեցի, **բավական ժամանակ** բարձր ջերմության մեջ աչքիս շարունակ այն գերմանացին էր (Ծ. Թաթիկյան):

✓ առարկայի և գործողության հատկանիշ ցույց տվող բառերի (ածական և մակբայ) հետ

Վարպետը վերադարձել էր Վրաստանից և **բավական երկար** ժամանակ իր կատարած շրջագայության տպավորության տակ էր» (Ռ. Զարյան):

✓ գործողություն ցույց տվող բառերի՝ բայերի հետ
Ձին **բավական հեռացավ** ինձանից (Րաֆֆի):

Բավականին բառի պարագայում նկատելի է, որ այժմ ավելի շատ գործածվում է բայերի հետ: Համեմատենք **բավականին** բառի գործածության այս նմուշները՝ քաղված գեղարվեստական խոսքի վարպետների ստեղծագործություններից: Սրանցում **բավականին**-ը գործածվել է՝

✓ գոյականի հետ
Արդեն իսկ ուներ, մանավանդ վերջերս, **բավականին հաջողություն** (Ե. Չարենց):
Բավականին տեղ հատկացրեց Շիրվանզադեի այդ ելույթին (Գ. Բես):
Այդպես **բավականին ժամանակ** է անցնում՝ մի րոպե, հինգ րոպե, գուցե տասը րոպե (Վահագն Գրիգորյան):

✓ ածականի / մակբայի հետ
Բավականին սրամիտ մարդ էր դասախոսը և կարողացավ ըմբռնել դահլիճի հոգեբանությունը (Ե. Չարենց):
Արտակը, որ Ատոմի հետ կանգնել էր **բավականին հեռու**՝ լսելիքը սրեց (Դ. Դեմիրճյան):
Բավականին դժվար գործ էր (Գ. Մահարի):
Առաջին կնոջից բաժանվեց, նորի հետ ամուսնացավ, **բավականին անհաջող**, կրկին թողեց սրան, միացավ առաջինի հետ (Զ. Խալափյան):

✓ բայի հետ
Աննկատելի կերպով մենք **բավականին հեռացել էինք** տնից (Րաֆֆի):
Բավականին զայրացա և ուխտ արի ու հաստատ վճիռ կայացրի (Դ. Դեմիրճյան):
Բավականին մոտեցել էին գյուղին. լսվում էր շների հաչելու ձայնը (Վրթ. Փափազյան):

Ասվածից չի կարելի եզրակացնել, որ **բավական**-ի փոխարեն ամենուրեք կարող ենք գործածել **բավականին**-ը: Օրինակ՝ «Հիմա, **բավական անց**, ավելի սուր զգաց, որ Սեդան մի բարդ խնդիր է ներկայացնում իրեն» (Շ. Թաթիկյան): Գրականության և մամուլի էջերում մի քանի օրինակ կարելի է գտնել: Այդպես էլ՝ **բավական թվով**, որը «բավականաչափ, շատ» է նշանակում:

Բավականին բառի գործածությունը գրեթե անհնար է օժանդակ բայի հետ: Օրինակ՝ «Երբ կցանկանաս դուրս գալ, **բավական է** ներսից փոքր-ինչ բախել» (Րաֆֆի):

Բավական է, ավարտենք. բավականին խոսեցինք այս բառերի մասին:

23. ՉՇՓՈԹԵԼ *–ԱԿԱՆ* ԵՎ *-ԱՅԻՆ* ԱԾԱՆՑՆԵՐՈՎ ՆՈՒՅՆԱՐՄԱՏ ԲԱՌԵՐԸ

(7 բառազույգ)

Հայտնի է, որ -**ային** և -**ական** ածանցներով հատկանիշ ցույց տվող բառեր են կազմվում, օրինակ՝ **ամառային**, **գործարանային**, **գյուղական**, **արաբական**: Հայախոս մարդիկ որոշակի դժվարություններ են ունենում այն ժամանակ, երբ –**ային** և -**ական** ածանցները միացած են լինում նույնարմատ բառերի: Ինչպե՞ս կողմնորոշվել: Նախ պետք է իմանալ բառերի իմաստները, ապա՝ նրանց կապակցելիությունը, այսինքն, թե դրանք ի՛նչ բառերի հետ են գործածվում: Ոմանք հարցը լուծում են օտար համարժեքների միջոցով: **քաղաքային** և **քաղաքական** բառերը, օրինակ, շփոթող չի լինում, գործածության դժվարություններ չեն ծագում: Բայց կան ուշադրության արժանի բառազույգեր: Ներկայացնենք դրանցից յոթը:

1. ՏԵՂԱԿԱՆ – ՏԵՂԱՅԻՆ

Տեղական-ը ամենքին հայտնի բառ է, ունի տարբեր իմաստներ՝ «որոշակի տեղի վերաբերող, տվյալ տեղի», «տվյալ

վայրում գործող՝ արտադրվող» և այլն: Տեղական լինում են իշխանությունները, սովորույթները, արտադրանքը, ապրանքը և այլն:

Տեղային-ը վերջին ժամանակներս գործածվում է որպես օտար լոկալ-ի (ռուսերեն локальный) համարժեք՝ «մի տարածքով սահմանափակված» իմաստով: Տեղային լինում են անզգայացումը, թմրեցումը, նաև զինված ընդհարումները (Սահմանամերձ գոտում **տեղային մարտեր** էին սկսվել):

Մի ժամանակ **տեղական** և **տեղային** բառերի իմաստներն ու կիրառությունները այսպես սահմանազատված չէին, ուստի պատահական չէ, որ բացատրական բառարանում **տեղային**-ի դիմաց գրված է «Նույնն է՝ **տեղական**»:

2. ՑԵՂԱԿԱՆ – ՑԵՂԱՅԻՆ

Ցեղական բառը հիմնականում «ազնվացեղ՝ ընտիր ցեղից սերած» իմաստն ունի: Ցեղական ցլիկ ու նժույգ, շներ են լինում: Ժողովրդական խոսքում **ցեղական** բառը գործածվում է նաև «տոհմին՝ գերդաստանին բնորոշ՝ ժառանգական» իմաստով: Օրինակ՝ Իմ մրսկան լինելը **ցեղական** է:

Ցեղային-ը նշանակում է «ցեղին վերաբերող», «ցեղերի միջև տեղի ունեցող՝ գոյություն ունեցող»: Ցեղային միություն է լինում, ցեղային հակամարտություն:

3. ԱՌԵՎՏՐԱԿԱՆ – ԱՌԵՎՏՐԱՅԻՆ

Առևտրական բառը նշանակում է «առևտրին բնորոշ, առևտրին վերաբերող» (**առևտրական կենտրոն, առևտրական կազմակերպություն**), իհարկե, նաև «մարդ, որն առևտրով է զբաղվում»:

Առևտրային նշանակում է «առևտրի ձևով արտահայտվող»: Սա օտար **կոմերցիոն**-ի համարժեքն է (**առևտրային գաղտնիք**, **առևտրային բանկ**):

4. ՏՆԱՅԻՆ – ՏՆԱԿԱՆ

Տնային-ը անգամ երեխաներին քաջածանոթ բառ է (տնային աշխատանքները վկա): Տնային հոգսեր են լինում, տնային շորեր ունենք, կան տնային կենդանիներ, բույսեր և այլն:

Երբ ուզում ենք արտահայտել «տանը պատրաստված» իմաստը, դիմում ենք **տնական** բառին և ասում **տնական մածուն**, **տնական պանիր**, **տնական օղի**:

5. ԳՐԱԿԱՆ – ԳՐԱՅԻՆ

Գրական բառը, որ նշանակում է «գեղարվեստական գրականությանը վերաբերող, նրան բնորոշ», «գրականության մեջ գործածվող», «գրականությամբ զբաղվող», հաճախական է և հանրածանոթ («**Գրական** թերթ», **գրական** լեզու, **գրական** բառ, **գրական** կյանք, **գրական** գործիչ և այլն):

Իսկ **գրային** բառը նշանակում է «գրին հատուկ, գրին վերաբերող», «գրավոր, գրի օգնությամբ կատարվող», ընդհակառակը, սահմանափակ կիրառություն ունի (**գրային** համակարգ, **գրային** նշան):

Գրական և **գրային** բառերը հիմնականում անշփոթելի են: Բայց ունենք թե՛ **գրական արտասանություն** և թե՛ **գրային արտասանություն**, ինչպե՞ս զանազանել:

Երբ մարդիկ բառերն արտասանում են ըստ գրական լեզվում ընդունված կանոնի, ապա դա գրական արտասանությունն է (օրինակ՝ շա*փ*աթ, այնինչ շաբաթ արտասանությունը բարբառային է):

Երբ մարդիկ բառերն արտասանում են այնպես, ինչպես դրանք գրված են, գործ ունենք գրային արտասանության հետ (օրինակ՝ զուգարան):

6. ՍԵՌԱԿԱՆ – ՍԵՌԱՅԻՆ

Արդի հայերենի բացատրական բառարանում **սեռական** բառի դիմաց գրված է «Նույնն է՝ **սեռային**»: **Սեռային**-ն էլ

բացատրվում է այսպես՝ «սեռին հատուկ, երկու սեռերին հատուկ», «սեռի հետ կապված, սեռական հատկանիշ ունեցող», «ըստ սեռերի կատարվող՝ տեղի ունեցող», «սեռ ցույց տվող» և այլն:

Ներկայումս այս բառերի գործածության մեջ տարբերակում է մտել:

Համեմատենք. մի կողմից ունենք **սեռական դաստիարակություն**, **սեռական հասունացում**, **սեռական ցանկություն**, **սեռական կյանք**, մյուս կողմից՝ **սեռային պատկանելություն**, **սեռային տարբերություն**, **սեռային տարբերակում**, **բնակչության սեռային կազմ**:

Արդի հայերենի գրական երկու տարբերակներում **սեռական / սեռային**-ի պատկերը տարբեր է. արևելահայերենի **սեռական**-ի դիմաց արևմտահայերենում **սեռային** է: Այսպես, օրինակ, արևմտահայերենում **սեռային գործարաններ**, **սեռային յարաբերութիւն**, արևելահայերենում՝ **սեռական օրգաններ**, **սեռական հարաբերություն**:

Չմոռանանք ասել, որ **սեռական հոլով**-ի **սեռական**-ն այլ է. ձևով նույնն է, իմաստով՝ տարբեր:

7. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ – ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ

Ժողովրդական բառը բոլորին է ծանոթ, ներկայացնելու կարիք պարզապես չկա (**ժողովրդական** երգ, **ժողովրդական** խոսք, **ժողովրդական** իմաստություն, **ժողովրդական** երգիչ և այլն, և այլն): Բառը նշանակում է «ժողովրդին հատուկ՝ վերաբերող, ժողովրդի», «ժողովրդականություն վայելող», «ժողովրդական բնույթ ունեցող»:

Բայց կա նաև **ժողովրդային** բառը, որն ունի **ժողովրդական** բառի հիմնական իմաստը՝ «ժողովրդին հատուկ՝ վերաբերող, ժողովրդի»: Ուրեմն ինչպե՞ս տարբերել և գործածել: **Ժողովրդային** բառը կա հայերենի բացատրական ընդարձակ բառարաններում. նրանից հղում է արվում **ժողովրդական**-ին:

Որևէ տեղում նշված չէ, բայց բառի իրական գործածությունը տեսնում ենք արևմտահայերենում: Ամբողջ տարբերությունը սա է: Նկատենք, որ արևելահայերենում **ժողովրդային** բառը հանդիպում է հատկապես հանկարծաստեղծ խոսքում, երբեմն էլ պատահում է ծագումով արևմտահայերի արևելահայերեն խոսքում:

Եզրակացություն. **ժողովրդական** բառը բնորոշ է արդի հայերենի երկու տարբերակին էլ, **ժողովրդային**-ը՝ առավելաբար արևմտահայերենին:

24. *–ՈՒԹՅՈՒՆ* ԵՎ *–ՈՒՅԹ*. ԻՆՉՊԵ՞Ս ՉՇՓՈԹԵԼ ԴՐԱՆՑՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԲԱՌԵՐԸ

(7 բառազույգ)

Հայերենի –**ություն** ածանցով մեծաթիվ բառեր կան, ինչպես՝ **ազատություն**, **խաղաղություն**, **հարստություն**, **պետություն**, **կրթություն**, **լայնություն**, **հայրություն** և այլն: Սրան հնչյունակազմով նման մի ածանց էլ ունենք՝ –**ույթ**-ը, որով նոր բառեր, հատկապես տերմիններ են կազմվում: Ահա՝ **ելույթ**, **երևույթ**, **լուծույթ**, **մակերևույթ**, **մշակույթ**, **արժույթ**, **հասույթ**, **ճաշկերույթ** և այլն:

Հայերեն մի շարք բառեր նույն արմատն ունեն և կազմվել են -**ություն** և -**ույթ** ածանցներով: Դրանք բացատրական բառարաններում իմաստով երբեմն հստակ սահմանազատված չեն, մարդիկ էլ գործածելիս հաճախ շփոթում են:

Անդրադառնանք 7 բառազույգի:

1. ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ – ԱՎԱՆԴՈՒՅԹ

Ավանդությունը ավանդազրույցն է, ժողովրդի մեջ սերնդեսերունդ պատմվող փոքրածավալ արձակ ստեղծագործություն, օտար բառով՝ լեգենդ: Օրինակ՝ «Գյուղում վանքի կառուցման մասին տարբեր **ավանդություններ** են պատմում»:

Ավանդություն են անվանում նաև ժառանգությունը, օրինակ՝ եկեղեցական **ավանդություն**: Բառարաններն ասում են, որ ավանդություն է նաև պատմականորեն ձևավորված ու սերնդից սերունդ փոխանցվող սովորույթների, հայացքների, կենցաղային կանոնների և այլնի ամբողջությունը: Հենց այս իմաստն արտահայտելու համար ստեղծվել և գործածվում է **ավանդույթ** բառը:

Ի՞նչ է ավանդույթը: Ավանդույթը պատմականորեն հաստատված կարգն է, չգրված օրենքը, սովորույթը, օտար բառով՝ տրադիցիան:

Այս բառերը տարբերակելու համար պիտի իմանալ. ավանդությունը պատմվում է, ավանդույթը՝ պահպանվում, կիրառվում, անգամ պարտադրվում:

2. ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆ – ԲԱՐԴՈՒՅԹ

Բարդությունը բարդ լինելն է, բարդ գործը, դժվարությունը: Բժշկության մեջ **բարդություն** են կոչում նաև մի հիվանդության ժամանակ կամ նրա հետևանքով նոր հիվանդության առաջանալը: Դպրոցական քերականությունից հայտնի է, որ **բարդություն** են անվանում նաև բարդ բառը: Այսինքն՝ **բարդություն**-ը բազմիմաստ բառ է, մի քանի իմաստ ունի:

Բարդույթ-ը համեմատաբար նոր բառ է, որը գործածվում է հոգեբանության մեջ՝ որպես **կոմպլեքս** օտար բառին համարժեք: Հոգեբանները բացատրում են այսպես՝ «անձի հոգեկանում որոշակի մտքերի, մտապատկերների և զգացմունքների կայուն զուգորդություն»: Այլ կերպ ասած՝ սա այն գաղափարը, ներշնչումն է, որը մշտապես կաշկանդում է մեկին: Մասնագետները տարբեր բարդույթներ են առանձնացնում: Օրինակ՝ **թերարժեքության բարդույթ**, **ազգային ստորակայության բարդույթ**:

Բարդություն-ը և **բարդույթ**-ը չշփոթվող բառեր են, թեպետ նման կառուցվածք ունեն: Խորհուրդ. գրագետ երևալու համար չպետք է անպատեհ ասել **բարդույթ**, երբ հանգիստ

կարող ենք **բարդություն** բառը գործածել: Օրինակ, «Ջրամբարի կառուցման ժամանակ տարբեր **բարդություններ** առաջացան» նախադասության մեջ ինչպե՞ս կարելի է ասել «բարդույթներ առաջացան»: Ուղղակի չի կարելի:

3. ՄՐՑՈՒԹՅՈՒՆ – ՄՐՑՈՒՅԹ

Մրցությունը որևէ ասպարեզում իրար հետ մրցելն է, իմաստով շատ մոտ է՝ **մրցակցություն** բառին: Եթե տասնամյակներ առաջ՝ խորհրդային հասարակարգում, տնտեսական կյանքում գործածում էին **մրցություն** բառը (սոցիալիստական մրցություն), ապա այսօր՝ շուկայական հարաբերությունների զարգացման պայմաններում, հիմնականում **մրցակցություն**-ն է գործածվում: Ընդ որում՝ կյանքի տարբեր ոլորտներում, այդ թվում՝ կրթության մեջ:

Սպորտում մրցությունը առաջնությունը որոշելու համար կազմակերպված մրցախաղն է, այս առումով մոտ է **մրցում** բառին:

Իսկ ահա մրցույթը մասնակիցներից առավել արժանավորին (հաճախ նաև արժանավորներին) կամ էլ առավել համապատասխան տվյալներ ունեցող(ներ)ին հայտնաբերելու հնարավորություն ընձեռող մրցություն է: Օրինակ՝ **երգի մրցույթ**, **շարադրությունների մրցույթ**, **վարսավիրների** կամ **խոհարարների մրցույթ**, **թափուր աշխատատեղը համալրելու մրցույթ** և այլն:

Ուրեմն ինչպե՞ս կողմնորոշվենք: Հիմնականում այսպես. մարզական կյանքում գործածել **մրցում** բառը, արվեստում, կրթության և գիտության մեջ՝ **մրցույթ**, իսկ **մրցություն**-ն ընդհանուր՝ չտարբերակված գործածություն ունի: Չմոռանանք, որ սա կողմնորոշիչ խորհուրդ է:

4. ՆՈՐՈՒԹՅՈՒՆ – ՆՈՐՈՒՅԹ

Նորություն-ը ամեն հայի ծանոթ շա՛տ հին բառ է, որով անվանում են նոր բանը, նոր վիճակը: Վերջին տաս-

նամյակներում այն գործածվում է նաև «նոր լուր» իմաստով, որ սովորական է ռուսերենում, անգլերենում և ուրիշ լեզուներում:

Նորույթ-ը համեմատաբար նոր բառ է, սրանով կոչում են գիտության, տեխնիկայի, արտադրության, նաև մշակույթի բնագավառների նորությունը, նոր բանը՝ իրողությունը՝ երևույթը: Այս բառով է ժամանակին թարգմանվել ռուսերեն новинка-ն:

Պետք չէ **նորություն** բառի փոխարեն **նորույթ** ասել:

5. ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆ – ՍՈՎՈՐՈՒՅԹ

Սովորություն-ը բազմիմաստ է, նշանակել և նշանակում է «մի բանի վարժվելը, ընտելանալը», «այս կամ այն ժողովրդի մեջ հնուց պահպանված և կենցաղում արմատացած ընդհանուր կարգ, ավանդաբար հաստատված կանոն», նաև «մեկի համար կյանքի որոշ շրջանում սովորական դարձած գործելակերպ, նիստուկաց, վարվելաձև, բնավորություն»:

Այս բառի «իմաստային բեռի» մի մասն իր վրա է վերցրել **սովորույթ**-ը: **Սովորույթ** նշանակում է «ընդունված՝ հանրաձանաչ կարգ, հասարակական վարքուբարքի ավանդաբար հաստատված կանոն»:

Մի կես դար առաջ այս բառերը հստակ տարբերակված չէին: Դրա համար էլ արդի հայերենի բացատրական նշանավոր բառարանում **սովորույթ** բառի դիմաց գրված է. «Նույնն է՝ **Սովորություն**»: Բայց մեր օրերում իմաստի առումով այս բառերը զգալիորեն տարբերակված են: Ուշադիր կարդանք. «Մենք պահպանել ենք մեր ժողովրդի **սովորույթները**» և «Արտակը ամեն առավոտ վազելու **սովորություն** ունի»: Տարբերությունը զգացի՞ք. սովորույթ ունենում է հանրությունը, սովորություն՝ անհատը:

6. ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ – ՀԱՆՐՈՒՅԹ

Հանրություն բառի համարժեքը **հասարակություն**-ն է, գործողությամբ կամ այլ ընդհանրությամբ միավորված մարդկանց խումբը՝ բազմությունը, պարզ լեզվով ասած՝ ժողովուրդը:

Հանրույթ բառը բացատրական բառարանում բնութագրվել է իբրև «հազվադեպ» և բացատրվել որպես «հանրություն»: Պարզ է, որ տասնամյակների ընթացքում փոխվել է ինչպես ուրիշ, այնպես էլ այս բառի իմաստը: Եվ հանրույթն այսօր ընկալվում է որպես հասարակական, տնտեսական և մշակութային կյանքի ընդհանրությամբ բնորոշվող մարդկանց խումբ: Օրինակ՝ **գիտական հանրույթ**:

Հստակեցնելու համար ասենք, որ հանրությունն ընդհանուր է, հանրույթը՝ մասնավոր, հանրությունն ավելի մեծ ընդգրկում ունի, հանրույթը՝ փոքր:

7. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ – ՏԵՂԵԿՈՒՅԹ

Տեղեկություն-ը բոլորին հայտնի բառ է և նշանակում է՝ «լուր, ծանուցում, հաղորդում»: Վերջերս նրա մրցակիցն է դարձել **տեղեկատվություն** բառը, որը տեղեկություն տալն է: Շատերը շփոթում են դրանք և **տեղեկություն** բառի փոխարեն անընդհատ գործածում **տեղեկատվություն**-ը: Այսպես. «Տեղեկատվություն կա, որ հանդիպումը հետաձգվել է», այնինչ ճիշտը սա է. «**Տեղեկություն** կա (**տեղեկություններ** կան), որ հանդիպումը հետաձգվել է»: Կամ էլ ասում են. «Խնդրում ենք տրամադրել այսինչ տեղեկատվությունը»: Այս դեպքում ճիշտ է կիրառել **տեղեկություն** բառը. «Խնդրում ենք տրամադրել այսինչ տեղեկությունը»: Իսկ **տեղեկատվություն**-ը ճիշտ է գործածել այլ դեպքերում, ինչպես՝ **տեղեկատվության** [տեղեկություն տվող] միջոցներ, **տեղեկատվության** [տեղեկություն տալու՝ ստանալու] ազատություն և այլն:

Տեղեկություն բառը վաղուց ունեինք, երբ արդի ժամանակներում ստեղծվեց **տեղեկույթ** բառը, որ նշանակում

է «տեղեկությունը գիտության համակարգում»: Այսինքն՝ **տեղեկույթ**-ը գիտաբառ է:

Տեղեկատվություն բառն էլ դրանից հետո ձեռք է բերել նոր՝ «տեղեկույթի հաղորդում» իմաստը:

Այստեղ էլ **տեղեկություն**-ն ընդհանուր իմաստ ունի, իսկ **տեղեկույթ**-ը՝ մասնավոր:

25. *ԱԿԱՄԱՅԻՑ* ԵՎ ՄՅՈՒՍ ԲԱՌԵՐԻ ՄԱՍԻՆ. ԸՆԴՈՒՆԵ՞Լ, ԹԵ՞ ՄԵՐԺԵԼ

(6 բառ)

1. ԱԿԱՄԱՅԻՑ

Հայերենի որոշ մասնագետներ ասում են, թե **ակամայից** բառ չկա, որ իբր գրական հայերենն ունի միայն **ակամա**, իսկ **ակամայից**-ը սխալ ձև է, գրական լեզվի համար լիովին մերժելի: Հայերենի այդ մասնագետներն իրենց աշակերտներին և ուսանողներին հորդորում են, իսկ ոմանք՝ կտրականապես պահանջում բոլորովին հրաժարվել **ակամայից** բառի գործածությունից: Նրանց հիմնական պատճառաբանությունը սա է. **ակամա**-ն մակբայ է, ինչպե՞ս կարող է քերականական ձևափոխության ենթարկվել:

Ասենք, որ գրաբարում **ակամայ** բառը ածական է, օրինաչափորեն հոլովվել է, և **ակամայից**-ն ընդամենը հոգնակի սեռական-տրականի գրաբարյան ձևն է, որը կայունացել ու բառի արժեք է ձեռք բերել: Համարժեք է **ակամա** բառին:

Ակամայից-ը գլխաբառ է դարձրել հայերենի ընդարձակ բացատրական բառարաններում: Մի դեպքում հղում է արվել **ակամա** բառին, մյուս դեպքում գլխաբառ է դարձել **ակամայաբար**, **ակամայորեն** բառերի հետ: Սա նրա ընդունելի լինելու վկայություններից է: Բառը զետեղվել է նաև թարգմանական բառարաններում:

Եվ ամենակարևորը՝ **ակամայից**-ը սովորական է հայ դասականների համար: Ահա այսպես.

Րաֆֆի. «Մասիսյանը **ակամայից** հայտնեց իր հոժարությունը»:
Մուրացան. «Երբ նա կանգ առավ ատյանի առաջ, թագավորն **ակամայից** հառեց աչքերը նրա վրա»:
Նար-Դոս. «Եվ նա **ակամայից** մտածության մեջ ընկավ»:

XX դարի և ժամանակակից հեղինակներն էլ վստահ և հաճախ գործածում են այս բառը: Այսպես.
Վ. Անանյան. «Երբ լսեցին դղրդոցը, **ակամայից** ահ ընկավ սրտները»:
Ս. Կապուտիկյան. «**Ակամայից** ինքդ էլ սկսում ես լարվել»:
Գ. Խանջյան. «Աչքերս **ակամայից** շանը փնտրեցին»:

Եզրակացություն և հորդոր. առանց վարանելու և մեկ վայրկյան անգամ չկասկածելով՝ գործածե՛նք **ակամայից** բառը և դադարեցնենք հայերեն ընդունելի բառի դեմ հանիրավի (և անպտուղ) պայքարը:

2. ԻՍԿԱԿԱՆԻՑ

Խոսակցական հայերենին բնորոշ բառ է, գրական համարժեքներն են **իսկապես**, **իրոք**, **ճիշտ**: **Իսկականից**-ը ժողովրդական խոսքից թափանցել է գեղարվեստական գրականություն (տեսնում ենք հատկապես հերոսների խոսքում, և դա բնական է): Մամուլում ավելի հաճախադեպ է:

3. ՍՏԻՑ

Սա էլ **իսկականից**-ի պես ժողովրդական խոսքին բնորոշ բառ է. արմատն է **սուտ**-ը: **Ստից** նշանակում է «սուտ կերպով, ոչ անկեղծ», «ոչ իսկական»: Սահմանափակ հանդիպում է նաև գեղարվեստական խոսքում: Հայտնի է Պ. Սևակի «Մարդ էլ կա, մարդ էլ» բանաստեղծությունը.

Գիտի, թե ո՛ւմ հետ և ո՛ւր է գնում.
Ո՛ւմ մեռելին է անարցունք լալիս,
Ո՛ւմ խոսքի վրա **ստից** ծիծաղում...

4. ՀԱՆՊԱՏՐԱՍՏԻՑ, ավանդական ուղղագրությամբ՝ ՅԱՆՊԱՏՐԱՍՏԻՑ

Բառի կազմությունն այսպիսին է՝ **ի** նախդիր, որը ձայնավորից առաջ դարձել է **յ** (ուղղագրության հայաստանյան փոփոխությունից հետո գրվում է **հ**), **ան**- ժխտական նախածանց, **պատրաստ** արմատ և -**ից** վերջնամասնիկ:

Հանպատրաստից նշանակում է «առանց նախապես պատրաստված լինելու, առանց նախապատրաստվելու՝ պատրաստության»: Օրինակ՝ «Հանպատրաստից ելույթ ունեցավ»: Բառի սկզբից և վերջից որևէ հնչյուն չպիտի զեղչել, ինչպես անում են ոմանք: Ուստի կա՛մ **հանպատրաստից**, կա՛մ **անպատրաստ**, մյուս տարբերակներն ընդունելի չեն (պարզապես սխալ է, օրինակ, «*հանպատրաստի*» ասելը):

5. ~~ԿԱՄԱՑԻՑ~~

Կամաց բառը բազմիմաստ է, նշանակում է «ոչ արագ, դանդաղ», «հանգիստ, մեղմ», «ցածրաձայն, ցածր», ժողովրդական խոսքում՝ «զգույշ», խոսակցական լեզվում՝ «աստիճանաբար»: Ոմանք այս **կամաց** բառը վերջին՝ «աստիճանաբար» իմաստով խոսակցական լեզվում երկարացնում ու դարձնում են «կամացից»: Իզուր. կարճ տարբերակը՝ **կամաց**-ը, ամբողջովին բավարարում է այդ իմաստն արտահայտելու համար: Նույն դերը կատարում է նաև **կամաց-կամաց** կրկնավորը: Հենց սա էլ հաստատում է, որ «կամացից» ձևի –**ից**-ն ավելորդ է:

6. ~~ԻՐՈՔԻՑ~~

Իրոք բառը ձևափոխությունների չի ենթարկվում. բառն արդեն իսկ քերականական ձևի քարացումից է առաջ եկել (գրաբարյան շրջանում):

«Իրոքից»-ը բոլորովին սխալ և իրո՛ք մերժելի մի ձև է, որը կազմվել է –**ից** մասնիկ ունեցող մյուս բառերի նմանությամբ:

26. ՏԱՌԱՅԻՆ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(11 դեպք)

Ապրում ենք հապավումների դարաշրջանում: Աշխարհի բոլոր զարգացած լեզուներին, այդ թվում և հայերենին բնորոշ է տառային հապավումների առատությունը: Անընդհատ նորերն են ստեղծվում և գործածվում մամուլում, փաստաթղթերում, այլուր: Տառային հապավումները հասկանալու համար նույնիսկ բառարաններ են կազմվել:

Տառային հապավումների գործածության ժամանակ տարատեսակ դժվարություններ են առաջանում: Անդրադառնանք դրանց:

1. Տառային հապավումների կազմիչ տառերը սովորաբար գրվում են մեծատառ, ինչպես՝ **ՄԱԿ** (Միավորված ազգերի կազմակերպություն), *ՀՀ* (Հայաստանի Հանրապետություն), **ԱԺ** (Ազգային ժողով), **ԱԱՀ** (ավելացված արժեքի հարկ): Բայց կան բացառություններ: Ամենատարածվածը **բուհ** (բարձրագույն ուսումնական հաստատություն) հապավումն է: Եվ քանի որ սովորական բառի ձև է ստացել, պիտի գրել **բուհը**, **բուհի**, **բուհում**, **բուհեր**, **բուհական**... Թերթերից մեկի մի հրապարակման մեջ վերջերս բազմիցս տպվել էր *բուհ-երի*, *բուհ-երը* և այլն, որոնք անշուշտ սխալ են: Գծիկով գրելու դեպքում տառերը մեծատառ պիտի լինեն՝ **ԲՈՒՀ-ի**, **ԲՈՒՀ-ում** և այլն:

2. Լավ կլինի ոչ հանրահայտ հապավումները հոդվածում կամ հեռուստատեսային հաղորդման մեջ նախ բացված տալ (ասել), որ ընթերցողը (կամ լսողը) հասկանա, թե ինչի՛ մասին է խոսքը: Թե չէ մարդ որտեղի՞ց իմանա, օրինակ, ի՞նչ է **ՇՄԱԳ**-ը (շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում):

3. Հաճախ տառային հապավումները բացված տալն ուղղակի անհրաժեշտություն է, քանի որ տառային նույն կազմով ստեղծված հապավումները թյուրիմացությունների տեղիք կարող են տալ: Օրինակ՝ ունենք մի քանի **ԱՀԿ**: Մեկը Առողջապահության համաշխարհային կազմակերպությունն է, մյուսը Առևտրի համաշխարհային կազմակերպությունն է, երրորդը՝ ավտոմատ հեռախոսային կայանը (հեռախոսա-կայան), հաջորդը՝ Ամերիկայի հրեական կոմիտեն և այլն:

4. Շատերը դժվարություն են ունենում տառային հապավումը կապակցությունների մեջ հատկացուցչի պաշտոնով գոր-ծածելիս: Ո՞րն ընտրել՝ *ԳԴՀ* (Գերմանիայի Դաշնային Հանրապետության) *կանցլե՞ր*, թե՞ *ԳԴՀ-ի կանցլեր*: Խառնա-շփոթը վերացնելու նպատակով ժամանակին կանոնակարգող որոշում է ընդունվել. այն տառային հապավումները, որոնց բաղադրիչ տառերն արտասանվում են առանձին-առանձին (յուրաքանչյուր բաղաձայնից հետո արտասանվող, բայց չգրվող **ը**-ով), հատկացուցչի պաշտոնում գործածել ուղի՛ղ ձևով, առանց վերջավորության: Ուստի **ԳԴՀ կանցլեր**, **ՀՀ Վճռաբեկ դատարան**, **ՌԴ** (Ռուսաստանի Դաշնության) **նախագահ** և այլն, բայց **ՄԱԿ-ի ներկայացուցիչ**, **ՄՕԿ-ի նախագահ**, քանի որ իրենց կազմում ձայնավոր ունեն և բառի նման են:

5. Իսկ ի՞նչ անել ձայնավորով վերջացող տառային հապավումների սեռական հոլովաձևը կազմելիս, յ գրե՞լ, թե՞ ոչ: Ո՛չ, չեն գրում, գծիկը թույլ չի տալիս: Օրինակ՝ **ՈՄԱ** (Ողջ մնալու արվեստ) – **ՈՄԱ-ի դասընթաց**:

6. Դժվարություն է առաջանում տառային հապավման կողքին **ը** կամ **ն** հոդը դնելիս: Ինչպե՞ս կողմնորոշվել: Օրինակ՝ ՌՀՄ (Ռուսաստանի հայերի միություն). *ՌՀՄ-ն*, թե՞ *ՌՀՄ-ը*: Հոդն ընտրելիս պիտի հետևենք արտասանությանը՝ *ՌըՀըՄը*. ձայնավորից հետո **ն** է դրվում՝ **ՌՀՄ-ն** : Սա է ճիշտ գրությունը

(կարդացվում է *ըըհըմըն*)։ Ոմանք հապավումը մտովի բացում են և գրում *ՌՀՄ-ը* (իբր միությունը), որ հապավման դեպքում ճիշտ չէ (կլինի ռըհըմըԸ)։

7. Փոխառյալ հապավումների բառավերջում օտարալեզու O-ի դիմաց հայերեն գրվում է O (ոչ թե *Ո*), ինչպես՝ ՆԱՏO «Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն» (NATO – անգլ. North Atlantic Treaty Organization), ՅՈՒՆԵՍԿO «ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն» (UNESCO – անգլ. United Nations Educational Scientific Organization)։

Այդպես էլ Է-ն, ինչպես՝ ՄԱԳԱՏԷ «Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն» (ռուս. МАГАТЭ – Международное агенство по атомной энергии)։

8. Այժմ տառային հապավումների կազմիչ տառերից հետո կետ չի դրվում, ինչպես՝ ՀԲԸՄ – Հայ բարեգործական ընդհանուր միություն, ՀՎՀՀ – հարկ վճարողի հաշվառման համար։ Արևմտահայերենում ավանդույթի ուժով հաճախ գրվում է այսպես՝ Հ.Յ.Դ. – Հայ յեղափոխական դաշնակցութիւն։

9. Արևմտահայերենում տառային հապավումները կարդում են տառանուններով։ Նույն Հ.Յ.Դ.-ն՝ **Հոյիդա**, (Հ.Յ.Դ.) ԿԿ-ն (կենտրոնական կոմիտե)՝ **Կենկեն**, **ՀՄԸՄ – Հայ մարմնակրթական ընդհանուր միությունը՝ Հոմենըթմեն**։ Արևմտահայերը զարմանում են արևելահայերի ը-երով արտասանության վրա (ինչպես՝ ՀՀՇ - հըհըշը)։ Բայց այդպիսի ավանդույթ է ձևավորվել։

10. Տառային հապավումը չպիտի գրել կոտորակի գծով, ինչպես՝ *Հ/Զ*։ Ճիշտը սա է՝ ՀԶ (համատեղ ձեռնարկություն)։

11. Տառային հապավումները չեն տողադարձվում։ Անգամ եռավանկ ՅՈՒՆԻՍԵՖ-ը (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ)։

27. ԵՐԲ ԱՐԵՎԵԼԱՀԱՅՆ ՈՒ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԸ ՉԵՆ ՀԱՍԿԱՆՈՒՄ ԻՐԱՐ

(6 դեպք)

Արևմտահայն ու արևելահայը սովորաբար հասկանում են իրար, քանի որ արևմտահայերենի և արևելահայերենի բառապաշարը մեծ մասամբ ընդհանուր է: Միայն որոշ բառեր կան, որոնք հայերենի գրական երկու տարբերակներում իրարից բավական տարբեր իմաստներ ունեն: Դրանք հաճախ միմյանց չհասկանալու պատճառ են դառնում կամ զավեշտալի իրավիճակներ առաջացնում:

Անդրադառնանք այդպիսի 6 բառերի:

1. ՄԱԿԱՆՈՒՆ

Արևելահայերեն խոսողներին **մականուն** բառը քաջ ծանոթ է. նշանակում է «մեկին տրված վերադիր անուն» (մականունավոր շատերի գիտենք): Արևմտահայերենում **մականուն** բառն ունի «ազգանուն» իմաստը. սփյուռքի հայկական վարժարաններում սաները տետրերի վրա գրում են իրենց անուն-մականունները:

➢ Ամերիկայից եկած արևմտահայը հարցնում է հայաստանցի երիտասարդին.

\- Մականունդ ի՞նչ է:

\- Չաղ:

Պատասխանը շշմեցնում է մեր հայրենակցին. մի՞թե հայկական այդպիսի **մականուն** («ազգանուն») կա: Կողքից հուշում են երիտասարդի ազգանունը՝ Սարգսյան, և ամեն ինչ տեղն է ընկնում:

2. ՁԳԵԼ

Արևմտահայերենում **ձգել** նշանակում է «թողնել, լքել, արձակել», արևելահայերենում՝ «պրկել, պնդացնել, ամրացնել», «քաշել, ձիգ տալ որոշակի ուղղությամբ» և այլն:

Հիմնական իմաստների այս տարբերությունը հաճախ զավեշտալի իրավիճակների պատճառ է դառնում:

➢ Դպրանոցի հայաստանցի ուսանողը օգնում է սփյուռքահայ սրբազանին հագնելու ծիսական հանդերձանքը: Գոտին է կապում: Երբ արդեն բավական ձիգ, հարմար է լինում, սրբազանն ասում է՝ ձգէ՛, այսինքն՝ թող, բավական է: Հայաստանցի ուսանողը մտածում է, որ թույլ է, է՛լ ավելի է ձգում: Սրբազանը կրկնում է՝ ձգէ՛: Ուսանողն այնքան է ձգում, որ արդեն ցավ է պատճառում: Զայրացած սրբազանը, երբ տեսնում է, որ խոսքը չի հասկացվում, ձեռքով արգելում է ձգելը:

3. ՊԱՀԱՐԱՆ

Արևելահայերենում **պահարան** բառը հիմնական իմաստով կահույքի մաս է նշանակում, պահարանի տարբեր տեսակներ կան՝ գրապահարան, սպասքապահարան, զգեստապահարան: Հայաստանում **պահարան** բառը «ծրար» իմաստով շա՛տ վաղուց չի գործածվում, հնացած-մոռացված է, մինչդեռ արևմտահայ սփյուռքում այդ իմաստով գործածական է և երբեմն թյուրիմացությունների պատճառ է դառնում:

➢ Բեյրութցի մի հայ գալիս է Երևան՝ հետը բերելով երկու ծրար, որոնք պիտի հանձնի հասցեատիրոջը: Զանգում է երևանցուն, թե երկու պահարան ունի հանձնելիք: Արևմտահայերենից լուր չունեցող երևանցին բեռնատար մեքենայով գնում է «պահարանների» հետևից ու շատ է զարմանում, երբ մարդը թևերը թափ տալով մոտենում և գրպանից ընդամենը երկու ծրար է հանում:

4. ՎԱՅՐԿՅԱՆ

Արևելահայերենում վայրկյանը րոպեի 1/60-րդ մասն է: **Վայրկյան** / **վայրկեան** բառն արևմտահայերենում հիմնական իմաստով նշանակում է «րոպե», այսինքն՝ արևմտահայի համար վայրկյանը ժամվա 1/60-րդ մասն է:

➢ Բազմաթիվ ժամադրություններ ու պայմանավորվածություններ են խափանվել բառի իմաստային այսպիսի բաշխման պատճառով: Արևմտահայի 40 վայրկյանը հայաստանցու համար վաղանցիկ մի պահ է, այնինչ արևմտահայի համար 40 երկար ու ձիգ րոպեներ են...

Երևանում տաքսու վարորդը զանգահարում է արևմտահայ պատվիրատուին և ասում, որ մի 30 վայրկյանից տեղում կլինի: Պատվիրատուն նեղվում է՝ ասելով, որ այդքան չի կարող սպասել, շտապում է և ... չեղարկում է պատվերը:

Իհարկե, չմոռանանք, որ արևմտահայերենում **վայրկյան** բառը փոխաբերաբար նաև «ակնթարթային ժամանակամիջոց» է նշանակում:

Կարող է հարց ծագել, եթե արևմտահայերենում **վայրկյան**-ը «րոպե» է նշանակում, ապա ո՞ր բառով է արտահայտվում «վայրկյան» իմաստը: Պատասխան՝ **երկվայրկյան**:

5. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Գործողություն բառի շատ իմաստներ ընդհանուր են հայերենի գրական երկու տարբերակներում: Բայց արևմտահայերենում **գործողություն** բառը գործածվում է մի իմաստով, որ չկա արևելահայերենում՝ «մարմնի հիվանդ մասի հատում՝ հանում. վիրահատություն» (ֆրանսերեն opération, ռուսերեն операция):

➢ Եվ հայաստանցին զուր է տարակուսում և հազար ու մի բան մտածում, երբ լսում է, որ «Զաբելին գործողություն ըրին...»:

6. ՈՉԻՆՉ

Ոչինչ բառը տարբեր իմաստներ ունի՝ «ոչ մի բան», «անարժեք, անկարևոր», «չնչին, աննշան», «որևէ գոյության՝ էության բացակայություն՝ անգոյություն»: Այս ամենը հայերենի երկու տարբերակների համար ընդհանուր է:

➢ Երևանում արևմտահայը հարցնում է տեղացուն.

- Ինչպե՞ս եք:

Պատասխանը, որ Հայաստանում ապրողների համար սովորական է, շշմեցնում է հարց տվողին.

- Ոչինչ:

Ինչպե՞ս թե «ոչինչ», ինչո՞ւ ոչինչ, ինչի՞ բացակայության կամ չգոյության մասին է խոսքը... Անհասկանալի է:

Նա սպասում էր այսպիսի մի պատասխանի՝ **լավ**, **շատ լավ**, **գերազանց**, **մտահոգ եմ**, **առողջական խնդիրներ ունեմ** և այլն, և այլն:

Ոչինչ բառի այս կիրառությունը բառարանային բացատրություն էլ ունի՝ «ցույց է տալիս գոհունակություն, մի բանի բավարար լինելը»: Այսինքն՝ «օրինականացվել է»: Մնում է, որ արևմտահայ մեր հայրենակիցը չտագնապի, մտահոգվի կամ զարմանա, երբ լսի «ինչպե՞ս եք» հարցի հայաստանյան «ոչինչ» պատասխանը:

Թերևս պիտի ջանանք սահմանափակել բառի այս կիրառությունը, որն օտար լեզվի ազդեցության հետևանք է:

28. ԱՐԵՎԵԼԱՀԱՅՆ ՈՒ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԸ ՊԵՏՔ Է ՀԱՍԿԱՆԱՆ ԻՐԱՐ

(3 դեպք)

1. ԱՄՍԱԿԱՆ

Այս բառը հայաստանյան բացատրական բառարաններում տրված է բազմաթիվ իմաստներով՝ «ամսվան հատուկ, ամսվա», «մեկ ամսվա տևողություն ունեցող», «ամեն ամիս, ամսեամիս», ինչպես նաև «ամսական ռոճիկ՝ վարձատրություն» և «արգանդային ամենամսյա արյունահոսություն. դաշտան»: Ակնհայտ է, որ այս վերջին իմաստները ձևավորվել են մեկ ամսվա ժամանակային ընդգրկում ունենալու հիմքով:

Բառարաններից մեկում **ամսական** բառի «ամսական ռոճիկ՝ վարձատրություն» իմաստի կողքին նշված է «հնացած»: Եվ իրոք, Հայաստանում եթե առաջ ավելի շատ **ռոճիկ** էին ասում, ապա այսօր գրեթե համատարած **աշխատավարձ** բառն է գործածվում, իսկ **ամսական**-ը՝ ոչ:

Բայց ահա արևմտահայերենում **ամսական** բառն «աշխատավարձ» իմաստով հնացած չէ, գործուն է: Կարելի է լսել. «Ամսականը տակաւին չէ ստացեր»:

➢ Հայաստանում աշխատանքի անցած արևմտահայերենախոս կինը որոշ ժամանակ անց դիմում է արևելահայերենախոս տնօրենին. «Պարո՜ն, ամսականիս խնդիրը պիտի ուզէի քննարկել»: Ապշահար տնօրենը պատասխանում է. «Տիկի՜ն, այդ հարցը Ձեր ամուսնո՛ւ հետ քննարկեք»:

2. ԱԽՈՅԱՆ

Շատ հին բառ է, վկայվել է 5-րդ դարից, նշանակել է «քաջ, նախահարձակ կտրիճ», նույնիսկ «հաղթանակ»: Գրաբարում գրվել է **ախոյեան** և **ախոյան** ձևերով: Դարերի ընթացքում բառը նոր իմաստներ է ձեռք բերել:

Արևմտահայերենի բառարանները **ախոյեան**-ը բացատրում են այսպես՝ «մրցանակաւոր մարզիկ» կամ «մրցումին մէջ առաջին», նաև «մրցակից, թշնամի, հակառակորդ»:

Արդի հայերենի հայաստանյան բացատրական բառարաններում **ախոյան** բառը համակողմանի ներկայացվում է այսպես՝ «թշնամի, հակառակորդ», «մրցակից», արևմտահայերեն «չեմպիոն», կրկին արևմտահայերեն (փոխաբերաբար) «մարտիկ, մի բանի համար մարտնչող մարդ», հին՝ «նախահարձակ կռվող» և այլն:

Ակնհայտ է էական զանազանությունը: Եթե Հայաստանում օտար բառի կիրառմամբ ասում և գրում են **ծանրամարտի չեմպիոն**, ապա արևմտահայ սփյուռքում՝ **ծանրամարտի ախոյեան**: Այս վերջինից էլ օրինաչափորեն

կազմվել է **ախոյեանութիւն** «առաջնության համար տարվող պայքար» բառը (Հայաստանում՝ **չեմպիոնատ**. արևելահայերենում **ախոյանություն**-ը ախոյան լինելն է կամ ախոյանի արարքը՝վերաբերմունքը):

Պարզ է, որ այսուհետև չենք տարակուսի՝ լսելով, որ մեր հայրենակիցը դարձել է **ճատրակի ախոյեան**: Եթե, իհարկե, գիտենք, որ **ճատրակ**-ը **շախմատ**-ն է:

3. ՊԱՀ

➢ Գևորգյան ճեմարանում դասի եմ: Հանկարծ մեկը, որ Երուսաղեմից էր եկել, դուռը բացեց և հարցրեց.
- Ներեցե՛ք, ի՞նչ պահ է:
Պատասխանեցի՝ հայերենի:
Ուսանողներս զարմացած ինձ նայեցին:

Պահ բառը ընդհանուր հայերեն է և գրական հայերենի երկու տարբերակներում՝ արևելահայերենում և արևմտահայերենում, նշանակում է «կարճատև ժամանակ, ակնթարթ, վայրկյան, րոպե», «որևէ բանի տեղի ունենալու՝ վրա հասնելու՝ պատահելու ժամանակը», «որևէ դեպքի՝ իրադարձության կամ գործողության զուգադիպող ժամանակը» և այլն:

Միայն «դասաժամ» իմաստն է, որ տարբեր է: **Պահ**-ը «դասաժամ» իմաստով գործածվում է արևմտահայերենում: Ուստի երբ արևմտահայն ասի, որ **վեց պահ ունի**, արևելահայը պիտի հասկանա «վեց դաս կամ դասաժամ»:

Հայերէնի պահուն ինչե՞ր կ'ըլլան:

Եկել է իրար լիարժեք հասկանալու պահը:

29. *ՈՒ* ՀՈԼՈՎՄԱՆ ԲԱՌԵՐԻ ՄԱՍԻՆ

(7 դեպք)

Արևելահայերեն խոսողները գիտեն, որ **ի**–ով վերջացող գրեթե բոլոր բառերը ենթարկվում են **ու** հոլովման: Այսպես՝ **այգի – այգու**, **գինի – գինու**, **եկեղեցի – եկեղեցու**, **թշնամի – թշնամու**, **ոսկի – ոսկու**, **որդի – որդու**: Առանձնակի դժվարություն չկա: **Ու** են ստանում նաև բառավերջում **ի** չունեցող մի քանի բառեր:

Հենց սկզբից ասենք, որ արևմտահայերենում պատկերն այլ է. **այգի – այգիի, գինի - գինիի** և այլն:

Կանդրադառնանք արևելահայերենի այնպիսի իրողությունների, որոնք ինչ-որ առանձնահատկություն կամ զուգաձևություն ունեն, մտորելու առիթ են տալիս և այլն: Առանձնացրել ենք 7 դեպք:

1. Գործիականում բառավերջի **ի**-ն հիմնականում ընկնում է, ինչպես՝ **հոգով**, **ոսկով**: Կամ էլ միշտ պահպանվում է, ինչպես՝ **գերանդիով**, **մեղեդիով**, **պատանիով**, **ունելիով**, **օղիով**:

Մի շարք բառերի դեպքում **ի**-ն կարող է պահպանվել, կարող է և ընկնել. զուգաձևություն է, ճիշտ ու սխալի խնդիր չկա: Այսպես՝ **ուղիով – ուղով**, **տաքսիով – տաքսով**, **գինիով – գինով** (գինով կուտվի): Նշենք նաև, որ **գինով**-ը բառի արժեք ունի և նշանակում է «գինուց հարբած, մի քիչ խմած»:

2. Սեռականում **ու** է ստանում անորոշ դերբայը՝ **սիրել – սիրելու**, **խաղալ – խաղալու**: Օրինակ՝ «Քարեր **նետելու** և քարերը **հավաքելու** ժամանակը»:

Բայց երբ –**ելի** ածանցով բառեր են, ապա սրանց հետ չշփոթելու նպատակով սեռականում **ի** ենք հավելում: Այսպես՝ **սիրելի – սիրելիի, պաշտելի – պաշտելիի** (ոչ թե **սիրելու, պաշտելու**):

Ասենք նաև, որ այստեղ էլ են զուգաձևություններ պատահում: Օրինակ՝ **ածելի – ածելու – ածելիի**:

3. **Տարի** բառը **ի**-ով է վերջանում, բայց քանի որ ժամանականիշ է, սեռականում **վա** է ստանում՝ **տարվա** (հմմտ. ժամանականիշ ուրիշ բառերի հետ՝ **օրվա**, **շաբաթվա**, **ամսվա**). **տարու** ձևը հնացած է: Բայց հոլովվելիս **ու**-ն մեջտեղ է գալիս. այսպես՝ **տարուց** կամ **տարվանից**:

4. **Աստված** բառի սեռական հոլովը ժամանակակից հայերենում լինում է **Աստծու** (**աստծու**) կամ **Աստծո** (**աստծո**): Զուգաձևություն է, բայց կարծեք հաղթում է **Աստծու** ձևը (օրինակ՝ **Աստծու սիրուն**, **Աստծու սերը**), որից էլ կազմվում է **Աստծուց** (Օրինակ՝ «Այդ ձիրքը Աստծուց է»):
Գրաբարում **Աստուծոյ** է, որ կարդացվում է առանց յ-ի՝ **Աստուծո** (նոր ուղղագրությամբ այդպես ենք գրում): Սրան կարող ենք հանդիպել հատկապես հոգևորականների գրավոր և բանավոր խոսքում:

5. Երկնքից իջնենք երկիր ու քննարկենք **մարդ** բառը: Պարզից էլ պարզ է՝ **մարդ – մարդու**: Բայց դասական գրականության մեջ կարդում ենք և ժողովրդից լսում **մարդի գնալ**, որ նույնն է, ինչ **մարդու գնալ**-ը, և նշանակում «ամուսնանալ» (աղջկա մասին):

> **Գնացի մարդի**,
> Ունեցա որդի,
> Գդակը պոպոզ,
> Անունը Կիկոս... (Հովհ. Թումանյան, «Կիկոսի մահը»):

Մարդի ձևը խոսակցական է, բարբառային:

6. **Անկողին** բառից կազմվում է **անկողնու** ձևը, որ շատ տարածված է (անկողնու պարագաներ), բայց կա նաև **անկողնի**: Դարձյալ զուգաձևություն է: Ահավասիկ՝ «Պառկեց քարե

անկողնու վրա» (Ա. Բակունց) և «Նստած էր իր տիկնոջ երեխայի փոքրիկ **անկողնի մոտ**» (Րաֆֆի):

Մյուս կողմից էլ համեմատենք **նստեց անկողնին** և **վեր կացավ անկողնուց** կապակցությունները. մի դեպքում **ի** ենք տեսնում, մյուսում **ու** է:

7. Հայերենի բարձրագույն խորհուրդը **ի**-ով վերջացող **Լոռի** և **Գյումրի** տեղանունների մասին ժամանակին որոշում է կայացրել. գրական լեզվում դրանց սեռականը կազմել **ու**-ով՝ **Լոռի – Լոռու**, **Գյումրի – Գյումրու**: Նպատակը հստակ է. որպեսզի պաշտոնական խոսքում (ձևաթղթեր, կնիքներ, ցուցանակներ, տեղեկատուներ և այլն) միօրինակություն հաստատվի: Այսպես. **Լոռու մարզ** և վերջ (ոչ թե նաև *Լոռիի մարզ* կամ *Լոռվա մարզ*): Այդպես էլ՝ **Գյումրու քաղաքապետարան**: Նույն ձևով էլ, բնականաբար, **Մեղրի – Մեղրու**, **Վեդի – Վեդու, Արզնի - Արզնու** և այլն:

Բայց չմոռանանք, որ լեզվում **Լոռու** ձևին զուգահեռ շարունակում են ազատորեն գործածվել **Լոռվա** և **Լոռիի** ձևերը (Լոռվա քաջեր, Լոռիի կողմերը), **Գյումրու** ձևին ուղղակի «հետապնդում է» **Գյումրիի**-ն, ժողովրդական խոսքում պահպանվում է **Գյումրվա** ձևը (Գյումրվա տրնգի):

Շուշի քաղաքանունից այժմ կազմում ենք **Շուշիի** ձևը (Շուշիի հրդեհը), երբեմն՝ **Շուշվա** (Շուշվա կոլոլակ): **Շուշու** ձևը մոռացվել է:

30. *ՎԱ / Ի, ՈՒ, ԱՆ* ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(14 դեպք)

Հայերեն խոսողները ժամանակ ցույց տվող բառ գործածելիս երկար չեն մտածում. ինքնաբերաբար ավելացնում են **–վա** մասնիկը՝ **ժամ** - **ժամվա**, **օր** – **օրվա**, **շաբաթ** – **շաբաթվա**, **տարի** – **տարվա**, **ցերեկ** – **ցերեկվա**, **գիշեր** –

գիշերվա, **առավոտ- առավոտվա**, **ամառ – ամառվա** և այլն: Եթե այսքանով վերջանար, ապա խնդրին անդրադառնալու անհրաժեշտություն չէր լինի: Բայց ասելիք կա:

1. Ժամանականիշ են նաև **վայրկյան**, **րոպե**, **դար** բառերը, բայց սրանք **–վա** չեն ստանում, այլ **ի**՝ **վայրկյանի**, **րոպեի**, **դարի**: Որոշ մարդկանց խոսքում լսվող *րոպեյվա* ձևն արտառոց է և սխալ: Հասկանալի է, որ համանման մյուս բառերի օրինակով են այդպես ասում, բայց ականջ է սղոցում: Գրավոր խոսքում էլ ակնահաճո չէ, խիստ անսովոր տեսք ունի. «Թելի միջով ինչպե՞ս կարող է լույս անցնել ... թելեր մի **րոպեյվա** մեջ կվառվե՛ն» (Գ. Մահարի):

2. Անցյալում **դարի** ձևին զուգահեռ գեղարվեստական խոսքում գործածվել է նաև **դարու** ձևը, որն արդի արևելահայերենում հնացած է:

3. Արևմտահայերենում այսօր էլ սովորական է: Հիշելով Ծերենցի «Երկունք Թ **դարու**» [Իններորդ դարի երկունքը] հայտնի պատմավեպը՝ մեկ օրինակ բերենք արդի մամուլից. «21րդ **դարու** ֆաշականութիւն» («Ազատ օր», Հունաստան) [արևելահայ ընթերցողին ասենք, որ ֆաշականութիւն-ը ֆաշիզմն է]:

Դարու ձևը հանդիպում է հայտնի դերասան, արևմտահայերենի կրող (պոլսահայ) Վահրամ Փափազյանի արևելահայերեն խոսքում. «Մի օր պատահմամբ ընկանք անցյալ **դարու** սկզբների հռչակավոր իտալացի անդրիագործ Անտոնիո Կանովայի ծննդավայր Ռիեզե գյուղը», «Նման հաշվեհարդարի համար դիմում են դաշույնի, եթե չհաշվենք միջին **դարու** Իտալիան, որ գաղտնապահ թույնին էր հանձնում այդ սև գործը»:

Այժմ ամենևին խրախուսելի չէ **դարվա** ձևը: Այն գրեթե մոռացվել է, թեպետ գրականությունից հատուկենտ օրինակներ կարելի է ցույց տալ, ինչպես՝ «Ժամանակը

մարդկության մտքից կջնջե բոլորը, ինչ որ արել է օսմանցին իր հինգ **դարվա** պատմության ընթացքում, կմնան երկու բան՝ Ոճիրը և Մզկիթը» (Ալ. Շիրվանզադե):

4. Մի քանի բառեր ստանում են ոչ միայն –**վա** մասնիկը, այլև -**ի**, ինչպես՝ **ամսվա – ամսի**: Սրանք կանոնական են, ընդունելի, բայց պիտի իմանանք, թե ո՛ր դեպքում ո՛րն ենք գործածում: Ամսաթվի հետ, օրինակ, միայն **ամսի** (ամսի 26-ին), մյուս դեպքերում՝ հիմնականում **ամսվա**՝ **ամսվա կեսին**:
Ամսույս գրաբարյան ձևը (նշանակում է «այս ամսի / ամսվա») գրեթե մոռացվել է, բայց դասական գրականություն կարդացողներն այն գիտեն: Օրինակ՝ «Սիրելի Սամվել, եթե մինչև **ամսույս** վերջը չտամ ուսումնավարձս, ինձ համալսարանից դուրս կանեն» (Ալ. Շիրվանզադե):

Արևմտահայերեն գրավոր խոսքում հաճախ է հանդիպում (**ամսոյս** ձևով):

5. **Ամառվա**, **ձմեռվա** ձևերին զուգահեռ գործածվում են նրանց հավասարարժեք **ամռան, ձմռան** ձևերը –**ան** մասնիկով: Բոլորն էլ կանոնական են:

6. Տարվա եղանակների անուններից մյուս երկուսը –**վա** մասնիկով գործածվում են, երբ բառավերջում –**ք** մասնիկ են ունենում՝ **աշունքվա**, **գարունքվա**: Սրանք ժողովրդական ձևեր են, գործածվում են նաև գեղարվեստական խոսքում: Օրինակներ արձակից՝ «Մի տեղ **աշունքվա** մուգ կանաչ արտերն էին, մի տեղ գարնան սև ցելը» (Ա. Բակունց), «Երգերն ասում է այնպես, կարծես առատ մի **աշունքվա** մասին ունեցած հիշողությունն է պատմում» (Մ. Գալշոյան):
Նաև չափածոյից.

> **Աշունքվա** երգով ոսկեբառ
> Վերհիշում է մերթ իր մորմոքը (Ե. Չարենց):
> Եվ ականջիս մեջ
> Մաշվող **աշունքվա** շշուկը դեղին (Հ. Սահյան):

Այդպես էլ **զարունքվա** ձևն է: Օրինակներ՝

Երբ որ մահս գա,
Կուզեի լիներ
Նորեկ **զարունքվա**
Շողշողուն մի պահ… (Ավ. Իսահակյան):

Գարունքվա հող կա ոտնամաններին ծեփված (Մ. Գալշոյան):

7. **Գիշեր – գիշերվա**, բայց գեղարվեստական, հատկապես բանաստեղծական խոսքում կարող ենք տեսնել նաև **գիշերի** ձևը.

Ու ոռնում է մերթ տխուր, հուսակտուր, որպես շուն
Լուռ, լուսնկա ու անդորր **գիշերի** մեջ միգամած
(Ե. Չարենց):

Ի՞նչ իմանաս՝ երազն ի՞նչ է, որ նման է **գիշերի**.
Խավարի մեջ չկա՞ն կայծեր ճշմարտության աստղերի
(Հովհ. Շիրազ):

Բռնած **գիշերի** թանձր փեշերից,
Գիշերի միջով, գիշերով լցված,
Գազաթն եմ հասել Աղոթարանիս (Հ. Սահյան):

8. **Շաբաթ – շաբաթվա**: Այդպես էլ նրանից կազմված բառերն են -**վա** ստանում՝ **երկուշաբթի – երկուշաբթվա**, **երեքշաբթի – երեքշաբթվա**, **չորեքշաբթի – չորեքշաբթվա**, **հինգշաբթի – հինգշաբթվա**: Որքան էլ անսովոր են թվում, բայց սրանք են ընդունելի ձևերը:

Սրանք գործածվում են նաև **ի**-ով՝ **երկուշաբթիի**, **երեքշաբթիի**, **չորեքշաբթիի**, **հինգշաբթիի**: Իմանալով զույգ ձևերի մասին (**երկուշաբթվա** և **երկուշաբթիի**)՝ մարդիկ նախընտրում են գործածել բառակապակցություններ՝ **երկուշաբթի օրվա** (**գործեր**, **ծրագիր**, **հանդիպում** և այլն):

9. **Օր – օրվա**, բայց ժողովրդական որոշ արտահայտություն-ներում **օրի** ձևն է գործածվում, ինչպես՝ «Էս ի՞նչ **օրի** հասանք», «Ամենքս էլ մի **օրի** ենք»: Բոլորը գիտեն **օր օրի** կապակցու-թյունը, որը «օրեցօր» է նշանակում:

10. **Տարի** բառից, քանի որ ժամանականիշ է, օրինաչափորեն կազմվում է **տարվա** ձևը: Հանդիպում է նաև **տարու** ձևը՝ «Հովհաննեսի հետ 18-րդ **տարու** կարևոր դեպքերի վայրերն էինք փնտրում» (Հր. Քոչար), «Այսպես օր օրի վրա, տարին՝ **տարու**» (Ս. Խանզադյան): Ժողովրդական խոսքում՝ «Նոր **տարուն** կհանդիպենք»:

11. **Իրիկուն** բառից (այս «ամենաբանաստեղծական» բառը ժողովրդական է համարվում) կազմվում է **իրիկվա** ձևը: Այսպես.

Երկնքից - երկինք, **իրիկվա** մովում,
Անմարմին, անտես - ճախրել ու գնա՛լ...
(Ե. Չարենց):

Աշնան օրը ծանրանում է իմ հայրենի քաղաքում,
Իրիկվա հետ ստվերները երկարում են մայթերին
(Պ. Սևակ):

Պատահում է նաև **իրիկունի** ձևով.

Ծով էր կարծես, որ սկիզբ ու սահման չունի -
Ծով էր կարծես՝ մշուշի մեջ **իրիկունի** (Ե. Չարենց):

Դու արդեն շա՛տ մոտ ես, շա՛տ մոտ, բայց մարող **իրիկունի** լույս ունեցող աչքերս քեզ չեն տեսնում (Հովհ. Մել-քոնյան):

12. **Ժամ – ժամվա**, բայց և **ժամի**: Համեմատենք. «Մի երկու **ժամվա** պտույտից հետո նա գոգը լիքը վերադառնում էր» (Ստ. Զորյան) և «Մի կես **ժամի** չափ էլ լուռ ու մունջ հետևեցի շքախմբին» (Վ. Արամյան): Սակայն ժամը նշելիս պիտի ասել **ժամը 5-ին**, ոչ թե «ժամի 5-ին»:

13. **Ժամանակ** բառից կազմվում են **ժամանակվա** և **ժամանա-կի** ձևերը: Գիտական խոսքում գործածվում է **ժամանակի** ձևը: Օրինակ՝ **ժամանակի** քերականական կարգ, **ժամանակի** միավոր, **ժամանակի** իմաստ և այլն:

14. Ընդունելի են այս և համանման զուգաձևությունները՝ **ամս-վանից** և **ամսից**, **գիշերվանից** և **գիշերից**, **օրվանից** – **օրից**: Մյուս կողմից, սակայն, գրեթե չեն գործածվում **ամսվանով**, **գիշերվանով**, **օրվանով** ձևերը, այլ միայն **ամսով**, **գիշերով**, **օրով**:

31. ԳՈՅԱԿԱՆԻ ՀՈԳՆԱԿԻՆ ԿԱԶՄԵԼՈՒ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(12 դեպք)

Հայախոս և հայակիրթ (հայկական կրթություն ստացած) մարդը երբեմն դժվարությունների է հանդիպում անգամ գոյականի և դերանվան հոգնակին կազմելիս:

Ահա այդպիսի դժվարությունների 12 դեպք: Ընտրել ենք միավանկ կամ այսպես կոչված «մեկուկեսվանկանի» բառեր:

1. ՄԱՐԴ

Մարդ բառի հոգնակին կազմվում է –**իկ** մասնիկով՝ **մարդիկ**, այդպես էլ՝ **տղամարդիկ**, **նախամարդիկ**: **Մարդիկ** ձևը բացառություն է, ինչպես որ բացառություն է **կին** բառի հոգնակին՝ **կանայք**: Շատերը սխալմամբ **մարդիկ**-ը գրում են -**ք**-ով՝ «մարդիք»՝ կարծելով, թե գրաբարյան -**ք** հոգնակիակերտ մասնիկն է, ինչպես՝ **որդի** – **որդիք** կամ ժողովրդական խոսքում պահպանված այդ նույն -**ք**-ն՝ **գյուղացի** – **գյուղացիք**:

2. ԱՆՁ

Անձն բառի գրաբարյան հոգնակին է **անձինք**, որն այդպես փոխանցվել է նոր հայերենին (անշուշտ ճիշտ է նաև

անձեր ձևը): Ն-ի անկումով առաջացած «անձիք» սխալ տարբերակը որևէ կերպ չի հիմնավորվում, ուստի մեկընդմիշտ պիտի հրաժարվել դրանից:

3. ՆՈՒՌ

Նուռ բառի հոգնակին կազմվում է **–ներ** մասնիկով, **ու** ձայնավորի հնչյունափոխությամբ՝ **նռներ**: Միավանկ մի շարք բառեր գրաբարում **ն** են ունեցել, որը հոգնակին կազմելիս վերականգնվում է՝ **բեռ – բեռներ**, **գառ – գառներ**, **դուռ – դռներ**, **եզ – եզներ**, **թոռ – թոռներ**, **լեռ – լեռներ**, **ծոռ – ծոռներ**, **ծունկ – ծնկներ**, **հարս – հարսներ**, **ձուկ – ձկներ**, **մատ – մատներ**, **մուկ – մկներ** (ինչպես տեսնում ենք, սրանցից երեքում էլ **ու**-ի հնչյունափոխություն կա):

4. ՄԱՏ

Մատ «մարդու ձեռքի և ոտքի թաթի հինգ վերջավորություններից յուրաքանչյուրը» բառի հոգնակին, ինչպես տեսանք, լինում է **մատներ**, քանի որ գրաբարում եղել է **մատն** (այստեղից էլ՝ **մատնոց**, **մատնաքաշ**, **մատնահարդար**):
Բայց երբ **մատ**-ը «խաղողի վազի ոստ» իմաստով է գործածվում, հոգնակին լինում է **մատեր**: Օրինակ՝ «Ճթճթում էին խաղողի չորացած **մատերը**» (Վլ. Հարությունյան, «Վայոց ձոր»), «- Էս ինչ անխիղճ բան ես արել, էս ինչ երկար ես թողել **մատերը**,- դեմքը խոժոռելով նա գլուխը տարուբերեց,- ուզում ես վազի կյանքի հաշվին էս տարի շատ բերք ստանալ, հա՞» (Ա. Սահինյան, «Ծարավ»):

5. ՌՈՒՍ

Ռուս բառի հոգնակին կազմվում է **–ներ** մասնիկով՝ **ռուսներ** (գրաբարում այս բառը չկար, այսինքն՝ վերջում **ն** չէր կարող ունենալ): Միավանկ բառերի մեջ այդ առումով միակն է, որը **–եր** է ստանում: «Ռուսեր» ձևը բարբառային է: Որոշ մարդիկ այդ ձևը միտումնավոր են գործածում՝ որպես որոշակի վերաբերմունքի դրսևորում:

Ի դեպ, գրական արևմտահայերենում այս բառի հոգնակին լինում է **ռուսեր**։

6. ԴՈՒՍՏՐ

Դուստր բառի հոգնակին կազմվում է –**եր** մասնիկի հավելումով, առանց բառի **ու** ձայնավորի հնչյունափոխության։ «Դստրեր» ձևը մերժելի է։ Թերևս ազդել է սեռականի **դստեր** ճիշտ ձևը։

7. ԾԱՌ

Կանոնի համաձայն, քանի որ միավանկ բառ է, **ծառ** բառին ավելանում է –**եր** մասնիկը՝ **ծառեր**։ Գրական խոսքում արտառոց է հնչում «ծառներ» սխալ կազմությունը (սա հանդիպում է բարբառային խոսքում)։

8. ԱՅԼ

Այլ դերանվան հոգնակին կազմվում է –**ք** մասնիկով՝ **այլք**։ Մի քանի հազար տարի այդպես է եղել և այժմ էլ այդպես է։ Բայց այսօր որոշ մարդիկ **այլք**-ի սեռական հոլովի **այլոց** ճիշտ ձևի **ո**-ն «բերել տեղավորել են» **այլք**-ի –**ք**-ից առաջ՝ ստանալով մի նոր, սակայն սխալ ձև՝ «այլոք»։ Այսպիսով՝ **այլք**, **այլոց** ձևերը ճիշտ են, «այլոք»-ը՝ լիովին մերժելի։ Ցավոք, *«այլոք»* սխալ ձևը հանդիպում է նաև պաշտոնական խոսքում (նաև գրավոր)։

9. ՈՄՆ

Ոմն դերանվան հոգնակին՝ **ոմանք**, որը անորոշ մարդիկ է ցույց տալիս։ Ընդհանրապես սխալ է այս ձևը գործածել իրերի առնչությամբ (օրինակ՝ «կազմակերպություններից ոմանք», նաև «թռչուններից ոմանք»)։

Նույն կերպ սխալ է **որոշ** դերանվան «որոշներ» անհանձնարարելի ձևը գործածել անձերի վերաբերմամբ՝ **ոմանք**-ի փոխարեն (օրինակ՝ «պատգամավորներից որոշները». պիտի ասվեր «պատգամավորներից **ոմանք**» կամ էլ պարզապես «**որոշ** պատգամավորներ»)։

10. ՍՊԱ

Քանի որ **սպ**-ից առաջ հստակ **ը** էր արտասանվում (այժմ այդ **ը**-ն շատ թույլ է կամ պարզապես չի արտասանվում), բառը փաստացի երկվանկ էր ՝ *ըս-պա*, ուստի հոգնակին կազմելիս ավելացել է –**ներ** մասնիկը՝ **սպաներ**: Հատկապես ռուսական կրթություն ստացած շատ մարդիկ բառն ընկալում են միավանկ և հոգնակին կազմում «սպաեր» ձևով, որն անշուշտ սխալ է:

11. ԹԻՄ

Փոխառյալ բառերի հոգնակին կազմելիս (և առհասարակ) **ի**-ն չի հնչյունափոխվում, ուստի **թիմ** բառի կանոնական հոգնակին է **թիմեր**: Ականջ է սղոցում «թմեր» ձևը, որ հաճախ լսվում է հայաստանյան բանավոր խոսքում:

Այդպես էլ, բնականաբար, **թիմի**, **թիմից**, **թիմով**, ոչ թե «թմի», «թմից», «թմով»:

12. ՇՏԱՔ

Շտաբ փոխառյալ բառը ոմանք ընկալում են միավանկ և կազմում հոգնակիի անընդունելի (հայախոսների ականջին անսովոր) «շտաբեր» ձևը: Այս բառը հայերենում երկվանկ է (*ըշ-տաբ*), ուստի հոգնակին –**ներ** մասնիկով է կազմվում, հայերեն երկվանկ բառերի պես՝ **շտաբներ**:

32. ՄԻԱՎԱՆԿ ՎԵՐՋՆԱԲԱՂԱԴՐԻՉՈՎ ԲԱՌԵՐԻ ՀՈԳՆԱԿԻՆ ԿԱԶՄԵԼՈՒ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(12 վերջնաբաղադրիչ)

Խոսելիս և գրելիս երբեմն դժվարություն է առաջանում միավանկ վերջնաբաղադրիչ ունեցող բառերի հոգնակին կազմելիս. մարդիկ չեն կողմնորոշվում, թե ի՛նչ մասնիկ ավելացնեն՝ -**ե՞ր**, թե՞ -**ներ**: Հաճախ կազմվում են հոգնակիի

սխալ ձևեր, որոնք տպավորություն են փչացնում, ականջ ադոցում, իսկ գրավոր խոսքում ակնահաճո չեն:

Հիմնական կանոնը սա է. եթե միավանկ վերջնաբաղադրիչը գոյական է (պատասխանում է *ի՞նչ* հարցին) և պահպանում է իր առարկայական նշանակությունը, ապա բառն ստանում է –**եր** մասնիկը, ինչպես՝ **ցուցափեղկ** (փեղկ) – **ցուցափեղկեր**, իսկ եթե գործողություն է ցույց տալիս և պատասխանում է *ի՞նչ անող* հարցին, ավելանում է –**ներ**, ինչպես՝ **ականանետ** (ական նետող) – **ականանետներ**: Հազվադեպ լինում է *ի՞նչ արած* հարցին պատասխանող միավոր, ինչպես՝ **նորածին** (նոր ծնված) – **նորածիններ**:

Ներկայացնենք «խնդրահարույց» վերջնաբաղադրիչների մի փունջ:

1. ԳԻՐ

Գիր նշանակում է «գրություն, գրվածք»: Երբ **գիր**-ը բառավերջում այս իմաստով է, ապա դրվում է –**եր** մասնիկը: Օրինակներ՝ **վերնագիր – վերնագրեր**, **բացատրագիր – բացատրագրեր**, **խնդրագիր – խնդրագրեր, գծագիր – գծագրեր, լրագիր - լրագրեր**:

Իսկ եթե **գիր**-ը նշանակում է «գրող», ապա ավելանում է –**ներ** մասնիկը: Օրինակներ՝ **հեքիաթագիր – հեքիաթագիրներ**, **վիպագիր - վիպագիրներ**, **խմբագիր – խմբագիրներ**, **առակագիր – առակագիրներ, արձակագիր - արձակագիրներ**:

Նկատենք, որ առաջին խմբի բառերի դեպքում **գիր**-ի **ի**-ն հնչյունափոխվում է, իսկ երկրորդ խմբի դեպքում՝ ոչ:

2. ՉԱՓ

Չափ բաղադրիչը նույնպես գործածվում է ինչպես գործողության, այնպես էլ գոյականի նշանակությամբ, դրա համար էլ բառին կարող է թե՛ -**ներ** և թե՛ -**եր** մասնիկն ավելանալ: Այսպես՝ **ջերմաչափ** «ջերմությունը՝ ջերմաստիճանը չափելու կամ չափող սարք» – **ջերմաչափներ**, բայց

դեղաչափ «դեղի այն չափը, որ նախատեսված է միանգամից ընդունելու համար», «տվյալ բաղադրության մեջ մտնող յուրաքանչյուր նյութի չափը»՝ **դեղաչափեր**: **Ջերմաչափ**-ի նման՝ **ջրաչափ** «ջրի ծախսը չափող գործիք՝ սարք» – **ջրաչափներ**, **արագաչափ** «շարժման արագությունը չափելու գործիք» – **արագաչափներ**, **հարթաչափ** «հարթ մակերեսների հավասարությունը, հարթությունը և այլն չափելու գործիք» – **հարթաչափներ**, **հողաչափ** «հողաբաժանման համար օգտագործելի հողերը չափող և սահմանազծող մասնագետ» իմաստով բառի հոգնակին լինում է **հողաչափներ**: Այսպիսի ուրիշ բառեր էլ կան:

3. ԿԵՏ

Կետ-ը միավանկ գոյական է, ուստի այս վերջնաբաղադրիչն ունեցող բառերի հոգնակին կազմելիս դրվում է **–եր** մասնիկը՝ **հենակետ – հենակետեր, սահմանակետ – սահմանակետեր, բարձրակետ – բարձրակետեր, բուժկետ - բուժկետեր:**

Բայց ահա **տեսակետ** բառի դեպքում այդպես չէ. Հոգնակին լինում է **տեսակետներ**: Ինչո՞ւ: Փորձեմ բացատրել: Երբ միավանկ վերջնաբաղադրիչի իմաստը հստակ չի գիտակցվում կամ այլ իմաստով է գործածվում, կամ էլ վերջնաբաղադրիչը սերտաճած է լինում նախորդ բաղադրիչին, բառը սովորաբար ստանում է **–ներ** մասնիկը: Օրինակ՝ **ընձուղտ – ընձուղտներ** (այնինչ **ուղտ - ուղտեր**):

4. ՑՈՒՅՑ

Ցույց բառը որպես վերջնաբաղադրիչ գործածվում է հիմնականում «ցույց տվող» իմաստով՝ **ժամացույց – ժամացույցներ** (ժամն է ցույց տալիս), **կողմնացույց – կողմնացույցներ**, **հեռուստացույց – հեռուստացույցներ**, **օրացույց – օրացույցներ**, **խոշորացույց – խոշորացույցներ:**

Բայց ահա **նստացույց** – **նստացույցեր**, քանի որ սա ցույցի մի տեսակ է (**ցույց** - **ցույցեր**):

5. ԱՆՑՔ

Անցք – **անցքեր**, ուստի **հորատանցք** – **հորատանցքեր**, **դիտանցք** – **դիտանցքեր**: Բայց բազմաթիվ բառերի պարազայում ավելանում է –**ներ**, քանի որ դրանցում **անցք**-ն արդեն վերաիմաստավորված է, ինչպես՝ **միջանցք** – **միջանցքներ**, **նրբանցք** – **նրբանցքներ**, **լուսանցք** – **լուսանցքներ**, **քղանցք** «զգեստի ներքնի ծայրը, փեշ» - **քղանցքներ**:

Այդպես էլ **լեռնանցք** – **լեռնացքներ**: Բայց եթե խոսքը լեռան մեջ բացված անցքերի մասին է, լինում է **լեռնացքեր** (սա հազվադեպ է):

Նույն կերպ էլ՝ **ջրանցք** – **ջրանցքներ**: Օրինակ՝ «Վենետիկը **ջրանցքների** քաղաք է»: Բայց տեխնիկական գրականության մեջ կարող է պատահել **ջրանցքեր** ձևը. խոսքը «ջրի անցք՝ ծակ» իմաստի մասին է: Սա մասնագիտական է, քիչ հանդիպող:

6. ՊԵՏ

Պետ-ը միավանկ գոյական է, բայց բազմաթիվ բառերի մեջ այն ընկալվում է որպես «բարձր ղեկավար», «զինվորական աստիճան»: Քաղաքապետը քաղաքի պետը չէ, ոչ էլ գնդապետն է գնդի պետը, վարչապետն էլ վարչության կամ վարչական պետ չէ և այդպես շարունակ: Ուստի **քաղաքապետ** – **քաղաքապետներ**, **գնդապետ** – **գնդապետներ**, **վարչապետ** – **վարչապետներ**, **համայնքապետ** – **համայնքապետներ**, **նահանգապետ** – **նահանգապետներ**:

Պահեստապետի համար կարող ենք ասել, որ նա հենց պետ է, բայց նույնական մոտեցում կիրառելու նպատակով սրա հոգնակին հանգիստ կարող ենք կազմել **պահեստապետներ** ձևով:

7. ՆԻՇ

Նիշ վերջնաբաղադրիչի դեպքում գործ ունենք «նշող» իմաստի հետ: Օրինակ՝ **հատկանիշ** «որևէ հատկություն՝ յուրահատկություն նշող» – **հատկանիշներ, խորհրդանիշ – խորհրդանիշներ**, **չափանիշ – չափանիշներ, ախտանիշ** «հիվանդության նշան» – **ախտանիշներ**, **հայտանիշ – հայտանիշներ:**

Նիշ-ով վերջացող բառերի հոգնակին կազմելիս պետք չէ տանջվել մասնիկի ընտրության հարցում՝ **նամականիշե՞ր**, թե՞ **նամականիշներ**: **Պետ**-ով վերջացող բառերի նման այստեղ էլ անվարան –**ներ** մասնիկն ենք դնում և գործը փակում:

8. ՁԱՅՆ

Ձայն գոյականը տեսնում ենք **ռտնաձայն** բառի վերջում. հոգնակին բնականաբար կլինի **ռտնաձայներ**:

Բաղաձայն բառի դեպքն ուրիշ է. սա ածանցավոր կազմություն է (**բաղ**-ը նախածանց է), ուստի հոգնակին կազմելիս –**ներ** է ավելանում՝ **բաղաձայններ**:

9. ՍՅՈՒՆ

Սյուն – սյուներ, ըստ այդմ էլ՝ **շարասյուն – շարասյուներ**, **հենասյուն – հենասյուներ, զորասյուն - զորասյուներ**: Ոմանց խորհուրդ ենք տալիս հրաժարվել երկու **ն** գրելու գայթակղությունից. դա սխալ է:

10. ՊԱՀ

Պահ բառավերջում առավելաբար նշանակում է «պահող», ըստ այդմ էլ՝ -**ներ**: Այսպես. **հերթապահ** (հերթով՝ հերթականությամբ որոշ պարտականություններ կատարող, այսինքն՝ հերթապահող) – **հերթապահներ**: Նույն կերպ էլ՝ **դարպասապահ – դարպասապահներ**, **հիվանդապահ – հիվանդապահներ**, **ավանդապահ – ավանդապահներ**:

Մի երկու բառում **պահ**-ը ժամանակ նշանակող բաղադրիչ է: Օրինակ՝ **իրիկնապահ** «երեկոյան պահ,

երեկոյան ժամանակ», ուստի, բնականաբար, սրա հոգնակին լինում է –եր-ով՝ **իրիկնապահեր**:

11. ՇԱՐ

Շար վերջնաբաղադրիչը բարդ բառերում երկու իմաստով է գործածվում.

- «շարք», ուստի հոգնակին –**եր**-ով է՝ **խողովակաշար – խողովակաշարեր**, **մատենաշար – մատենաշարեր**, **ակնարկաշար - ակնարկաշարեր**.
- «շարող», ուստի հոգնակին –**ներ**-ով է՝ **պատշար – պատշարներ**: Մի ժամանակ տպարանում աշխատում էին գրաշար բանվորներ, որոնք ձուլածո տառերով գրվածքն էին շարում. **գրաշար – գրաշարներ**: Այս բառն արդեն շատերը չգիտեն և հոգնակին կազմելու դժվարություն ինքնըստինքյան չեն ունենում:

12. ՄՈԻՂ

Ունենք **գազամուղ**, **նավթամուղ**, **ջրմուղ** բառերը, որոնցում **մուղ**-ը նշանակում է «մղող»: Քանի որ գործողության իմաստ է արտահայտում, հոգնակին լինում է **գազամուղներ**, **նավթամուղներ, ջրմուղներ**: Ոմանք անշուշտ սխալվում են, երբ հոգնակին –**եր**-ով են կազմում:

Ավարտենք բանաստեղծությամբ.

Եվ աստղազարդ երկնքի վանքերի մեջ ողջ գիշեր
Վառվում էին մոմերի **ցուցամատներ** ցորնաթույր,
Որ զույգերը անհագուրդ ըմբոշխնեին կյանք ու սեր...
(Մետաքսե)

Հիմա երկու հարց.

1. Դուք է՞լ **ցուցամատ** բառի հոգնակին կկազմեիք **ցուցամատներ** ձևով:
2. Ինչպե՞ս կկազմեք **միջնամատ** բառի հոգնակին:

33. ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՐՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(18 դեպք)

Թվականների գործածության զանազան դժվարություններ լինում են ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր խոսքում: Դրանք քննարկման առարկա են դառնում հայերենի դպրոցական և համալսարանական դասընթացների ժամանակ, հաճախ արծարծվում սոցիալական ցանցերում, բայց խնդիրները չեն վերանում:

Առանձնացրել ենք 18 դեպք:

1. Մարդիկ հաճախ **առաջին** թվականը արտասանում են առանց **ն**-ի՝ «առաջի», **երկրորդ**-ը՝ «եկրորդ», և աղավաղում բառերի հնչյունական ճիշտ պատկերը:

2. Ոմանք (նույնիսկ գրագետները) շփոթում են **յոթանասուն** և **ութսուն** թվականները և սխալ ասում ու գրում են՝ *յոթսուն*, *ութանասուն*: Հայտնի է, որ թվականակերտ **սուն** բաղադրիչը նշանակում է «տասը»:

Յոթանասուն-ի դեպքում **յոթան** գրաբարյան սեռական հոլովաձևին ավելանում են **ա** հոդակապը և **սուն** բաղադրիչը, **ութսուն**-ի դեպքում՝ **ութ**+**սուն**: Ըստ այդմ էլ ճիշտ տարբերակներն են՝ **յոթանասուն** և **ութսուն:**

3. 100 թվականը գրվում և արտասանվում է **յ**-ով՝ **հարյուր.** Այստեղից էլ՝ **հարյուրավոր, հարյուրամյա**: Առանց յ-ի արտասանությունը ժողովրդական-խոսակցական է. ժողովուրդն այդպես ալյուրին ասում է «*ալուր*», կապույտին՝ «*կապուտ*» և այլն:

4. Շատերն առանց **-ը** կամ **-ն** վերջնահնչյունի են արտասանում **տասը** / **տասն** թվականը, որի հետևանքով էլ սխալ կազմում են *տասվեց*, *տասյոթ* և ուրիշ թվականներ: Սրանց ճիշտ ձևերը **ն**-ով են՝ **տասնվեց**, **տասնյոթ** և այլն:

5. Եթե **տասը** / **տասն** թվականին հաջորդում է բաղաձայնով սկսվող բառ, ապա գրվում է **ը**, օրինակ՝ **տասը տարի**, իսկ եթե հաջորդում է ձայնավորով սկսվող բառ, ապա **ն**, օրինակ՝ **տասն անգամ**:

Շատերը գրեթե հաշտվել են **տասը** / **տասն** թվականի վերջնահնչյունի կորստին, բայց դա լրացուցիչ դժվարություններ կարող է առաջ բերել, օրինակ՝ **տասնհինգամյա**, **տասնօրյա**, **տասնամյակ** և նման բառերում պարզաբանել **ն**-ի գոյությունը:

Նույնն է նաև **ինը** / **ինն**-ի դեպքում՝ **ինը տարեկան** և **ինն աթոռ**: Ասենք, որ ճիշտ են համարվում նաև **տասը անգամ**-ը և **ինը աթոռ**-ը (**ը**-երով):

6. **Ինը** / **ինն** թվականը ոմանք երբեմն գրում են *իննը,* որը բացարձակ սխալ է: **Իննսուն**-ը բնականաբար գրվում է երկու **ն**-ով, արտասանվում **ը**-ով՝ **իննըսուն**: Ոմանք բառամիջի **ը**-ի փոխարեն ասում են **ի**՝ ~~իննիսուն~~, որ մերժելի է:

7. Ոմանք մի կողմից **ինը**, **տասը** թվականներում զեղչում են բառավերջի **ը**-ն, սակայն մյուս կողմից ուրիշ թվականներում անհարկի հավելում են այն: Հաճախ կարող ենք լսել՝ վեց*ը* գիրք, ութ*ը* մարդ, չորս*ը* շաբաթ և այլն: Սրանց ճիշտ ձևերն առանց **ը**-ի են՝ **վեց գիրք**, **ութ մարդ**, **չորս շաբաթ**:

8. **Երկու** - **երկու** գիրք: **Երկու** թվականին **ս** է ավելանում հոլովվելիս՝ **երկուսը**, **երկուսի**, **երկուսին**, **երկուսից**, **երկուսով**:

9. **Երեսուն**-ը շատերը սխալմամբ ասում են (ոմանք նաև գրում) «եռեսուն», թեպետ արմատը **երե**(ք)-ն է: Արմատի **եռ** տարբերակով ունենք **եռամսյակ**, **եռոտանի**, **եռաժանի** և այլն, բայց սրանք **երեսուն**-ի արտասանության և գրության վրա ազդեցություն չունեն:

10. Ըստ հայերենի ուղղախոսական կանոնի՝ երբ **ե**-ն հաջորդում է բաղաձայնի, արտասանվում է **է**, ինչպես՝ **լայնեզր**

[լայնէզր]։ Դրա համար էլ հաղորդավարներին, դերասաններին, հրապարակային խոսք ասողներին սովորեցնում են, որ **երկու** և **երեք** միավորներով կազմված տասնավորները ճիշտ է արտասանել **է**-ով՝ **քսան[է]րեք**, **հիսուն[է]րեք**, **տասն[է]րկու** և այլն։ Ժողովրդական խոսքում կանոնը հիմնականում շրջանցվում է. ասում են «քսանյէրեք»։ **Տասներկու**, **քսաներկու** թվականները առավելապես ճիշտ են արտասանում (**է**-ով), քանի որ շատերը **երկու**-ն առանձնաբար էլ հաճախ **է**-ով են ասում։

11. Դիտարկենք **հիսուն**-ի և **վաթսուն**-ի կազմությունը։ Թվականակերտ **սուն**-ն ավելացել է **հի** (< հինգ) և **վաթ** (< վեց) արմատներին, ուստի *հիցուն* և *վացուն* ձևերն արտասանական «ծանր վթարներ» են։

12. Փոխառյալ թվականները տառադարձելիս առաջնորդվում ենք հայերենի ուղղագրության կանոններով և **միլիոն** ու **միլիարդ** բառերը գրում մեկ լ-ով։

13. Հայերենում այժմ 0-ն արտասանվում է **զրո**, ոչ թե *զէրո*։ Այստեղից էլ՝ **զրոյացնել**, **զրոյական**։ Բառարաններում հանդիպող **զերո**-ից և նրանով կազմված բառերից հղում է արվում այժմ միակ ընդունելի **զրո**-ին և նրանով կազմվածներին։

14. Հայտնի է, որ հայերեն տառերն ունեն նաև թվային արժեք։ Այդ արժեքով գործածված տառը պետք է արտաբերել թվային արժեքին համապատասխան։ Օրինակ՝ **Արշակ Բ**, **Վազգեն Ա** անունները չպետք է կարդալ (կամ ասել) գրվածի պես՝ Արշակ Բ, Վազգեն Ա, այլ **Արշակ Երկրորդ**, **Վազգեն Առաջին**։ Ասենք, որ թվական բաղադրիչը գրվում է մեծատառ։

Նույն ձևով էլ թվարկումների ժամանակ **ե)**-ն կարդում ենք **հինգերորդ**, **ժա)**-ն՝ **տասնմեկերորդ** և այլն։

15. Հռոմեական թվանշանները դասական թվականներ են, այսինքն՝ IV, VIII, XI նշանակում են **չորրորդ**, **ութերորդ**,

տասնմեկերորդ, ուստի **-րդ** մասնիկն ավելացնելն ուղղակի սխալ է: Սխալ է, օրինակ, *VI-րդ* գրելը, քանի որ լինում է վեցերորդ+րդ, ուստի հարկավոր է գրել պարզապես VI:

Այդպես էլ հռոմեական I-ի դեպքում. սխալ է *I–ին* գրելը (ինչպես նաև՝ *1-րդ,* որ գրում են բացառիկ «գյուտարարները»): Ճիշտը սա է՝ 1-ին հերթափոխ կամ I հերթափոխ:

16. Մոտավորության իմաստ արտահայտող կապակցություն-ները գծիկով են գրվում, ինչպես՝ **երկու-երեք** ժամ, **քանի-քանիհինգ** մարդ: Երբ առաջին բաղադրիչը բացառական հոլովաձևով է, ապա կապակցությունը գրվում է առանց գծիկի: Այսպես՝ **երկուսից երեք** ժամ, **քանից քանիհինգ** մարդ:

17. Անջատ գրվող թվականների բաղադրիչները սովորաբար կցվում են, երբ նրանց որևէ վերջածանց է ավելանում: Այսպես՝ **հինգ հարյուր**, բայց **հինգհարյուրանոց**, **երկու հազար**, բայց **երկուհազարական**:

Բազմաբաղադրիչ թվականների պարագայում այս կանոնը չի գործում, ինչպես՝ **երկու հարյուր հազար հիսունհինգերորդ**, **հազար ինը հարյուր ութսունական** (թվականներ): Դրանք ավելի շուտ գրվում են թվանշաններով, որոնց զուգադրվում է համապատասխան մասնիկը՝ գծիկով: Այսպես՝ 255000-րդ, 1980-ական թվականներ:

18. Բաղադրյալ այն բառերը, որոնց առաջին բաղադրիչն արտահայտվում է հնդարաբական թվանշանով, գրվում են գծիկով: Այսպես՝ **2750-ամյակ**, **7-ամսյա**, **20-ական**: Գծիկը միավորում է բառի ոչ համասեռ՝ թվային և տառային մասերը:

34. ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(11 դեպք)

1. Ոմանք մտահոգվում են, թե ո՛ր ձևն ընտրեն՝ **ինձնի՞ց**, թե՞ **ինձանից**, ու դժվար են կողմնորոշվում: Ասենք, որ 1-ին և 2-րդ դեմքերի անձնական դերանունների բացառական, գործիական և ներգոյական հոլովները զույգ ձևեր ունեն՝ առանց **ա**-ի և **ա**-ով: Երկուսն էլ ընդունելի են: Այնպես որ անվարան կարող ենք գործածել՝ **ինձնից - ինձանից**, **քեզնից – քեզանից**, **ինձնով - ինձանով**, **քեզնով – քեզանով, ինձնում - ինձանում**, **քեզնում – քեզանում:**

Նույն կերպ նաև հոգնակի թվում՝ **մեզնից** / **մեզանից**, **մեզնով** / **մեզանով, մեզնում** / **մեզանում**, **ձեզնից** / **ձեզանից**, **ձեզնով** / **ձեզանով, ձեզնում** / **ձեզանում:**

Թվում է, թե ապագայում կարճ ձևերը կհաղթեն: Կամ գուցե արդեն հաղթել են: Բացի **մեզանում** ձևից, որը կայունացել-քարացել է ու բառի արժեք ձեռք բերել: Ասենք, որ Արևելահայերենի ազգային կորպուսում գրանցված կա **մեզանում**-ի 3308 գործածություն, իսկ **մեզնում**-ի՝ ընդամենը 91: Խոսուն փաստ:

2. **Դու** դերանվան սեռական հոլովաձևն է **քո**: Ժողովրդական խոսքում գործածվում է սրա **քու** տարբերակը, որն արևելահայերեն գրական խոսքում անընդունելի է: Այնինչ արևմտահայերենում **քու**-ն միանգամայն ընդունելի, կանոնական ձև է: Օրինակ՝

Քու յիշատակդ, այս գիշեր, զիս լալու չափ կը յուզէ... (Վ. Թեքեյան):

3. **Ես – ինձ**, **դու – քեզ**, **մենք – մեզ**, **դուք – ձեզ**: Ոմանք գրական և խոսակցական լեզուների, արևելահայերենի և արևելահայերենի սահմանները խախտում ու արևելահայերեն

խոսքում ասում են *ինձի* (արևմտահայերեն **ինծի**) *տվեց, քեզի ասեցի, մեզի ձեռ չի տալիս, ձեզի քանի անգամ հիշացնեմ* և այլն: Սրանք արևելահայերեն լեզվական ցածր մակարդակի նմուշներ են:

4. **Ինքը** դերանունը կարող է գործածվել **ս** և **դ** հոդերով՝ **ինքս**, **ինքդ**, հոգնակին՝ **ինքներս, ինքներդ:** Ուշադրություն պիտի դարձնել **դ** հոդին. ոմանք, անդադար սխալվելով, **ինքդ**-ը համառորեն գրում են տ-ով:

5. **Ինքը** դերանվան սեռականի ձևն է **իր**, ուստի **իր տունը**, **իր գործը** և այլն: Արևելահայերեն խոսակցական լեզվում հաճախ ենք լսում *իրա* ձևը, որը կարող է հայտնվել նաև գեղարվեստական խոսքում: Օրինակ՝

Բայց ի՞նչ, ես լվացքի, նա **իրա** գրադարանում. ի՞նչ ասես անում է, ո՞ւմ հետ ասես խոսում է (Ստ. Զորյան):

Չափածոյում այն գործածում են հիմնականում հանգի թելադրանքով.

Խալիչա է հյուսում Գյուլնարան,
Հույզերից է հյուսում կարծես նա,
Ահա նա հինվածքի **վրա**
Նկատում է պատկերը **իրա** (Գ. Սարյան):

Չնայած գեղարվեստական գրականության մեջ *իրա* ձևի սակավաթիվ գործածություններին՝ այն, միևնույն է, մերժելի է կանոնական խոսքում:

Միաժամանակ հավելենք, որ այս *իրա*-ի շարքը ոմանք «ամբողջացնում են»՝ ասելով *իրան, իրանից, իրանով*:

6. Ասացինք, որ սովորական (ու ճիշտ) են **իր գիրքը**, **իր նշանածը** և նման կապակցությունները, որոնց փոխարեն ոմանք ասում են *իրեն* գիրքը, *իրեն* նշանածը՝ կարծելով, թե գրական են խոսում: Ո՛չ և ո՛չ:

7. **Իր** հոլովաձևի փոխարեն հատկապես նախանցյալ դարի գեղարվեստական գրականության մեջ գործածվում էր **յուր** ձևը, որն այժմ հնացած է և գործածությունից լիովին դուրս մղված:

8. Շատերն իրենց խոսքում չարաշահում են **ես** դերանունը. **Ես** գնացի, **ես** բերեցի, **ես** հաղթեցի, **ես** ուզում եմ և այլն, և այն: Սա հուշում է, որ խոսողը եսակենտրոն մարդ է. դա վանում է: Հայերենում բայի կողքին հաճախ կարող ենք դերանունները պարզապես չդնել, քանի որ թվի և դեմքի գաղափարները բայի վերջավորությունների միջոցով արդեն իսկ արտահայտվում են: Ահա այսպես.

Մի՞թե չգիտես, որ քո սիրով եմ միայն ապրում, եթե սիրտս քամես, սերդ կծորե այնտեղից, միայն քո սերը և ուրիշ ոչինչ: Տիեզերքի չափ սիրում եմ քեզ, տիեզերքի չափ... (Ավ. Իսահակյան):

9. **Ես ինքս**, **դու ինքդ**, **նա ինքը**, **մենք ինքներս**, **դուք ինքներդ**, **նրանք իրենք** դերանուններն այսպես էլ գրվում են: Առաջին բաղադրիչի վրա բութ չի դրվում: Այո՛, ոմանք ավելորդ «գրագիտություն» են ցուցաբերում:

10. Բարեկիրթ խոսքում, որպես հարգանքի նշան, **դու**-ի փոխարեն գործածվում է նրա հոգնակին և գրվում մեծատառով, ինչպես՝ **Դուք**, **Ձեր**, **Ձեզ** և այլն: Օրինակ՝

Իմ երգը միշտ **Ձեզ** է երգում.
- **Դուք** երգ ու հմայք եք, տիկի՛ն (Ե. Չարենց):

Թարգմանական որոշ ստեղծագործություններում կարող ենք տեսնել այս ձևերի համատարած փոքրատառով գրություն: Դա թարգմանչի որոշումն է, բայց կանոնը չի փոխվել:

11. Հայաստանյան բանավոր խոսքում **ինքը** անձնական դերանունը շատերը հաճախ գործածում են իրերի մասին

խոսելիս՝ այդպես անձնավորելով բնակարանը, համակարգչային ծրագիրը, զինին, անձեռոցիկը, բաժակը, կոշիկը և այլն, և այլն: Այսպիսի խոսքը երբեմն թյուրիմացությունների պատճառ է դառնում. Չես հասկանում՝ ո՛ւմ, թե ինչի՛ մասին է խոսքը: Պիտի գործածել ցուցական դերանուններ՝ **սա**, **դա**, **նա** կամ դիմել **այս**, **այդ**, **այն** ցուցականների օգնությանը, ինչպես՝ **այս բնակարանը**, **այդ զինին** և այլն:

35. *Ս, Դ, Ն, Ը* ՀՈԴԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(12 դեպք)

Ս, **դ**, **ն**, **ը** հոդերը կարևոր մասնիկներ են. մեր գրավոր կամ բանավոր խոսքն անհնար է պատկերացնել առանց սրանց:

Դերանունների և հոդերի իմաստային ու ծագումնաբանական առնչությունները ակներև են դառնում հետևյալ հանդիպադրումների միջոցով: Այսպես, համեմատենք.

- ✓ ե**ս**, **ս**ա, այ**ս** – գիրք**ս** (= իմ գիրքը), ինք**ս** (ես ինքս), վերջեր**ս** (այս վերջերը).
- ✓ **դ**ու, **դ**ա, այ**դ** – գիրք**դ** (= քո գիրքը), ինք**դ** (դու ինքդ), վրացիներ**դ** (դուք՝ վրացիներդ).
- ✓ **ն**ա, այ**ն** – առու**ն**, տուն**ն** (տունն այրվեց):

Հոդերին վերաբերող ամենապարզ կանոնը սա է՝ բաղաձայնով վերջացող բառերին ավելանում է **ը**, ձայնավորով վերջացողներին՝ **ն** հոդը: Բայց կան հոդերի գործածության մի շարք յուրահատկություններ և դժվարություններ, որոնք արժանի են ուշադրության:

Անդրադառնանք դրանց՝ ներկայացնելով 12 դեպք:

1. Ասում ենք **գիրքս** և հասկանում «իմ գիրքը»: Հայերենի ուսուցիչները հետևողականորեն ուղղում են արևելահայ աշակերտների *իմ գիրքս* կապակցությունը՝ բացատրելով, որ **իմ**-ը պատկանելության և մյուս իմաստները հստակ արտահայտում է, ուստի **իմ** դերանվան և **ս** հոդի համատեղ գործածությունը ճիշտ չէ:

Բայց և պիտի իմանալ, որ արևմտահայերենում **իմ գիրքս**, **իմ սիրտս** և նման կապակցությունները կանոնական են, ընդունելի:

2. Փաստ է, որ տևական ժամանակի ընթացքում **դ** հոդը հնչյունափոխվել է և գրեթե համատարած արտասանվում է *տ*: Սակայն հոդի գրությունը չի փոխվել, և արտառոց սխալ է *«տունտ»*, «*տետրտ»* գրելը: Հայաստանի բնակավայրերի և ճանապարհների ավտոլվացման կետերում հաճախ կարող ենք տեսնել «Լվա ինք**դ**» գրությունը, գրախանութներում՝ երեխաների համար տպագրված «Ներկի՛ր ինք**դ**» գրքույկները՝ **դ**-ի ճիշտ գործածությամբ: Բայց ահա սոցցանցերում անզգուշաբար հաճախ գրում են «*Ծնունդտ շնորհավոր*»՝ թերևս մտածելով, որ երկու **դ** կողք կողքի դժվար թե գրվեն: Թյուրիմացություն է: Հարկ եղած դեպքում պիտի գրել **ծնունդդ**, **զարդդ**, **կոկորդդ**, **վարդդ** և այլն: Այդպես է նաև **տ**-ով վերջացող բառի վերջում՝ **հետդ**, **մատդ**, **մոտդ**: Ուստի՝ «*Ծնունդդ շնորհավոր*»:

3. Երբ բաղաձայնով վերջացող բառին հաջորդում է ձայնավորով սկսվող միավոր, սովորաբար գործածվում է **ն** հոդը: Այսպես՝ «Գեղամ**ն** **ա**նտարբեր կանգնած էր»: Բայց սա քարացած կանոն չէ, և հազարավոր դեպքեր կարող ենք ցույց տալ, թե ինչպես գրողները, գիտնականները, ուրիշներ նման դեպքերում գործածում են **ը** հոդը: Օրինակ՝ «Գոյական**ը** **ա**յս դեպքում չի ձևափոխվում»:

Այս հարցի շուրջ վիճելն անիմաստ է, քանի որ լեզուն խնդիրը կարգավորել է: Եթե մեկն ասի կամ գրի *վիճելը անիմաստ է*, ապա դա նրա ընտրությունն է և սխալ չէ:

4. Բառասկզբում **ե** և **ո** ունեցող բառերը մարդիկ երբեմն համարում են ձայնավորով սկսվող և գրում են. *«Արտակն երազում էր»* կամ «*Նվարդն որոշեց*»: Մինչդեռ **երազել** բայի սկզբում *յէ* է արտասանվում, **որոշել** բայի սկզբում՝ *վօ*: Այնպես որ սրանք ձայնավորով չեն սկսվում, ուստի՝ *«Արտակը երազում էր»* կամ « *Նվարդը որոշեց*»:

Որոշ բարբառներում այս գործածությունը սովորական է: Գրական լեզվում սրանք կոպիտ սխալներ են:

5. Պետի խուսափել **ն** հոդով վերջացող բառը նախադասության մյուս միավորներից ստորակետով կամ բութով տրոհելուց: Ասենք այսպես՝ «Արամ**ն**, իհարկե, ազնիվ տղա է»: *Արամն* ձևը կարծես օդից կախված լինի: Ճիշտ է այսպես՝ «Արամ**ը**, իհարկե, ազնիվ տղա է»:

6. Տասնամյակներ շարունակ կրթական հաստատություններում սովորեցնում էին **զբ**, **զգ**, **շտ**, **սթ**, **սկ**, **սպ**, **սփ** հնչյունակապակցություններով սկսվող բառերից առաջ **ն** հոդը գործածել, քանի որ դրանցով կազմված բառերի սկզբում **ը** էր արտասանվում: Այսպես՝ «Աստղիկ**ն** [ը]զբաղված էր տան գործերով», «Մայր**ն** [ը]շտապեցնում էր աղջկան»:

Հիմա այս բառերի սկզբի **ը**-ն այնքան թույլ է արտասանվում (կամ ուղղակի չկա), որ հիշյալ կանոնը չի գործում: Հանգիստ կարող ենք ասել ու գրել՝ «Աստղիկ**ը** զբաղված էր», «Մայր**ը** շտապեցնում էր»:

7. Գեղարվեստական (հատկապես չափածո) խոսքում **հա** հնչյունակապակցությամբ սկսվող որոշ բառերից առաջ գրողներն ու թարգմանիչները բաղաձայնով վերջացող բառե-

րին երբեմն **ն** հոդն են ավելացնում: Հ-ն շունչ է, և ձայնավորը **ն**-ին միաձուլված է արտասանվում: Այսպես:

Գիշերի դեմ խավարամած, **աչքերն հառած** կարմիր կետին՝
Ամբոխները խելագարված սպասում են առավոտին:
(Ե. Չարենց)

Ձեռները հենած զավաթի եզրին՝ **աչքերն հառել էր** առաստաղին: (Շիրվանզադե)

Կանգ առավ, **աչքերն հառեց** վերև, ձեռքերը բարձրացրեց, կարծես երկնքից փրկություն էր սպասում:
(Է. Հեմինգուեյ)

Չպիտի կարծել, թե միայն **աչքերն հառել** կապակցությունն է: Ահավասիկ ուրիշ օրինակներ ևս.

Հարամ է քեզ աղջիկ**ն հայոց**,
Հայոց սիրտը՝ Մասիսն հայոց: (Հ. Շիրազ)
Ասում են՝ հին վերք**ն հաճախ** է ցավում,
Երբ եղանակը ամպոտ է ու վատ... (Վ. Դավթյան)

Չափածոյում սա պայմանավորված է բանաստեղծական տողի վանկերի քանակը չխախտելու հանգամանքով: Եթե **ը** գործածվեր, մեկ վանկ կավելանար, և չափը կխախտվեր: Ուստի **ն**-ն **հա**-ի հետ ձույլ պիտի արտասանել՝ «աչքերնհառած» (4 վանկ), ոչ թե «աչքերըն հառած» (5 վանկ):

8. **Աչք – աչքեր, սիրտ – սրտեր** զույգերը եզակի – հոգնակի հակադրություն են ներկայացնում: Բայց երբ ուզում ենք ասել «մեր աչքերը», համապատասխան ձևը յուրահատուկ է կազմվում՝ **աչքներս**, «մեր սրտերը»՝ **սրտներս / սիրտներս**:

9. Երկնային Հոր՝ Տիրոջ՝ Բարձրյալի անունն ընդունված է գործածել առանց **ը** կամ **ն** հոդի: Այսպես՝ «**Աստված** արարեց տիեզերքը»:

Այլ աստվածների դեպքում հոդի գործածությունը սովորական է: Օրինակ՝ «Հայոց դպրության աստվածը Տիրն էր»:

10. Գրաբարի և արևմտահայերենի ազդեցությամբ շատ հոգևորականներ և պարզ հավատացյալներ արևելահայերեն խոսքում **Հիսուս** անունը գործածում են առանց հոդի (անտարակույս, որոշակի դեր ունի նաև **Աստված** բառի օրինակը): Արևելահայերեն տարբեր գրքերում, այլուր **Հիսուս** անունը հոդ ստացել է, և դա բնական ու սովորական է: Օրինակ՝ «**Հիսուսը** գնաց Երուսաղեմ»:

11. Ոմանք **բառիս բուն իմաստով** արտահայտությունը ճիշտ չեն հասկանում (նշանակում է «այս բառի բուն իմաստով», «իսկական, լիակատար առումով») և սխալմամբ ասում են *բառից բուն իմաստով*՝ կապելով բացառական հոլովին:

Ոմանք էլ ասում են «բառի բուն իմաստով», որն անշուշտ զիջում է **բառիս բուն իմաստով** «ազնվական» ձևին:

12. **Օրերս**, **վերջերս** ասելիս վերջնավանկում **ը**-ն հստակ պիտի ասել՝ օրեր[ը]ս, վերջեր[ը]ս, մի բան, որ հատկապես օտարները, օտարախոս կամ հայերեն նոր սովորող հայերը դժվարանում են անել:

36. *-Ե՞Լ, ԹԵ՞ -ԱԼ*

(10 դեպք)

1. ԽՈՍԵԼ

Ասել բայը –**ել** վերջավորություն ունեցող բայերի մեջ միակն է, որը ձևափոխությունների է ենթարկվում -**ալ** մասնիկ ունեցողների պես: Ահա այսպես՝ **ասացի**, **ասացիր**, **ասաց**, **ասա**՛...: Սա անկանոնություն է (այս տեսակի միակը), որը ժողովուրդը խոսակցական լեզվում «ուղղում» և դարձնում է «կանոնական»՝ *ասեցի*, *ասեցիր*, *ասեց*... Հասկանալի է,

բայց սրա՛ մասին չենք ուզում խոսել, այլ **խոսել** բայի: **Խոսել** բայի **խոսեցի**, **խոսի՛ր**, **խոսենք**... ձևերը միանգամայն ճիշտ են, գրական և կանոնական: Եվ սրանք սովորական պիտի լինեին, ինչպես որ **գրեցի**-ն կամ **սիրեցի**-ն: Սակայն **ասացի**, **ասացիր**, **ասաց**, **ասա՛** ձևերի նմանակությամբ համատարած են դառնում **խոսել** բայի սխալ ձևերը՝ *խոսացի*, *խոսա՛*, *խոսացե՛ք*, *խոսանք*, *խոսացող*... (ոմանք նույնիսկ զարմանում են, երբ իմանում են, որ *խոսացած*-ը սխալ է, ճիշտը **խոսած**-ն է, օրինակ՝ «Նրա **խոսած** [ոչ թե *խոսացած*] լեզուն չհասկացա»): Սրանք լիովին մերժելի են պաշտոնական և հրապարակային խոսքում, անտանելի է սրանց համատարած գործածությունը հեռուստատեսության լեզվում: Այս գրոհը պիտի կասեցնենք:

2. ԳՈՎԵԼ

Գովում ենք լավ գործը, լավ մարդուն: Ամեն ինչ ճիշտ է: **Գովել** բայն է, որի ճիշտ ձևերից են **գովեցի**, **գովեցիր**, **գովեց**, **մի՛ գովիր**... Բայց լսում ենք (երբեմն նաև կարդում) «Արամին շատ *գովաց*» կամ «Գլուխ *մի՛ գովա*, լավ բան չես արել» ու ... կարկամում ենք: Գրական հայերենը, մասնավորապես պաշտոնական խոսքը մերժում են սրանք:

«Սա էլ քո *գովացած* զինին» և «Սա էլ իմ **գոված** զինին» նախադասություններից ես ընտրում եմ երկրորդը:

3. ԾԻԾԱՂԵԼ

Իրենց խոսքի նկատմամբ անհետևողական մարդիկ **ծիծաղել** բայը այստեղ-այնտեղ սխալ են ասում և գրում՝ *ծիծաղալ*, որից էլ՝ *ծիծաղացի*, *ծիծաղացիր*, *ծիծաղաց, մի՛ ծիծաղա* և այլն: Սրանք տարօրինակ են թվում **ծիծաղեցի**, **ծիծաղեցիր**, **ծիծաղեց**, **մի՛ ծիծաղիր** ճիշտ և օրինաչափ ձևերի կողքին:

4. ԱՓՍՈՍԱԼ / ԱՓՍՈՍԵԼ

Հայերեն գրավոր և բանավոր խոսքում կան, բառարաններում էլ գրանցված են **ափսոսալ** և **ափսոսել** բայերը:

Գրական հայերենը նախընտրում է առաջինը՝ **ափսոսալ**, որից էլ կազմվում են **ափսոսացի**, **ափսոսացիր**, **ափսոսաց**, **ափսոսա՛**, **ափսոսացող** և այլ կանոնական ձևեր։ Գրավոր խոսքում սրանք գերիշխում են *ափսոսեցի, ափսոսեցիր, ափսոսեց* և համանման ձևերի համեմատ։

5. ՀԱՉԵԼ

Գրական **հաչել** (Շունն սկսեց ավելի ուժեղ **հաչել** եկվորների վրա) բայը խոսակցական լեզվում տարբերակ ունի՝ **հաչալ**։ **Հաչել** – **հաչող** և *հաչալ* – *հաչացող* հանդիպադրված ձևերից գրական լեզվով թավ գրվածներն են նախընտրելի։ Չմոռանանք նաև, որ լեզուն կարճ ձևերն է սիրում։

6. ՈՐՍԱԼ

Երբևէ ձուկ **որսացե՞լ եք**։ Ես անգամ չեմ փորձել, բայց պահը **որսացել** և լուսանկարել եմ անվրդով ձուկ **որսացող** ընկերոջս։ Կարևորը պահը **որսալն** է։ **Որսա՛** ճիշտ պահը...Այո՛, խոսքը **որսալ** բայի մասին է։

Չիմացության հետևանք են *որսել, որսեց, որսի՛ր* ձևերը։

7. ՑԱՎԵԼ

Ժողովրդական խոսքում **ցավալ**, գրական լեզվում՝ **ցավել**։ Սրանք տևական ժամանակ «մրցում են»։

Ակնհայտ է, որ ժողովուրդը բանավոր խոսքում **ցավել**, **ցավեց**, **ցավեցնել,** –**ել**-ով կազմված կանոնական այլ ձևեր առհասարակ շատ քիչ է գործածում։ Նաև նկատելի է, որ ժողովրդական խոսքից **ցավալ** տարբերակի ձևերը թափանցում են գրականության և մամուլի լեզու։ Ահա մեկ հայտնի օրինակ.

Եվ սիրտը մոր ասավ տխուր,
Լացակումած.
-Վա՜յ, խեղճ տղաս,
Ոչ մի տեղդ չցավա՞ց...

(Ավ. Իսահակյան, «Մոր սիրտը»)

8. ԿԱԹԵԼ

Այսօր **կաթել** բայն ընկալվում է գրական, **կաթալ**-ը՝ խոսակցական: Թե ինչքա՛ն կշարունակվի այս ընկալումը, դժվար է ասել: Լեզվի բնական զարգացումը թե ինչի՛ կհանգեցնի, կերևա ապագայում:

9. ՈՐՈՃԵԼ – ՈՐՈՃԱԼ

Այս տարբերակներից գրական լեզուն նախընտրում է **որոճել**-ը, որից էլ՝ **որոճող** (հմմտ. **որոճալ** – **որոճացող**): **Որոճել** բայի հաղթանակի վկայությունն է **որոճող կենդանի** բառակապակցությունը, որը կենդանաբանության մեջ ընդունված բառակապակցություն է:

10. ԲԶԲԶԱԼ - ԲԶԲԶԵԼ

Սրանք տարբեր բայեր են, ձևային առումով տարբերությունը –**ալ** և -**ել** մասնիկներն են:

Բզբզալ նշանակում է «տևականորեն բզզալ» (Մեղուն բզբզում է ականջիս տակ), փոխաբերաբար՝ «առանց շտապելու որևէ գործով զբաղվել» (Առավոտից նկուղում բզբզում է):

Բզբզել «սրան-նրան հաճախակի բզել», «հրահրել, սադրել ի վնաս մեկի», «որևէ գործ երբեմն-երբեմն, մաս-մաս անել»: Այս վերջին իմաստը մոտ է **բզբզալ** բայի փոխաբերական իմաստին, որից էլ առաջ է գալիս գործածության շփոթը:

Ինչպես տեսանք, առաջինի հիմքում բզզալն է, երկրորդինը՝ բզելը:

37. Չ. ՎՏԱՆԳՎԱԾ ԲԱՅԵՐ

(9 բայ)

Ժամանակակից հայերենում չածանց ունեցող բայերը շատ քիչ են, գրեթե բոլորն էլ՝ «խնդրահարույց»: Մարդիկ երբեմն սխալ են ասում մեկի հենց ելակետային ձևը, մյուսի՝ անցյալ կատարյալը, երրորդի՝ հրամայականը... Դժվար ժամանակներ են ապրում չ ածանցով բայերը:

Ներկայացվող պարզաբանումները կօգնեն փոքր-ինչ թեթևացնելու այս բայախմբի «հոգսը»:

1. ԹՌՉԵԼ

Բանավոր խոսքում հաճախ ասում են «թռնել»: Թերևս ավելի շատ են ասում, քան ճիշտ **թռչել**-ը: Այդ «թռնել»-ը երբեմն նշմարվում է անգամ դասականների ստեղծագործություններում: Բայց չմոռանանք, որ **թռչել**-ի դիրքերն այնքան էլ խախուտ չեն. **թռչուն** բառի չ-ն հենց **թռչել** բայով է պատճառաբանվում՝ «թռչող»):

Անցյալ կատարյալը կազմելիս չ-ն օրինաչափորեն ընկնում է՝ **թռա**, **թռար**, **թռավ**: Ոմանք, սակայն, սրանց փոխարեն ասում ու գրում են «թռչեցի, թռչեցիր, թռչեց...»՝ կարծելով, թե գրական ձևերը դրանք են:

Հայերենի դասերին ուսուցիչները զավեշտով զուգահեռներ են անցկացնում նմանահունչ **թրջել** «թացացնել» բայի **թրջեցի**, **թրջեցիր**, **թրջեց** ճիշտ ձևերի հետ՝ փորձելով սովորողներին հեռու պահել **թռչել** բայի հիշատակված սխալից:

2. ՓԱԽՉԵԼ

Նույն պատմությունն է: Բանավոր խոսքում սխալմամբ ասում են «փախնել»: Ըստ աշակերտների՝ իրենք դասից փախնում են, ըստ ուսուցիչների (և լեզվի կանոնի)՝ նրանք դասից փախչում են: Կրկին սխալվում են, երբ ասում են «փախչեցի, փախչեց...» (սա կեղծ գրականացում է): Բնական և

կանոնական են՝ **փախա**, **փախար**, **փախավ**, **փախանք**, **փախաք**, **փախան**:

3. ԴԻՊՉԵԼ

Չ-ն ըստ կանոնի պահպանվում է ներկայում՝ **դիպչում է**, անցյալում ընկնում է՝ **դիպել է**, **դիպավ**... Սխալ են «դիպչել է, չէր դիպչել, դիպչեց...»: Դրանք այնքան են արմատացել, որ ոմանց ականջին ճիշտ ձևերն են անսովոր հնչում և կասկածի տեղիք տալիս:

4. ԿՊՉԵԼ

Բանավոր խոսքում տարածված է «կպնել» ձևը, որից էլ՝ «կպնում է» (փոխանակ **կպչում է**): Եթե **կպչել**-ը «խաղից դուրս է հայտարարվում», ապա հարց է ծագում՝ **կպչուն**, **կպչուկ**, **կպչան** բառերի **չ**-ն որտեղի՞ց է:

5. ԿՈՐՉԵԼ

Այս բայն էլ առանց **չ**-ի են գործածում՝ «կորել», սրանից էլ՝ «կորում է» (փոխանակ **կորչում է**): Իսկ **կորավ** կանոնական ձևի փոխարեն ասում են «կորչեց» կամ «կորեց», որ լավ չէ:

Ոմանք հիմա կարող են ասել. «Հա, ի՞նչ կա որ...»: Պատասխանում եմ. խախտվում է համակարգայնությունը: Եթե հաշտվենք այդ **չ**-ի կորստին, ինչպե՞ս կասենք «**Կորչի** խավարը»:

6. ՀԱՆԳՉԵԼ

Բազմիմաստ բայ է, նշանակում է «հանգստանալ», «մարել, այլևս չվառվել», փոխաբերաբար՝ «մարել, խավարել», «մեռնել, վերջին հանգիստը գտնել»: Կանոնի համաձայն կազմվում են հանգա, հանգավ ձևերը: Օրինաչափ հրամայականը՝ **հանգի՛ր** (հմմտ. **փախի՛ր**, **թռի՛ր**, **կպի՛ր**), բայց համատարած ասում և գրում են «հանգչի՛ր խաղաղությամբ»:

Չմոռանանք, որ մի խնդիր էլ կա. երբ ասում են «հանգել, հանգում է», բայց ձևականորեն նույնանում է **հանգել**

«եզրակացության գալ, հետևության հասնել» բայի հետ: Սա խոսքային տարբեր իրադրություններում թյուրիմացությունների տեղիք կարող է տալ:

7. ՀԱԼՉԵԼ

Տարածվել են այս բայի **վ**-ով ձևերը՝ **հալվել**, **հալվում է** և այլն, որոնք ընդունելի են գրական լեզվում, թեպետ գրական լեզվի սիրահարները սիրում են **հալչել** տարբերակը (Սարերի ձյունը **հալչում է**): Բայց … «նրա գնացքը գնացել է»:

8. ՍԱՌՉԵԼ

Կարելի է ասել, որ այս բայի **չ**-ն այժմ ուղղակի ընկել է, ուստի ճիշտ են **սառել**, **սառեցի**, **սառեցինք** ձևերը:
Սառա, *սառար*, *սառավ* և մյուս ձևերն ընկալվում են որպես խոսակցական, նույնիսկ բարբառային:

9. ՈՒՌՉԵԼ

Սրա հետ մրցակցում է խոսակցական **ուռել**-ը, որից կազմված **ուռում է**, **ուռեցի** և համանման ձևերն ընդունելի են գրական լեզվի համար:

Հարկ է ասել, որ գրականության մեջ հազվադեպ պատահում են **ուռա**, **ուռար**, **ուռավ** և մյուս ձևերը, որոնք ըստ կանոնի են կազմվում (հմմտ. **փախա**, **փախար**, **փախավ**, **թռա**, **թռար**, **թռավ**...): Այսպես.

Նրա կոկորդի երակները փքվեցին, կուրծքն **ուռավ**, բարձրացավ (Ալ. Շիրվանզադե):

Հայրոն զգաց ապրելու այնպիսի մի սուր պահանջ, որ կուրծքն **ուռավ**, շունչը կտրեց (Դ. Դեմիրճյան):

Եվ ընկեր պաշտոնյան իր մեջ հրճվեց, **ուռավ**, տռզեց, սիրտը տեղից փախավ (Հ. Մաթևոսյան)

Բայց և այնպես մեր օրերում այս ձևերը ընկալվում են որպես խոսակցական կամ էլ բարբառային:

Մենք խոսեցինք չ-ով բայերի այսօրվա՛ մասին: Թե ինչ կլինի ապագայում, դժվար է ասել:

Այժմ հայախոս քանի՞ մարդ է հիշում, որ ժամանակին ունեցել ենք **թաքչել**, **փլչել**, որոնց փոխարինեցին **թաքնվել** և **փլվել** բայերը:

38. ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԲԱՅԱՁԵՎԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(10 դեպք)

Հրամայական եղանակն արտահայտում է հրաման, կոչ, կարգադրություն, թելադրանք, հորդոր, պահանջ, խնդրանք, առաջադրանք, խրատ, պատվեր, ցանկություն և արգելում: Պարզ բայերի ձևերը հայտնի են հայերեն իմացողներին՝ **երգել – երգի՛ր**, **երգե՛ք**, **խաղալ – խաղա՛**, **խաղացե՛ք** և այլն:

Անդրադառնանք այն դեպքերին, երբ հրամայականի կազմությունը և գործածությունը դժվարություններ են ստեղծում հայերեն խոսողների և գրողների համար:

1. **Ել** վերջավորությամբ բայերի դեպքում հրամայականը կազմվում է **–իր** մասնիկով՝ **քայլի՛ր**, **նստի՛ր**, **կառուցի՛ր**, **ների՛ր**: Այստեղ առանձնակի դժվարություն չկա, եթե, իհարկե, մարդը բարբառախոս չէ կամ խոսակցական սխալ ձևեր չի գործածում, ինչպես՝ **գրի՛ր**-ի փոխարեն *գրա՛* կամ **խոսի՛ր**-ի կամ **գովի՛ր**-ի փոխարեն՝ *խոսա՛* կամ *գովա՛*: Այդպես են ասում (սխալվելով իհարկե), քանի որ հրամայականը սխալ սկզբնաձևերից են կազմում՝ *խոսալ*, *գովալ* (**խոսել**, **գովել** ձևերի փոխարեն):

2. Պատճառական բայերի հրամայականը **–ու** վերջավորությամբ է կազմվում: Այսպես՝ **բարձրանալ – բարձրացրո՛ւ** (հոգնակին՝ **բարձրացրե՛ք**), **մոտենալ – մոտեցրո՛ւ** (հոգնակին՝ **մոտեցրե՛ք**):

Ոմանք խոսակցական լեզվում սրանք հաճախ ասում են **ա**-ով՝ *բարձրացրա՛*, *մոտեցրա՛*, որը հակասում է գրական լեզվի կանոնին:

3. Գրավոր խոսքում հրամայականի ձևերը շեշտադրելը պարտադիր է (անգամ եթե խնդրանք կամ ցանկություն են արտահայտում), թեպետ ոմանք դա անտեսում են:

4. Մարդիկ երբեմն չեն կողմնորոշվում սրանց հոգնակին կազմելիս՝ **գրե՛ք**, թե՞ **գրեցե՛ք, ասե՛ք**, թե՞ **ասացե՛ք:** Այսօրվա ավագ սերնդին դպրոցում սովորեցրել են, որ ճիշտ են «երկար»՝ **-եցե՛ք**-ով ձևերը, իսկ «կարճ» ձևերը՝ մերժելի: Ժամանակին այդպես էր: Այժմ համատարած ասում և գրում են **քանդե՛ք**, **խոսե՛ք**: **Քանդեցե՛ք**, **խոսեցե՛ք** գործածողներն անշուշտ ճիշտ են, բայց այսօր նրանք փոքրամասնություն են կազմում. զուգաձևության մեջ «դիրքային փոփոխություն» է տեղի ունեցել: Կարող ենք արձանագրել, որ «կարճ» ձևերը հաղթել են:

5. Խոսքային տարբեր իրադրություններում, հանդիսավոր խոսքում տեղին են **նստեցե՛ք**, **ասացե՛ք**, **հիշեցե՛ք** և նման ուրիշ բայաձևեր: Մի անգամ ուսանողներից մեկն այսպես մեկնաբանեց. «Ինձ թվում է՝ **նստեցե՛ք**-ն ավելի քաղաքավարի ձև է»: Մի անգամ էլ մեկ ուրիշն ասաց, որ իր կարծիքով **նստե՛ք** մի հոգու են ասում, **նստեցե՛ք**՝ մի քանիսին: Բոլորովին էլ այդպես չէ: **Նստե՛ք** և **նստեցե՛ք** ձևերը հավասարարժեք են, տարբերությունը միայն ոճական-իրադրական է (թե ով ե՛րբ և ո՛ւմ է ասում, ի՛նչ երանգ է դնում նրա մեջ):

6. Հարադրավոր բայերի հրամայականի ձևերում հարադիրն է շեշտվում: Այսպես՝ **տո՛ւն** արի, **դո՛ւրս** տարեք, **բա՛ց** թող, **վե՛ր** կաց, **մո՛տ** բերեք, **հեռո՛ւ** գնացեք:

7. Հրամայականի ժխտականը կազմվում է **մի** մասնիկով, որը շեշտակիր է՝ **մի՛ խանգարիր**, **մի՛ վնասիր**, **մի՛ գնա**, **մի՛ արա**:

Շատ-շատերը բայաձևի վերջի **ր**-ն զեղչում են՝ ասելով **մի՛ խանգարի** (նմանեցնելով **ա**-ով վերջացող ձևերին՝ **մի՛ գնա**)։ Բայց կանոնը դեռևս չի փոխվել, ուստի այն հատկապես գրավոր խոսքում (մասնավորապես պաշտոնական) պետք է պահպանել։ Խոսակցական լեզվում մարդն ազատ է։

8. Մինչև վերջերս հրամայականի ժխտական ձևերի մեջ տարբեր դասագրքերում (դպրոցական, համալսարանական) գրում էին այսպիսի նմուշներ՝ **մի՛ մտնիր**, **մի՛ մտնեք**, բայց այդ ձևերն այսօր գործածությունից լիովին դուրս են մղվել։ Դրանց փոխարեն ասում են (և ճիշտ են անում) **մի՛ մտիր**, **մի՛ մտեք**։ Լեզուն խոսողների գործը հեշտացրել է (կամ էլ խոսողներն են հեշտացրել իրենց գործը). դրական ձևերից **մի՛**-ով կազմում են ժխտականները՝ **մտի՛ր**, **մտե՛ք** - **մի՛ մտիր**, **մի՛ մտեք**։

Ավելի ու ավելի քիչ ենք լսում և կարդում **մի՛ վախենա**, **մի՛ զարմանա**, համատարած են և միանգամայն ընդունելի **մի՛ վախեցիր**, **մի՛ զարմացիր** և նման ձևերը, որոնք կազմվում են բուն հրամայականին ավելացնելով **մի՛** մասնիկը՝ **վախեցի՛ր** - **մի՛ վախեցիր**, **զարմացի՛ր** - **մի՛ զարմացիր**։

Հին ձևերը տեսնում ենք դասական գրականության մեջ։

9. Ի՞նչ անել այն դեպքերում, երբ հաջորդաբար հրամայականի մի քանի ձևեր են գործածվում, շեշտադրե՞լ։ Ոմանք ասում են, թե միայն առաջինը շեշտենք, հերիք է։ Համոզված ենք, որ հրամայականի երկու և ավելի ձևերի դեպքում բոլորն էլ պիտի շեշտադրենք։ Հիշենք աստվածաշնչյան հայտնի նախադասությունը «**Աճե՛ք (աճեցե՛ք), բազմացե՛ք, լցրե՛ք երկիրը և տիրե՛ք (տիրեցե՛ք) դրան**»։

10. Երբ խնդրանք, աղերսանք է, հրամայական եղանակի բայաձևերն արտասանվում են բացականչական երանգով։ Գրավոր խոսքում դրվում է բացականչական նշան։ Օրինակ՝

Օգնի՜ր ինձ, Մարիա՛մ,
Անադարտ մնամ ,
Ա՛յն ճահճանման աղտ-աղարտի մեջ,
Որ դժգոհություն բառով է կոչվում։ (Պ. Սևակ)

39. *ՊԻՏԻ* ԵՎ *ՊԵՏՔ Է* ԵՂԱՆԱԿԻՉՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(8 դեպք)

Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած...
(Հովհ. Թումանյան, «Հայրենիքիս հետ»)

Քերականության դպրոցական դասագրքերում հստակ գրված է, որ հարկադրական եղանակի բայաձևերը կազմվում են **պիտի** կամ **պետք է** եղանակիչներով՝ **պիտի գնամ** և **պետք է գնամ**: Հայերեն խոսողներն ու գրողներն էլ հանգիստ գործածում են այդ ձևերը: Այնինչ... Կան մի քանի դժվարություններ, ինչպես և նրբություններ, որոնք հաշվի առնելը կբարելավի հայերեն խոսքի որակը:

Ներկայացնենք 7 դեպք:

1. **Պետք է** եղանակիչն ընդգծում է գործողության հարկադրաբար, անհրաժեշտաբար կամ պարտադիր կատարվելու բնույթը, այդ իմաստը կարծեք **պիտի**-ից ավելի ուժեղ է արտահայտում: Այդ նրբիմաստն ակներև կդառնա, եթե համեմատենք «**Վաղը հոսանքը պիտի անջատեմ**» և «**Վաղը հոսանքը պետք է անջատեմ**» նախադասությունները: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ պաշտոնական գրություններում ավելի շատ գործածվում է **պետք է**-ն:

2. Երբ **պիտի** և **պետք է** եղանակիչներին ավելանում է **որ** շաղկապը, գործողության անհրաժեշտաբար կատարվելու իմաստը մեղմանում-թուլանում է: «**Արամը պիտի որ** (կամ **պետք է որ**) **գա**» նախադասության մեջ հստակ նկատելի է, որ Արամի գալը հաստատ չէ, այլ ենթադրություն է գալու մասին, հավանական է, որ գա:

3. Երբ միևնույն խոսքաշարում **պիտի** (կամ **պետք է**) եղանակիչով մեկից ավելի ձևեր կան, ապա խոսողի որոշելիքն է՝

այն դնել միայն առաջինի՞ մոտ, թե՞ կրկնել։ Երկուսն էլ ճիշտ են։ Կրկնում են, եթե ուզում են շեշտել տարբեր գործողությունների կատարման անհրաժեշտությունը կամ պարտադիր լինելը։ Այսպես.

Չգիտեի, թե ինչ ***անուն պիտի տայի*** *այդ տեսակցությանը, ինչով* ***պիտի արդարացնեի*** *միջամտությունս, ինչ* ***պիտի ասեի****, ինչպես* ***պիտի «հանգստացնեի»*** *Սառային* (Նար-Դոս, «Սպանված աղավնին»)։

Այս նույն միտքը մեկը կարող է գրել այսպես, և դա ճիշտ կլինի. *«Չգիտեի, թե ինչ* ***անուն պիտի տայի*** *այդ տեսակցությանը, ինչով* ***արդարացնեի*** *միջամտությունս, ինչ* ***ասեի****, ինչպես* ***«հանգստացնեի»*** *Սառային»։*

4. Անհանգստանալու կարիք չկա, եթե **պիտի**-ի և բայի մյուս մասի միջև ուրիշ բառ հայտնվի։ Այսպես. «Այդ միությունները **պիտի** շարունակ **փնտրեն** իշխանության հովանավորությունը»։ Այսպիսի շարադասությունը սովորական է, հատկապես բանավոր խոսքում։ Բծախնդիր մարդիկ կարող են պնդել, թե միայն այս տարբերակն է ճիշտ՝ «Այդ միությունները շարունակ **պիտի փնտրեն** իշխանության հովանավորությունը»։ Բայց դա այդպես չէ, քանի որ հայերենի շարադասությանը բնորոշ է այդ ճկունությունը։

5. Այս բայաձևերի ժխտականը կազմելիս մարդիկ երբեմն շվարում են. չ մասնիկը դնել եղանակիչի՞ց, թե՞ բայից առաջ՝ «չպիտի գամ», թե՞ «պիտի չգամ»։ Գրական լեզվի կանոնն ասում է՝ չ-ն միանում է եղանակիչին, ուստի **չպիտի գնամ** և **չպետք է գնամ**։ Խոսակցական լեզվում այդ կաշկանդումը չկա։

6. Բարբառներում **պիտի**-ն ունի տարբեր դրսևորումներ, որոնք իրենց տեղում բնական են։ Օրինակ՝ **տի**-ն (**պիտի**-ի կրճատ ձևն է)։ Գեղարվեստական խոսքում էլ է հանդիպում.

Է՜յ, անխելք մարդ, ե՞րբ **տի** թողնես ապրողն ապրի սրտալի,

Ե՞րբ **տի** ապրես ու վայելես էս աշխարքը շէն ու լի:

(Հովհ. Թումանյան)

7. Գրական-պաշտոնական խոսքում ականջ է սղոցում հատկապես «պըտի» ձևը, որից պիտի խուսափել:

Ընդունելի չէ պաշտոնական խոսքում հնչող «պետք ա [կարողանանք]» ձևը նույնպես: Սա շատերի առօրյա խոսքում գուցեն սովորական է, բայց գրական լեզվում մերժելի է:

8. Հարկավոր է հաշվի առնել, որ արևմտահայերենում **պիտի**-ով ձևերը ցույց չեն տալիս գործողություն կատարելու հարկադրանք, անհրաժեշտություն և պարտադրանք, այլ հաստատ կատարելի գործողություն: Ուստի արևմտահայերեն **պիտի գրեմ**-ը արևելահայը պետք է հասկանա իբրև **գրելու եմ**: Եվ հակառակը՝ արևմտահայերեն **գրելու եմ**-ը արևելահայերենի **պիտի գրեմ**-ն է:

40. ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԵՐՈՎ, ԲԱՅՑ ՕՏԱՐ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՄԲ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

(10 դեպք)

Մեր գրավոր և բանավոր խոսքում աչք են ծակում և ականջ են սղոցում օտար այն բառերը, որոնց հայերեն ընդունելի համարժեքները կան: Սրանք արմատախիլ անելը դժվար չի թվում, որովհետև օտար տարրը խոսքում հեշտ զանազանվում է: Մնում է իմանալ հայերեն համարժեքը և դրանք գործածելու որոշում կայացնել:

Հայերեն բառերով, բայց օտար մտածողությամբ ձևավորված կառույցների հարցն ավելի նուրբ է, քանի որ արտաքուստ խոսքի կազմիչները մայրենի լեզվով են: Եվ ոմանք չեն զգում, որ ասվածն իրականում հայերեն չէ:

Օտարաբան կառույցների բազմաթիվ դեպքեր կան. ներկայացնենք դրանցից ընդամենը 10-ը:

1. *Ժողովրդի մոտ այնպիսի համոզմունք է ձևավորվել, որ ոչինչ փոխել հնարավոր չէ:*

Իսկ ժողովրդի կողքին կլինի՞, գուցե շո՞ւրջը… Համոզմունքը ձևավորվել է ժողովրդի **մեջ**:

2. *Նախագահը գտնում է, որ հարցը պիտի նորից քննարկվի:*

Ո՞վ էր կորցրել, որ նախագահն էլ գտնում է… Անխաթար հայերեն կլինի այսպես՝ «Նախագահը **կարծում է** կամ **համոզված է**»:

3. Հաճախ կարող ենք լսել՝ *«Ո՞նց ես կարծում, նա կհաղթի՞»:* Հայերեն կասենք՝ «**Ի՞նչ ես կարծում**, նա կհաղթի՞»:

4. **Ո՞նց**-ը սխալ է նաև «*Անունդ ո՞նց է*» հարցման մեջ:

Ոմանք, իբր գրականացնելով ո՞նց-ը, ասում են «Անունդ ինչպե՞ս է»: Երեխաներն այս հարցին երբեմն լուրջ-լուրջ պատասխանում են՝ «Լավ է»: Երեխային պիտի հարցնել. «**Անունդ ի՞նչ է**»: Իսկ մեկի որպիսությունն իմանալու համար, բնականաբար, հարցնում ենք՝ «Ո՞նց ես» կամ «Ինչպե՞ս եք»:

5. *Երկար տարիներ Զ. Կիրակոսյանը հանդիսացել է այդ գործարանի փոխտնօրենը:*

Ինչո՞ւ հանդիսացել, ո՞ւմ է պետք բառային այս պաճուճանքը: Հետո էլ ասում ենք, թե հայերեն խոսքը երկար է: Ուղիղ կարող ենք ասել **տնօրենն է եղել** կամ էլ **տնօրենն էր**:

6. *Այն իրենից ներկայացնում է դեղնավուն թափանցիկ հեղուկ:*

Ի՞նչ է նշանակում «իրենից ներկայացնում է». ոչինչ: Նույն միտքը մաքուր և ճիշտ հայերենով կլինի այսպես՝ «Այն դեղնավուն թափանցիկ հեղուկ է»:

7. *Քեզ հետ ինչ-որ բա՞ն է պատահել:*

Հե՞տ: Դա բառացի թարգմանություն է ռուսերենից: Առանց **հետ**-ի պիտի ասվի՝ «**Քեզ** ինչ-որ բա՞ն է պատահել»: Սա՛ է ճիշտ հայերենը:

Անշուշտ ճիշտ է «Քեզ հետ կգնամ թեկուզ աշխարհի ծայրը» նախադասությունը, որտեղ **հետ**–ն իրեն բնորոշ միասնության իմաստով է գործածվել:

8. *Հանրության տարբեր խմբերում այդ մարդիկ մեծ աշխատանք են տանում:*

Ո՞ւր են տանում, ինչո՞ւ են տանում, գուցե նաև բերո՞ւմ են, ո՛վ գիտի: Այնինչ պարզ ու հստակ կարող ենք ասել. «Հանրության տարբեր խմբերում այդ մարդիկ մեծ աշխատանք **են անում** (կամ **կատարում**)»:

9. *Բանը նրանում(ն) է, որ ես ներկա չեմ եղել ժողովին:*

Տարօրինակ է այս «բանը նրանում(ն) է» արտահայտությունը, որովհետև հայերեն մտածողության հետ կապ չունի: Ոմանք ուղղում են, թե պիտի ասել՝ «**Բանն այն է**», մենք էլ ավելացնում ենք, որ կարող ենք առհասարակ հրաժարվել չարաբաստիկ «*Բանը նրանում(ն) է*»-ից: Այդ դեպքում նախադասությունը կլինի այսպիսին՝ «Ես ներկա չեմ եղել ժողովին» կամ «Գիտե՞ք, ես ներկա չեմ եղել ժողովին» և կամ «Ասեմ, որ ես ներկա չեմ եղել ժողովին» և այլն:

Սրա «մոտիկ ազգականներն» են *հարցը նրանում է…*, *խնդիրը նրանում է…*, որոնց ճիշտ տարբերակներն են **հարցն այն է**…, **խնդիրն այն է**…:

10. *Իմ ունեցած միակ ակնոցները սրանք են:*

Սխալ է, երբ խոսքը մեկ **ակնոց**ի մասին է: Իսկ եթե մի քանիսը լինեն, ապա, ինքնըստինքյան հասկանալի է, կասենք **ակնոցներ**: Հաճախ էլ ասում են *ակնոցներ է կրում*: Հայերեն մտածողությամբ պիտի ասվի **ակնոց է դնում**:

41. ԽՈՐԹ *ՄՈՏ*

(5 դեպք)

Մոտ-ը հայերենի ամենահաճախ գործածվող բառերից է: Բազմաթիվ իմաստներ ունի (մասնագիտական լեզվով ասած՝ այն կապ է,ածական և մակբայ): Նշանակում է.

1. «կողքը, կողքին» (Կանգնել էր ծառի **մոտ**),
2. «ժամանակով քիչ առաջ կամ քիչ հետո» (**Մոտ** անցյալում այլ կերպ էր. **Մոտ** օրերս հանդիպելու եմ նրան),
3. «փոքր հեռավորության վրա եղած. մոտիկ» (**Մոտ** ճանապարհով կգնանք),
4. «մտերիմ, սրտակից, հարազատ» (**Մոտ** ընկերներ են),
5. «մոտավորապես, գրեթե» (**Մոտ** հինգ տարի չէր եղել գյուղում),
6. «հետը» (երբ գործածվում է **ս**, **դ** և **ը** հոդերի հետ) (**Մոտը** շատ փող կա՞ր. **Մոտդ** բացիչ կա՞. Գրիչը **մոտս** չէ),
7. «հետ, միասին» (Ազգականների **մոտ** է ապրում),
8. «համեմատությամբ» (Սիմոնի **մոտ** նա միամիտ երեխա է),
9. «ներկայությամբ» (Հորաքրոջ **մոտ** իրեն լուրջ է պահում):

Մոտ-ը տեսնում ենք հարադրություններում (դարձվածքներում)՝ **մոտ բերել** «մոտեցնել», **մոտ գալ** «մոտենալ», **մոտ զգալ** «մեկին մտերիմ ընդունել՝ համարել», **մոտ լինել** 1. «(տարածությամբ) մոտիկ լինել», 2. «մտերիմ՝ սրտակից լինել», նաև **խելքի(ն) մոտ** «հավանական, հնարավոր. տրամաբանական» և կրկնությամբ՝ **մոտ-մոտ անել** «ջանալ (քծնանքով) մոտիկություն՝ մտերմություն հաստատել»:

Ծանրաբեռնված այս բառի բեռը հայախոս մարդիկ ավելի են ծանրացնում հատկապես հայերենին խորթ՝ օտար լեզվի ազդեցությամբ ստեղծված կապակցություններով: Դրանք կազմվում են հայերեն բառերով, բայց օտար լեզվամտածողությամբ: Այդ կապակցություններն այնքան են

տարածվել, որ ոմանց հայերենին հարազատ կառույցներն են երբեմն անսովոր թվում:

Ներկայացնենք այդպիսի գործածությունների 5 նմուշ: Փակագծերում կտանք դրանց ճիշտ տարբերակները կամ կհուշենք, թե ինչպե՞ս կարելի է ազատվել օտար կառույցներից:

1. Մեր ժողովրդի *մոտ* խոր համոզմունք է ձևավորվել, որ .... (կարող ենք այսպես ասել՝ «Մեր ժողովուրդը խոր համոզմունք ունի, որ ....» կամ «Մեր ժողովրդի մեջ խոր համոզմունք է ձևավորվել, որ ....»):

2. Սաթենիկի *մոտ* չի ստացվում (Սաթենիկը չի կարողանում, ձախողում է, Սաթենիկին չի հաջողվում և այլն: Հարազատ չէ **ստացվել** բայի այս գործածությունը նույնպես):

3. Երեխայի *մոտ* կարմրուկ է (Երեխան կարմրուկով է վարակվել, հիվանդացել և այլն):
4. Աբեղյանի *մոտ* գրված է (ճիշտ հայերենով կարող ենք ասել՝ Աբեղյանի գրքում, Աբեղյանը գրել է, ըստ Աբեղյանի, Աբեղյանն այսպիսի տեսակետ ունի):

5. Այսպիսի տղաների *մոտ* երազանքները միշտ իրականանում են (անբնական է հնչում. կարդանք առանց **մոտ**-ի, բնական և ճիշտ հայերեն կդառնա):

Եթե առաջ **մոտ**-ի այսպիսի գործածությունները բնորոշ էին ռուսական կրթություն ստացածների խոսքին (գրավոր և բանավոր), ապա այժմ դրանք գրեթե համատարած են դարձել: Բժիշկները, օրինակ, ասում են, թե պարզապես անհնար է հրաժարվել դրանցից, թարգմանիչները հաճախ չեն զգում, որ հայերեն բառն օտար մտածողությամբ ձևավորված կապակցության մեջ է հայտնվել, գիտությամբ զբաղվողները չեն նկատում խորթ **մոտ**-ը և ազատորեն գործածում են իրենց գրքերում, հոդվածներում և դասախոսություններում: Եվ

այդպես մեր աչքն ու ականջը աստիճանաբար վարժվում են անհարազատ **մոտ**-երին:

Ամփոփենք հարց-առաջադրանքով:

Դուք տրվածներից ո՞րը (կամ որո՞նք) կընտրեք իբրև ճիշտ տարբերակ(ներ)՝

ա) Իմ մոտ մի միտք ծագեց:
բ) Ինձ մոտ մի միտք ծագեց:
գ) Գլխիս մեջ մի միտք ծագեց:
դ) Գլխումս մի միտք ծագեց:

42. ՍԵՂՄ ԵՎ ՃԻՇՏ

(10 դեպք)

Մենք երբեմն չենք խնայում մեր և դիմացինի ժամանակը (նյարդերի մասին չխոսենք). խոսելիս և գրելիս գործածում ենք ավելորդ բառեր, որոնք երկարացնում, նաև սխալ են դարձնում խոսքը: Եթե մեր գրավոր և բանավոր խոսքից զեղչենք ավելորդ ու սխալ այդ միավորները, ապա խոսքը կդառնա միաժամանակ թե՛ սեղմ, թե՛ ճիշտ և թե՛ հայերեն:

Ներկայացնենք 10 դեպք:

1. Ավելորդ **դա**...

«Պետական դուման ~~դա~~ Ռուսաստանի Դաշնային ժողովի ստորին պալատն է» նախադասությունից եթե հեռացնենք ավելորդ **դա**-ն, որը ռուսերենի ազդեցությամբ է այստեղ հայտնվել, ապա ամեն ինչ տեղը կընկնի:

2. ….**իցս**+~~**անգամ**~~

Բազմիցս, **քանիցս** բառերի -**իցս** մասնիկը նշանակում է «անգամ», ուստի սրանց կողքին **անգամ** դնելը ավելորդ է և սխալ (**բազմիցս** ~~անգամ~~ և **քանիցս** ~~անգամ~~): Զեղչելով **անգամ**-

ը՝ երկար և սխալ կապակցությունների փոխարեն կունենանք սեղմ և ճիշտ բառերը:

3. **Կրկին**, առանց **անգամ**-ի

Կրկին նշանակում է «երկրորդ անգամ, ևս մեկ անգամ, դարձյալ», ուստի սխալ է **կրկին**-ի կողքին **անգամ** բառը դնելը: Ճիշտ է **կրկին հիշեցնել**, սխալ է *կրկին ~~անգամ~~ հիշեցնել*:

4. **Ցտեսություն**, առանց **Ձեզ** / **ձեզ**-ի

Հրաժեշտի այս բառը՝ **ցտեսություն**-ը, պետք է գործածել առանց **Ձեզ** / **ձեզ**-ի, ում հետ էլ խոսելիս լինենք, քանի որ նշանակում է «մինչև նոր՝ հաջորդ տեսություն»:

Բարև Ձեզ / **ձեզ**-ը ճիշտ է, քանի որ բարևողը բարին է մաղթում դիմացինին, իսկ **ցտեսություն** բառի պարագայում նման բան չկա: **Ձեզ** բառի միջոցով հրաժեշտի արտահայտությունը բարեկիրթ և հարգալից չի դառնում, այլ պարզապես սխալ (ու երկար):

Ուստի պետք չէ երիտասարդներից և ստորադասներից պահանջել **ցտեսություն** բառի կողքին պարտադիր գործածել **Ձեզ** / **ձեզ**-ը՝ որպես հարգանքի և քաղաքավարության նշան:

5. **Վերադառնալ**, առաց **հետ**-ի

Վերադառնալ նշանակում է «նորից գալ կամ գնալ այն տեղը, որտեղից հեռացել կամ գնացել է», այսինքն՝ **վերադառնալ** = **հետ (ետ) դառնալ**: Ուստի **վերադառնալ** բառից առաջ **հետ** / **ետ** դնելը ավելորդ և սխալ է:

Բնական է, որ նույն կերպ սխալ է փոստային բաժանմունքներում և գրասենյակներում գործածվող **հետվերադարձ** բառը: Պիտի լինի պարզապես **վերադարձ:**

6. **Ծանոթանալ ինչի՞ն**

Երբ մարդկանց հետ ենք ծանոթանում, բնական է **հետ** կապի գործածությունը. փոխադարձ ծանոթություն է: Բայց երբ իրավիճակին, գրքին, փաստաթղթին ենք ծանոթանում, **հետ** բառի գործածությունը թե՛ ավելորդ է և թե՛ սխալ: Ուստի

ծանոթացանք իրավիճակին՝ գրքին՝ փաստաթղթին, առանց **հետ**-ի:

7. **Ջութակ նվագել**

Ոմանք օտար լեզվի ազդեցությամբ ասում են *ջութակի վրա նվագել, դաշնամուրի վրա նվագել*, բայց դա հայերեն մտածողությամբ սխալ է, անընդունելի: Հայ մարդն ասել ու ասում է **դուդուկ նվագել**, **թառ նվագել**, նույն կերպ էլ պիտի ասի **ջութակ նվագել**, **դաշնամուր նվագել**, **տավիղ** ու **երգեհոն նվագել** և այլն:

Սրամիտներն ասում են, թե մեկը կարող է դաշնամուրի վրա նստած կիթառ նվագել: Կարող է, բայց խոսքը դրա՛ մասին չէ, այլ տվյալ նվագարանով (կամ երաժշտական գործիքով) նվագելու: Այդ դեպքում՝ առանց **վրա** կապի: Առանց բացառության:

8. **Պարունակում է**

Պարունակել նշանակում է «իր մեջ ունենալ», ուստի միանգամայն ավելորդ է այդ բայի կողքին նորից **իր մեջ** դնելը: Սխալ է «Ըմպելիքն իր մեջ պարունակում է ջուր, կիտրոն, հատապտուղներ և շաքար», ճիշտ է «Ըմպելիքը պարունակում է ջուր, կիտրոն, հատապտուղներ և շաքար»:

Նույնն է **ամփոփել** բայի դեպքում: Այսպես, պիտի ասենք «**Ժողովածուն ամփոփում է** գրողի վերջին տարիների կարճ պատմվածքները», առանց **իր մեջ**-ի:

9. **Ներս մտնել և դուրս գալ**

Ոմանք բանավոր խոսքում **ներս մտնել** և **դուրս գալ** բայերի կողքին մեկ անգամ էլ են դնում **ներս** և **դուրս** միավորները: Օրինակ՝ «Ընկերներիս հետ **դուրս եկա** ~~դուրս~~, տեսա լրիվ մութ է»: Պարզ է, որ երկրորդ **դուրս**-ը լրիվ ավելորդ է: Այդպես էլ **ներս**-ը՝ **ներս մտա** ~~ներս~~ կապակցության մեջ:

10. ~~Իրենից ներկայացնում է~~

Ռուսաբանություն է **իրենից ներկայացնել** կապակցությունը: Դիտարկենք այս նախադասությունը՝ «Քչերը գիտեն, թե ի՛նչ է իրենից ներկայացնում քիուեսթյան սկզբունքը»: Հանենք **իրենից ներկայացնում** բառերը, նախադասությունը կդառնա իսկապե՛ս հայերեն:

43. ՀԱՐՑԱԿԱՆ ՆՇԱՆԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(14 դեպք)

Հայերենի հարցական նշանը յուրահատուկ է. դրվում է այն բառի վրա, որը հարցական հնչերանգի կրողն է: Շատ լեզուներում այն դրվում է նախադասության վերջում (իսպաներենում մեկն էլ սկզբից են դնում):

Հայերեն սովորած մարդիկ դեռևս դպրոցական տարիքից գիտեն, որ հարցական նշանը (մեկ բառով ասում են նաև **պարույկ**) սովորաբար դրվում է բառի վերջին ձայնավորի վրա (**Վահա՞ն**, **տասնվե՞ց**, **քանի՞**): Ամեն ինչ պարզ ու դյուրին է թվում, այնինչ կան նաև հարցական նշանի գործածության դժվարություններ: Անդրադառնանք դրանց:

1. **Որտե՞ղ**, **ինչպե՞ս**, **ինչքա՞ն**, **ինչպիսի՞**, **ինչո՞ւ**. հարցական նշանը դրվում է վերջին վանկի ձայնավորի վրա: Բայց **քանի՞երորդ**, **ո՞րերորդ**, այսինքն՝ հարցական նշանը դրվում է ո՛չ վերջին վանկի ձայնավորի վրա, այլ –**երորդ** ածանցին նախորդող վանկի ձայնավորի. բառերն այդպես էլ արտասանվում են: Այդպես է նաև –**երորդ** ածանցով կազմված բառերի պարագայում՝ **հի՞նգերորդ**, **տա՞սներորդ**:

2. **Մի՞թե** բառի հարցական նշանը դրվում է առաջին վանկի ձայնավորի՝ **ի**-ի վրա: Բառի բաղադրիչները գրվում են

անանջատ. տպագիր բառն ընթերցողին անջատ է թվում **ի**-ի վրա դրված հարցական նշանի պատճառով, քանի որ նշանը որոշակի տարածք է զբաղեցնում՝ այդպես իրարից հեռացնելով **ի**-ն և **թ**-ն: Ահա այսպես.

Մի՞թե վերջին պոետն եմ ես,
Վերջին երգիչն իմ երկրի (Վ. Տերյան):

3. **Չէ՞ որ** շաղկապի վրա միշտ հարցական նշան է դրվում: Ի դեպ, եթե **չէ՞ որ**-ը բարդ նախադասության շարունակության մեջ է (բացատրության կամ հիմնավորման իմաստով), ապա նրանից առաջ միջակետ է դրվում: Այսպես. «Հաշտվե՛ք վերջապես. **չէ՞ որ** ազգականներ եք»:

4. Հարցական նշան է դրվում **թե**-ի վրա և նրան նախորդող այն բառի վրա, որը հակադրության եզրն է: Այսպես.

- Ի՞նչ կուզեիք, **թե՞յ**, **թե՞** թան,- ավելացրեց նա,- ի՞նչ կցանկանայիք քնից առաջ (Վ. Արամյան):

Եվ **ծառե՞րն** են շատ այս լեռնակղզում,
Թե՞ վեր ծառացած սուրբ խաչքարերը: (Պ. Սևակ)

5. **Արդյոք** բառի վրա հարցական նշան հազվադեպ է դրվում: Չեն դնում հատկապես այն ժամանակ, երբ նախադասության մեջ հարցական դերանուն կա: Այսպես.

Անանց կարոտն է իմ սիրտը տանջում,
Արդյոք ո՞ւր ես դու, **արդյոք** ո՞ւր ես դու (Վ. Տերյան):

Կամ էլ հարցական հնչերանգով արտաբերվող որևէ բառ կա: Այսպես.

Արդյոք տխրո՞ւմ է ինձ համար հեռվում,
Արդյոք մորս պես ինձ խղճո՞ւմ է նա (Հովհ. Շիրազ):

6. **Գուցե** և **երևի** բառերը կասկած, երկբայություն, երկմտություն են արտահայտում, բայց հարցական նշան չեն ստանում:

7. Հարցական նշանը ը-ի վրա չի դրվում, այլ նախորդող ձայնավորի, ինչպես՝ **քանի՞սը**, **ի՞նչը, Կապա՞նը**:

8. Ոմանք (հաճախ նաև գրագետ մարդիկ, գրողները) բարդ նախադասություններում **թե** շաղկապին հաջորդող հարցական դերանունները գրում են հարցական նշանով: Օրինակ՝ Սպասում էր, թե ե՞րբ պետք է թագավորը կանչի իրեն (Ստ. Զորյան):

Փորձենք արտասանել այդ նախադասությունները: Եթե ուշադիր լինենք, ապա հստակ կդառնա, որ այդտեղ հարցական հնչերանգ չկա: Այսպիսի դեպքերում **թե** շաղկապից հետո եկող հարցական դերանունները շեշտվում են, ուստի հարցական նշանի փոխարեն շեշտ պիտի դնել: Օրինակներ՝ «Հարկադրված էր պառկել և սպասել, թե **ե՛րբ** պետք է բուժվեն վերքերը» (Ստ. Զորյան), «Թաթոն հողը ծամելով իմանում էր, թե **ե՛րբ** պետք է ցանել» (Խ. Դաշտենց):

Շատերը կետադրական ոչ մի նշան չեն դնում: Օրինակ՝ «Նա պատվիրեց, որ հարևանի տղային, գյուղական դպրոցի իր դասընկերոջը հայտնվեն, թե երբ ու որտեղ կարող է գտնել իրեն քաղաքում» (Ռ. Աթայան):

Լավագույն տարբերակը շեշտ դնելն է:

9. Դպրոցական դասընթացի ժամանակ սովորեցնում են, որ գրական հայերենում հարցական նշանը, որպես կանոն, դրվում է դերբայի վրա՝ **սովորո՞ւմ է**, **գնացե՞լ եք**, **հանձնելո՞ւ եք**: Միայն մեկ օրինակ բերենք.

\- Հիշո՞ւմ ես մեր առաջին զրույցը, Ռուբե՛ն, երբ ես հարցրի, թե կարո՞ղ ես այդ ծանր բեռն առնել քո ուսերին (Ալ. Թոփչյան):

Բարբառային որոշ տարածքներում, նաև խոսակցական հայերենում հարցական հնչերանգով արտասանում են նաև օժանդակ բայը: Դա հազվադեպ թափանցում է գրավոր խոսք:

Օրինակ՝ «Երեխա է, էլի, բան չի հասկանում, համ էլ խեղճը իսկի մեր տեսել է՞…» (Շ. Թաթիկյան):

10. Ժխտական բայաձևերի օժանդակ բայը հարցական նշան ստանում է. դա կանոնական է: Այսպես՝ **չե՞ս հավատում**, **չի՞ գալու**, **չե՞նք գնալու**:

11. Ավանդաբար հարցական նշանը դրվում է **ու**-ի երկու մասնիկների միջև: Օրինակներ՝ **ինչո՞ւ**, **տո՞ւն**, **բո՞ւ**:

12. Հարցական նշան է ստանում նաև **և**-ը (**և՞**), որն իր կազմում ձայնավոր ունի, մեծատառի դեպքում նշանը բնականաբար դրվում է **Ե**-ի վրա՝ **Ե՞վ**: Օրինակներ՝

- Մենակ ձանձրացար **և՞**…
- Եվ գնացի նկարիչ ընկերներիս մոտ (Գ. Խանջյան):
- Խոսեցի…
- **Ե՞վ**… (Շ. Թաթիկյան):

13. Հարցական դերանունները գործածվում են նաև բացականչական հնչերանգով, երբ հիացմունք կամ զարմանք են արտահայտում: Օրինակ՝ «**Ինչպիսի՛** տազնապ, **ինչպիսի՛** զայրույթ կար նրա աչքերում» (Վ. Անանյան): Այո՛, հարցական դերանուն են կոչվում, բայց այս դեպքերում բացականչական նշան են ստանում:

14. Տեքստում հարցական նշանը կարող է դրվել փակագծերում, երբ գրողը իր կասկածն է ուզում արտահայտել որևէ փաստի կամ մտքի առնչությամբ: Օրինակ՝ «Ըստ որոշ հետազոտողների՝ ժամանակակից աշխարհում ավելի շատ երկլեզու կամ բազմալեզու մարդիկ կան, քան միալեզու, և հասարակությունների մեծ մասը բազմալեզու է (՞), մի բան, որ պետական հաստատությունները չեն ընդունում»:

44. ՄԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ՄԱՍԻՆ. *ԿՈՂՄԻՑ*

Նախ պարզենք, թե ի՛նչ է **կողմից**-ը: Սա **կողմ** բազմիմաստ բառի բացառական հոլովաձևն է, որ քարացել ու բառի արժեք է ձեռք բերել: Գործածվում է տարբեր կապակցություններում՝ արտահայտելով տարբեր իմաստներ: Այսպես.

Իմ կողմից շնորհակալություն հայտնեք աշխատողներին նախադասության **իմ կողմից**-ը նշանակում է «իմ անունից»:

Որդիների կողմից նա բախտավոր է նախադասության **որդիների կողմից** կապակցությունը նշանակում է «ինչ վերաբերում է որդիներին»:

Ամեն կողմից էլ ձեր վիճակն անհուսալի է նախադասության **կողմից**-ը նշանակում է «տեսանկյունից»:

Քո կողմից արգելք չկա՞ նախադասության **կողմից**-ով կապակցությանը «որքան որ կախված է մեկից» մեկնաբանությունը կարող ենք տալ:

Սովորական է **կողմից** բացառական հոլովաձևի գործածությունն իր հիմնական՝ տարածական իմաստով, ինչպես՝ «Զորքը քաղաքի արևմտյան **մուտքի կողմից** առաջ գնաց»:

Կողմից բառի այս գործածությունները խնդրահարույց չեն, ժողովուրդը դրանք կիրառում է անհրաժեշտաբար, մեծ կամ փոքր հաճախականությամբ: Այստեղ չարաշահում չկա: Խոսքն այլ բանի մասին է:

Չարաշահումը վերաբերում է **կողմից** բառի այն գործածություններին, որոնք տեսնում ենք կրավորական կառուցվածք ունեցող նախադասություններում (օրինակ՝ *Նա ներվեց իմ կողմից*), և որոնք վերջին շրջանում հեղեղել են հայերեն գրավոր և բանավոր, այդ թվում՝ գիտական և պաշտոնական խոսքը: Մանրամասնենք:

Գյուղացին մշակում է հողը նախադասության մեջ մշակելու գործողությունն անմիջապես անցնում է հողի վրա:

Սա ներգործական կառուցվածքի նախադասություն է: Քերականության լեզվով ասած՝ ունենք նախադասության դասական կառուցվածք՝ ենթակա-ստորոգյալ-ուղիղ խնդիր: Այս պարագայում ամեն ինչ պարզ է, բնական:

Այս նույն նախադասության իմաստը կարող ենք արտահայտել նաև այլ կերպ՝ **Հողը մշակվում է գյուղացու կողմից**: Քերականության սիրահարները գիտեն, որ **գյուղացու կողմից**-ը ստորոգյալի լրացում է, որ կոչվում է ներգործող անուղղակի խնդիր: Եթե առաջին նախադասության մեջ ենթական (գործողություն կատարողը) **գյուղացին** է, ապա երկրորդում՝ **հողը**, որի վրա ներգործում է գյուղացին՝ իրական գործողություն կատարողը:

Ներգործական կառուցվածքի նախադասությունը կրավորականի փոխակերպելու (կամ կրավորական դարձնելու) վարժանքներ անում են դպրոցում: Համալսարաններում եղածին ավելացնում են ներգործող անուղղակի խնդիր երկրորդական նախադասությունների մասին գիտելիքը: Օրինակ՝ **Ղեկավարին քննադատեց նա, ով ամեննին տեղյակ չէր եղելությունից** – *Ղեկավարը քննադատվեց նրա կողմից, ով ամեննին տեղյակ չէր եղելությունից.*

Քերականական վարժանքներն անհետևանք չեղան. շուտով ամենուրեք տարածվեցին **կողմից**-ով կառույցները: Այժմ դրանք այնքան շատ են տարածվել, որ անգամ գրագետ մարդիկ ասում և գրում են այսպիսի (տարօրինակ) կապակցություններ՝ *այսինչի կողմից գրված գիրքը, հռետորի կողմից հնչեցված միտքը, հաճախորդի կողմից գնված ապրանքը, նախագահի կողմից շնորհված մրցանակը* և այլն: Այնինչ պարզապես կարող էին ասել՝ **այսինչի գրած գիրքը**, **հռետորի հնչեցրած միտքը**, **հաճախորդի գնած ապրանքը**, **նախագահի շնորհած մրցանակը** և այլն: Մի գրականագետ էլ գրել է՝ «*Թումանյանի կողմից թարգմանված բանաստեղծու-*

թյունը»: Փոխանակ սեղմ և ուղիղ ասելու՝ **Թումանյանի թարգմանած բանաստեղծությունը:** Նույնիսկ դպրոցական դասագրքում գրել են՝ *«Հայկական առասպելներն ու վիպերգերը հետագայում մշակվել են մեր գրողների կողմից»,* երբ նույն միտքն ավելի ընկալելի կլիներ **Մեր գրողները հետագայում մշակել են հայկական առասպելներն ու վիպերգերը** ձևակերպմամբ:

Հարց կարող է ծագել՝ մի՞թե **կողմից**-ի այս գործածությունները սխալ են: Խնդիրը ճիշտ ու սխալը չէ, այլ **կողմից**-ի չափազանց չարաշահումը, եթե մեկ բառով բնորոշենք, ապա գերչարաշահումը: Ինչպես տեսանք, շատ դեպքերում այն ուղղակի մոլախոտի պես մի բան է, վատ տեսակի, աներես ու անհամ մոլախոտ, որն ապականում է հայերեն խոսքը:

Հիանալի կլինի, եթե **կողմից**-ի այս կարգի գործածությունները արմատախիլ անենք մեր խոսքից:

Ձեր ~~կողմից արված~~ արածը կարևոր է:

45. *ԵՎ, ՈՒ* ՇԱՂԿԱՊՆԵՐԻ ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(10 դեպք)

Եվ, **ու** շաղկապները հայերենի ամենագործածական բառերի քառյակի մեջ են մտնում: Գրեթե բոլորը գիտեն, որ դրանք միավորում են բառեր, բարդ նախադասություններ կազմող հավասարազոր նախադասություններ և պարբերություններ: Այս շաղկապներն ունեն թե՛ նմանություններ և թե՛ տարբերություններ: Անդրադառնանք դրանց:

1. Հին հայերենն ուներ **և** / **եւ** շաղկապ, իսկ **ու**-ն ժողովրդական խոսքի ազդեցությամբ հետագա ժամանակներում սկսեց գործածվել որպես շաղկապ:

Հիմա էլ **ու**-ն ավելի ժողովրդական կենդանի խոսքին է բնորոշ, իսկ **և**-ը՝ գիտական, վարչական, պաշտոնական խոսքին: Գեղարվեստական գրականության և հրապարակախոսության մեջ երկուսն էլ ազատորեն գործածվում են:

2. **Ու**-ն նախընտրելի է հիմնականում ավելի փոքր միավորներ կապելու համար, իսկ **և**-ը՝ ավելի մեծ միավորներ: Բայց գրողը կամ խոսողը կաշկանդված չէ:

3. Երբ նույն նախադասության կամ պարբերության մեջ **և**, **ու** շաղկապները գործածելու անհրաժեշտություն է լինում, ապա **ու**-ն գործածվում է ավելի սերտ միասնության հարաբերություն ցույց տալու համար (Հայր **ու** որդի գնացին դաշտ): **Եվ** շաղկապը գործածվում է իմաստային ավելի թույլ կապ ունեցող միավորների դեպքում (Արքայի ձեռքին այդ սուրը փայլատակում էր պարսիկների, հռոմեացիների **և** Հայաստանի մյուս թշնամիների դեմ կռվելիս):

4. Երբ կապվող բառերից առաջինը վերջանում, իսկ հաջորդն սկսվում է ձայնավորով, ապա զուտ բարեհնչության տեսանկյունից ցանկալի է **և**-ը (արտասանելիս սրա սկզբում **յ** [յէվ] բաղաձայնը կա, որ կարծես «կոտրում է» ձայնավորների կուտակումը): Այդպես է, օրինակ, այստեղ՝ «Դա պատմական կարևոր իրադարձություն էր Իտալիայի **և** իտալացիների կյանքում»: Բայց չմոռանանք, որ սա պարտադիր չէ:

Իսկ եթե այդ ձայնավորը **ու**-ն է, ապա **և**-ը համարյա պարտադիր է դառնում (Նա գրում էր իր այգ**ու** **և** **ու**րիշներին ուրախություն պարգևելու մասին): Այսպես բարեհունչ է:

5. Ու-ով ենք ասում **ծիլ ու ծաղիկ**, **թուղթ ու գրիչ**, **հաց ու պանիր**, **մարդ ու կին**, **սար ու ձոր**, **տատ ու պապ**, **քույր ու եղբայր** և ուրիշ շատ կապակցություններ: **Ու**-ով միավորվածների սերտ կապի հետևանքով բարդ բառերն են

ձևավորվել՝ **անցուղարձ**, **ասուլիս**, **ելումուտ**, **հարցուփորձ**, **նիստուկաց** և այլն:

Շատ քիչ են **և**-ով միացածները, ինչպես՝ **առևտուր**, **երթևեկ** և այլն:

6. Շատ կապակցություններում **և**-ը հավելման իմաստ է արտահայտում, ինչպես **նաև**-ը (Ծաղկել էին այգու ծառերը, առաջին անգամ ծաղկել էր **և** որդու տնկած խնձորենին), այնինչ **ու**-ն նման գործառույթ չունի:

7. Ոմանք միամտաբար կարծում են, թե շաղկապով նախադասություն չի կարող սկսվել: Կարող է: Ավելին, **և**-ով և **ու**-ով ծավալուն խոսք կարող է սկսվել, հատկապես գեղարվեստական: Հիշենք Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմի առաջին սուրահի սկիզբը.

Եվ քարավանը Աբու-Լալայի՝ աղբյուրի նման մեղմ կարկաչելով՝

Քայլում էր հանգիստ, նիրհած գիշերով, հնչուն զանգերի անուշ ղողանջով:

Հովհ. Թումանյանի «Հոգեհանգիստ» բանաստեղծությունն սկսվում է այսպես.

Ու վեր կացա ես, որ մեր հայրենի օրենքովը հին՝

Վերջին հանգիստը կարդամ իմ ազգի անբախտ զոհերին:

8. Երկու շաղկապն էլ մեծատառ գրության որոշակի դժվարություն են հարուցում ոմանց համար: Երկուսն էլ կազմված են երկու տառից. մեծատառ են գրվում միայն առաջինները՝ **Եվ** (ավանդական ուղղագրությամբ՝ **Եւ**), **Ու**: Բայց չպիտի մոռանանք, որ երբ անհրաժեշտ է լինում ամբողջ բառակապակցությունը կամ նախադասությունը գլխագրերով գրել, ապա միայն այսպես՝ ԵՎ և ՈՒ: Ազդագրի վրա, օրինակ, կգրվի այսպես՝ ՍԵՐ ԵՎ ԽԱՐԴԱՎԱՆՔ, ՊԱՊՆ ՈՒ ԹՈՌԸ (ոչ

թե ~~ՍԵՐ եվ ԽԱՐԴԱՎԱՆՔ, ՍԵՐ և ԽԱՐԴԱՎԱՆՔ, ՊԱՊՆ Ու ԹՈՌԸ~~...):

9. **Եվ**-ը մասնակցում է ուրիշ շաղկապների կազմությանը: Այդ շաղկապները գրվում են անանջատ (**նաև**, **այլև**), անջատ (**բայց և**) կամ էլ ունեն երկգրություն՝ **թեկուզև / թեկուզ և**, **թեպետև / թեպետ և**, **ուստիև / ուստի և**: Միասին գրելու նկատելի միտում կա: **Ու**-ն այս առումով «մեկուսացած է»:

10. **Եվ**-ի կրկնությամբ է ստեղծվել **և՛** ..., **և՛** ... շաղկապը, որի միջոցով հատուկ շեշտվում է թվարկվող յուրաքանչյուր միավորը (Նրա խոսքի մեջ կային **և՛** երախտագիտություն, **և՛** աղերսանք, **և՛** հույս):

Վերջին տասնամյակներին տպագիր խոսքում շատերը շեշտերն անտեսում ու չեն դնում. դա խանգարում է տեքստն անսայթաք ու ճիշտ ընթերցելուն, նաև ընկալելուն:

46. *Ո՞Ր, ԹԵ՞ ՈՎ*

Կարդանք ժամանակակից գրականությունից քաղված նախադասությունները, որոնք պարզորոշ ցույց են տալիս հատուկ և հասարակ գոյականներին կապակցվող **որ** դերանվան գործածության ձևավորված ավանդույթը, որ բնորոշ է հայերենին:

1. **Լևոնը**, **որ** կանգնած էր զրուցողների ուրիշ խմբի մեջ, հարցրեց (Հ. Մաթևոսյան):
2. **Կինը**, **որի** կրծքին կարմրագույն էր ամրացված, Դանիելին ասաց... (Լ. Խեչոյան):
3. Բեմին ամենից մոտիկ նստած էին **երեխաները**, **որոնք** շատ քիչ բանից են արդեն զարմանում (Վ. Պետրոսյան):
4. Այլևս չէր ուզում նեղություն պատճառել **ազգականներին**, **որոնց** տանը առանց իրեն էլ նեղվածք էր (Վ. Գրիգորյան):

Այս նախադասությունների **որ**, **որի**, **որոնք**, **որոնց** հարաբերականների փոխարեն շատերն այժմ **ով**, **ում**, **ովքեր** են գործածում, և դա օրեցօր ավելի ու ավելի է տարածվում: Հիմնավորում են, թե դրանք կապակցվել են անձ ցույց տվող գոյականների, ուստի **որ**-ը և **որոնք**-ը հարմար չեն: Ոմանք նույնիսկ ասում են, թե դա անհարգալից վերաբերմունք է մարդու նկատմամբ. անձին իրի՝ առարկայի տեղ են դնում: Ավելին՝ նույնիսկ կարծիք է հնչում, թե դա արմատացել է խորհրդային ժամանակներում, երբ մարդն իբր արժեք չուներ: Այս կասկածը փարատելու (ավելի ստույգ՝ մերժելու) համար բերենք մեկական օրինակ հայ դասական գրողներից.

խխ

Առանց իր կյանքը վտանգի ենթարկելու անկարելի էր ազատել թշվառին, **որը** գուցե դեռ մեռած չէր (Րաֆֆի):

Խաթունը ցույց տվավ ոսկերիչին, **որը** սպառնացող դեմքով կանգնած էր ներս մտնողների դիմացը (Մուրացան):

Սա է բնական և ճիշտ հայերենը: Սակայն վերջին տարիներին մամուլը, հեռուստատեսությունն ու ռադիոն, պաշտոնյաների խոսքը հեղեղված են անձնանիշ գոյական-ներին կապակցված անբնական **ով**, **ովքեր**, **ում** դերանուննե-րով: Ականջ սղոցող կապակցություններ են: Այսպես, կարդում կամ լսում ենք.

Եկել էր նաև Բելգիայի վարչապետը, *ով* (պիտի լինի **որը**) առաջին անգամ էր այցելում Ծիծեռնակաբերդ: Հարց տանք, և **որ**-ը մեջտեղ կգա. **ո՞ր** վարչապետը՝ առաջին անգամ Ծիծեռնակաբերդ այցելած:

Նրանք այն մարդիկ են, *ովքեր* (պիտի լինի **որոնք**) տասը տարի ճնշվել են (**ո՞ր** մարդիկ. տասը տարի ճնշված):

Այս մոտեցումն այնքան է տարածվել ու արմատացել, որ **ով**-ի միջոցով երկրորդական նախադասությունը սկսել են կապակցել անգամ այն գլխավոր նախադասություններին, որոնցում կապակցվող բառն անձ ցույց չի տալիս: Այսպես. «Հայտնի է առաջին թիմը, *ով* նվաճել է եզրափակիչի

ուղեգիր»: Սա հայերեն լեզվամտածողությանը խորթ, առհասարակ անընդունելի կապակցություն է:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ այսպես պիտի ասվեր՝ «Հայտնի է առաջին թիմը, **որ** (կամ **որը**) եզրափակիչի ուղեգիր է նվաճել»:

Կարող է այսպիսի հարց ծագել. «Իսկ ե՞րբ ենք գործածում **ով**-ը»:

Ով, **ում**, **ովքեր** ենք գործածում հետևյալ կառույցների դեպքում՝ **նա, ով**..., **նրանք, ովքեր**..., **նրան, ում**..., **նրանց, ում** և այլն: Պարզ երևում է, որ **ով**-ը (նաև հոգնակին՝ **ովքեր**-ը) կապակցվել է անձնական դերանվանը: Ահա այսպես.

Քաջ մարդը ոչ թե **նա** է, **ով** չի վախենում, այլ **նա**, **ով** հաղթահարում է այդ վախը (այստեղ էլ հարց տանք. քաջը **ո՞վ** է. չվախեցողը և այլն):

Կամ էլ հոգնակի թվով՝ «Հարգանք բոլոր **նրանց**, **ում** ջանքերի շնորհիվ այսօր առաջընթաց ունենք»:

Չմոռանանք ասել, որ կիրառելի ու ճիշտ է **նրանց, որոնց** կառույցը ևս: Այսպես՝ «Հարգանք բոլոր **նրանց**, **որոնց** ջանքերի շնորհիվ այսօր առաջընթաց ունենք»:

Ի դեպ, **ով**-ը գործածվում է նաև այն դեպքերում, երբ կապակցվում է ուրիշ դերանունների՝ **յուրաքանչյուր ոք**, **յուրաքանչյուր**, **ամեն ոք**, **բոլորը**, **ամենքը** և այլն: Օրինակ՝ «**Յուրաքանչյուր ոք**, **ով** ճանաչում էր նրան, զարմանում էր լսածից»:

Այսպիսով՝ գոյականների հետ (անկախ նրանից՝ անձ է, թե իր) գործածում ենք **որ**-ը, իսկ դերանունների հետ՝ **ով**-ը (կարող է լինել նաև **որ**-ը):

Սա համոզված ասում է **լեզվաբանը**, **որը** քանիցս անդրադարձել է այս խնդրին, **նա**, **ով** հույս ունի, որ վիճակը հնարավոր է շտկել: Վիճակը կշտկեն այն **մարդիկ**, **որոնք** հարգում են հայերենի ավանդույթը, **նրանք**, **ովքեր** պարզապես զգում են հայերենը:

47. *ՈՐՊԵՍԶԻ* ՇԱՂԿԱՊԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(6 դեպք)

Որպեսզի շաղկապը նպատակի հարաբերություն է արտահայտում. սա հայտնի է հայերեն խոսող բոլորին: Քերականության լեզվով ասած՝ այն նպատակի պարագա երկրորդական նախադասությունը շաղկապում է գլխավորի հետ: Այսպես. «Պետք է շտապել դեպի Երզնկա, **որպեսզի** իր զավակն աշխարհ գա գոնե ծածկի տակ». պետք է շտապել *ի՞նչ նպատակով*:

Որպեսզի շաղկապին առնչվող դժվարություններ կան, որոնց կանդրադառնանք՝ քննարկելով 6 դեպք:

1. **Որպեսզի**-ն հաճախ սխալ են գրում և արտասանում՝ է՛լ *«որպեզի»*, է՛լ «*որպիզի», *է՛լ *«որպիսզի»:* Իսկ երբ ասում են **որպիսի**, այդպես **որպեսզի**-ն նույնացնում են ուրիշ բառի՝ դերանվան հետ, որ նշանակում է «ինչպիսի»: Օրինակ՝ «Եթե գիտենայիր, թե որքա՜ն անձկությամբ էի սպասում քեզ... **որպիսի՜** կարոտով» (Մուրացան): Դիտարկենք այս նախադասությունը, որտեղ գործածված են թե՛ **որպեսզի**-ն և թե՛ **որպիսի**-ն. «**Որպեսզի** կարողանամ մի փոքրիկ գաղափար տալ, թե **որպիսի** շրջանի և պայմանների մեջ է սկսվում մանուկի կյանքը, հարկավոր եմ համարում մի քանի մանրամասնությունների մեջ մտնել» (Րաֆֆի):

Որպեսզի-ն գրաբարից է փոխանցվել ժամանակակից հայերենին. սկզբնապես գրվում էր անջատ՝ **որպէս զի**, այնուհետև բաղադրիչները միացել են: Ուշադիր պիտի լինել և բառը ճիշտ գրել ու արտասանել:

2. Տարածված սխալ է **որ** շաղկապի փոխարեն **որպեսզի**-ի գործածելը: Այդ սխալը աստիճանաբար համատարած է դառնում: Սխալը հնչում է հեռուստատեսությամբ, հանդիպում

է մամուլում, կայքերում, պաշտոնավորների և այլոց բանավոր խոսքում, գրեթե ամենուրեք: Ահա այդպիսի սխալի մի քանի օրինակներ՝ «Եվ, այնուամենայնիվ, հարկ կլինի [ի՞նչ], որպեսզի (ՈՐ պիտի լինի) նոր պայմանագիր կնքվի», «Տեսուչին ասեք [ի՞նչ], որպեսզի (ՈՐ պիտի լինի) շուտ գա», «Անհրաժեշտ է [ի՞նչ], որպեսզի (ՈՐ պիտի լինի) ժամանակացույցը խստորեն պահպանվի»:

Խորհուրդ. երբ ուզում եք դիմել ցանկալի **որպեսզի**-ին, մտքում հարց տվեք՝ ի՞նչ նպատակով կամ ինչի՞ համար: Այսպես. «Գրեցի [ի՞նչ նպատակով], **որպեսզի** օգտակար գործ արած լինեմ»: Եթե նախադասության **որպեսզի**-ով հատվածը չի պատասխանում այդ հարցին, ուրեմն **որ** է: Այսպես. «Քաղաքապետարանը որոշեց [ի՞նչ], որ խարխլված շենքը պիտի քանդվի»:

3. Հայերենի որոշ մասնագետներ ասում են, թե **որպեսզի**-ի փոխարեն **որ** գործածելը բնորոշ է խոսակցական լեզվին: Այս կարծիքի պատճառով է թերևս **որպեսզի**-ի այսչափ շատ գործածությունը **որ**-ի փոխարեն: Սա ծայրահեղ մոտեցում է. **որպեսզի**-ի իմաստով **որ**-ի գործածությունը չի հակասում գրական լեզվի կանոնին: Մեկ օրինակ բանաստեղծական խոսքից.

Ես ժպտում եմ, **որ** երկար ճանապարհին չտրտմես (Ե. Չարենց):

Խորհուրդ ենք տալիս **որպեսզի**-ի փոխարեն հանգիստ որ գործածել, քանի որ **որ**-ի գործառույթներից մեկը նպատակի հարաբերություն արտահայտելն է: Այսպես ոչ միայն ճիշտ է, այլև շահում ենք տեղ և ժամանակ:

4. Այն նախադասություններում, որոնցում կան **նրա համար**, **այն նպատակով** կապակցությունները, **որպեսզի** շաղկապը գործածելը ճիշտ չէ. նպատակի գաղափարն արդեն արտահայտված է: Այդպիսի սխալ կա ռուսերենից արված այս

թարգմանության մեջ՝ «Նույնիսկ քարն էլ նրա համար է, *որպեսզի* մի բանի գործածվի» (Ն. Գոգոլ)։ Ճիշտ կլինի այսպես՝ «Նույնիսկ քարն էլ նրա համար է, **որ** մի բանի գործածվի»։

Երկու օրինակ էլ «հայերեն» Լ. Տոլստոյից։ Դրանցից մեկը ճիշտ է. «Լևինը վաղ է եկել **այն նպատակով**, **որ** իրեն մենակ գտնի և առաջարկություն անի» («Աննա Կարենինա»), մյուսը՝ սխալ. «Էլ երբեք չէին խոսում նրա մասին այն նպատակով, *որպեսզի* (ՈՐ պիտի լինի) խոսքերով չխանգարեն, ինչպես իրենց էր թվում, զգացմունքի այն բարձրությունը, որ կար իրենց մեջ» («Պատերազմ և խաղաղություն»)։

Ուստի նշված դեպքերում կրկին **որ** շաղկապը պիտի գործածել։

5. Ռուսաբանություն է (ռուսերենից ուղղակի թարգմանություն կամ ռուսերեն մտածողության արգասիք) **որպեսզի**-ով այսպիսի կապակցությունը՝ «Հարկավոր է օգնել նորաստեղծ ձեռնարկություններին, **որպեսզի** տնտեսական առաջընթաց *ունենալ*»։ Հայերեն ճիշտ ձևակերպված կլինի այսպես. «Հարկավոր է օգնել նորաստեղծ ձեռնարկություններին, **որպեսզի** տնտեսական առաջընթաց ունենանք»։ Այսինքն՝ **որպեսզի**-ին հաջորդող կապակցությունում բայը խոնարհված պետք է լինի, քանի որ նախադասության հետ գործ ունենք։

Իհարկե, կարող ենք նաև այսպես ասել՝ «Տնտեսական առաջընթաց ունենալու համար (կամ նպատակով) հարկավոր է օգնել նորաստեղծ ձեռնարկություններին»։

6. Մոլորություն է, թե շաղկապով նախադասություն չի կարելի սկսել։ Կարող ենք։ Դա սովորական է և միանգամայն ճիշտ։ Օրինակ՝ «**Որպեսզի** այդպիսի անակնկալներ չլինեն, այսօր երեկոյան դու և հայրդ իմ զորականների ուղեկցությամբ կմեկնեք հարավ» (Հ. Խաչատրյան)։

48. ԿՐԿՆԱԴԻՐ ԵՎ ԶՈՒԳԱԴԻՐ ՇԱՂԿԱՊՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(7 դեպք)

Շաղկապները հիմնականում արտահայտվում են մեկ բառով (անդրադարձել ենք **և**, **ու**, **որպեսզի**, **որ** շաղկապներին)։ Լինում են նաև երկու բառով կազմված շաղկապներ՝ բառի կրկնությամբ (կրկնադիր) և տարբեր բառերի զուգադրմամբ (զուգադիր)։

Կրկնադիր և զուգադիր շաղկապներն ունեն գործածության առանձնահատկություններ, որոնց կանդրադառնանք՝ ներկայացնելով 7 դեպք։

1. Բառի կրկնությամբ կազմված շաղկապները հատուկ հնչերանգով են արտասանվում։ Գրավոր խոսքում դրանց կազմիչները շեշտադրվում են։ Այսպես՝ **և՛** ... **և՛**, **է՛լ** ... **է՛լ**, **թե՛** ... **թե՛**, **կա՛մ** ... **կա՛մ**, **ո՛չ** ... **ո՛չ**։

Ըստ կանոնի՝ երկրորդ եզրից առաջ ստորակետ է դրվում։ Օրինակներ՝ «**Թե՛** Արտազերսում, **թե՛** ամենուրեք Հրահատի մտքում Նազենին էր, աչքերի առաջ՝ նրա պատկերը» (Ստ. Զորյան), «Շտապենք, Հեբո՛ւ, **կա՛մ** դեպի մահ, **կա՛մ** դեպի փրկություն» (Վ. Հարությունյան), «Քարերը մթին ընդերքում **ո՛չ** անձրևի տակ են եղել, **ո՛չ** մշուշն է նրանց լիզել» (Ա. Բակունց)։

Ցավալի է, որ գրավոր խոսքի համար հաստատված կանոնը, որ շեշտերը պիտի դրվեն, հաճախ անտեսվում է։ Այնինչ շեշտադրված նախադասությունը մղում է ճիշտ կարդալու և այդպիսով նաև ճիշտ հասկանալու գրվածը։

2. Ստորակետը չի դրվում, եթե **թե՛** ... **թե՛**, **կա՛մ** ... **կա՛մ** շաղկապների վերջին (երկրորդ, երրորդ ...) եզրից առաջ **և** կա։ Այսպես՝ «Այս փորձը կարող է **թե՛** հաջող և **թե՛** անհաջող

վերջանալ» (Ա. Շայբոն), «Այդտեղ են կատարվել **թե՛** հորս, **թե՛** հորեղբորս հարսանիքը և **թե՛** իմ կնունքը» (Ստ. Զորյան):

3. Երբեմն մարդկանց թվում է, թե երբ **կա՛մ ... կա՛մ**, **ո՛չ ... ո՛չ** շաղկապների երկրորդ եզրին **էլ** է ավելանում, շեշտը թուլանում է, ուստի գրավոր խոսքում այն չեն արտացոլում: Օրինակներ մամուլից՝ «Տնօրենը, ինչպես մեզ հայտնեցին, *կամ* տեղում չէր, *կամ էլ* «գործով նախարարություն էր գնացել»», «Ամբաստանյալն ընդմիջման պահին հրաժարվել էր անգամ սննդից (մեր այս տեղեկատվությունը *ոչ* հաստատեցին, *ոչ էլ* ժխտեցին)»: Սա ճիշտ մոտեցում չէ: Երկու շեշտն էլ պիտի դնել, թեև երկրորդն առաջինի համեմատ որոշակիորեն թույլ է:

4. Ուշադրություն. հանկարծ հոնքը շինելու տեղ աչքը չհանենք: Պիտի իմանանք, որ կա շեշտվող կրկնադիր **էլ**, ինչպես՝ **«է՛լ** արտասուքներ, **է՛լ** հեծկլտոցներ, քմահաճույքներ**»** (թարգմանական, Ի. Գոնչարով) և չշեշտվող, ինչպես՝ «Աստված հասնի պանդուխտին **էլ**, նեղյալին **էլ**» (Ս. Խանզադյան):

Պարզ երևում է, որ շեշտադրումը կատարվում է շաղկապի դիրքի թելադրանքով. շեշտվում է, երբ այն թվարկվող բառերից առաջ է դրվում: Իսկ երբ **էլ**-ը հաջորդում է թվարկվող բառերին, տրամաբանական շեշտը (այն սովորաբար չի դրվում) ընկնում է հենց ա՛յդ բառերի վրա, ուստի շեշտ չի դրվում:

5. Գրավոր և բանավոր խոսքում հաճախ են շփոթվում **ոչ միայն ... այլև** և **ոչ թե ... այլ** շաղկապները: Առաջին հայացքից սրանք թեև նման են, բայց իմաստով տարբեր են, նույնիսկ ինչ-որ առումով հակադրվող:

Ոչ միայն-ը ցույց է տալիս, որ խոսքը միայն այդ բանի մասին չէ, այլ դրան մի ուրիշ բան էլ պիտի ավելանա: Դրա համար էլ շաղկապի երկրորդ եզրում գործածվում է **այլև**-ը : Օրինակ՝ «Արշակը ջանում է **ոչ միայն** տկարացնել

մեզ, **այլև** խսպառ կործանել» (Ստ. Զորյան): Այսինքն՝ ջանում է մեզ տկարացնել, նաև խսպառ կործանել: Նշենք, որ սխալվում են այն մարդիկ, որոնք **այլև**-ի վրա բութ են դնում: Բոլորովին ավելորդ է:

Երկրորդ եզրում **ոչ միայն**-ին կարող է զուգադրվել **այլ նաև**-ը, որ նույն իմաստն է արտահայտում, ինչ **այլև**-ը: Օրինակ մամուլից՝ «Այդ ստեղծագործությունները վաղուց դարձել են տասնյակ հազարավոր ընթերցողների սեփականությունը **ոչ միայն** մայր հայրենիքում, **այլ նաև** նրա սահմաններից շատ հեռու»:

Մինչդեռ **ոչ թե**-ն ժխտում է մի բան, իսկ **այլ**-ը դրա փոխարեն հաստատում է մեկ ուրիշը: Օրինակ՝ «Հասկացե՛ք, դուք **ոչ թե** օգնում, **այլ** վնասում եք երկրին» (Ս. Խանզադյան): Նույն միտքը, անշուշտ, կարելի է ձևակերպել այլ կերպ՝ առանց **ոչ թե**-ի, պարզապես ստորոգյալն արտահայտելով բայի ժխտական ձևով: Այսպես՝ «Հասկացե՛ք, դուք **չեք օգնում**, **այլ** վնասում եք երկրին»:

6. Զուգադիր շաղկապների բաղադրիչ եզրերը սերտորեն կապված են իրար. մեկի առկայությունը պայմանավորում է մյուսի գործածությունը: Ինչպես **ոչ միայն** … **այլև** (կամ **այլ նաև**) և **ոչ թե** … **այլ** շաղկապներն են անխախտ բաղադրիչներով, այդպես էլ կան ուրիշները: Այսպես.

թեև ... **այնուամենայնիվ**. «**Թեև** Արամյանի համար պարզ էր, որ ընկերը կատակում է, **այնուամենայնիվ** նա ժպտալու, կատակը կատակով ընդունելու ուժ չունեցավ» (Ծ. Ավետիսյան),

թեև ... **բայց**. «**Թեև** մի կարճատև գործողություն էր դա, **բայց** հասարակության ուշադրությունից չվրիպեց» (Ռ. Զարյան),

թեկուզ ... **բայց**, **թեկուզ ... սակայն**. «Սկզբում ընդունում էին ինձ զսպված, փակ անվստահությամբ, որը **թեկուզ** ամեն

կերպ աշխատում էին թաքցնել, **բայց** երևում էր ամեն ինչից, անգամ նրանց ժպտալու ու նայելու եղանակից» (Ե. Չարենց), «**Թեկուզ** ջանում էր հանգիստ ու անվրդով լինել, **սակայն** տագնապով էր նայում Բեկին» (Ս. Խանզադյան),

թեպետ ... **բայց**, **թեպետ ... սակայն**. «**Թեպետ** ինքն ասում է, որ երեխա չէ, **բայց** իսկապես երեխայի բնավորություն ունի» (Նար-Դոս), «**Թեպետ** վաղուց պաշտոնաթող է, **սակայն** նրան անպաշտոն հագուստով դեռ չեն տեսել» (Բ. Հովսեփյան),

քանի որ ... **ուստի**. «**Քանի որ** ազգանունդ շատ է հայտնի, **ուստի** խորհուրդ կտայի, որ մայրաքաղաքում չմնաս նույնիսկ կարճատև ժամանակով» (Ֆ. Վերֆել),

եթե ... **ապա**. «**Եթե** խելացի ես, աշխատասեր, համառ, **ապա** խնդրեմ՝ ճի՛գ թափիր ու կտիրանաս այդ գանձերին» (Ճ. Թաթիկյան),

եթե ... **ուրեմն**. «**Եթե** երեխաներից մի նշան գտնեք վերևում, **ուրեմն** պետք է գնաք Հովազաձոր» (Վ. Անանյան): Ոմանք այս **ուրեմն**-ից հետո ստորակետ են դնում, սակայն դրա կարիքն ամենևին չկա:

Կարևորը ճիշտ կիրառելն է, որ նախադասության տրամաբանությունը չխաթարվի:

7. Պարզ է, որ ունենք **թեև**, **թեկուզ**, **թեպետ**, **քանի որ**, **եթե** շաղկապներ, որոնք նաև առանձին են գործածվում: Իհարկե, ըստ նախադասության արտահայտած մտքի: Այսպես. «**Թեև** ոչ այնքան հաջող, սկսեց հալածել անքնությունը, հոգին ու սիրտը ծվատող այդ վիշապին» (Մ. Սարգսյան), «**Թեկուզ** աժդահա լինես, հազար հարամիի դեմ մեն-մենակ ի՞նչ պետք է անես...» (Գ. Սևունց), «**Քանի որ** ուզում եք ինձ սպանել, թո-ղեք ոսկին հանեմ, հետո սպանեք» (Խ. Դաշտենց), «**Եթե** փորձես ինձ մոտենալ, դիպչել, իմացի՛ր, կթողնեմ, տնից կգնամ» (Ճ. Թաթիկյան):

49. ԲԱՐԵՎԻ ԵՎ ԲԱՐԵՎԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԵԼՈՒ ԵՐԱՆԳՆԵՐԸ

(9 երանգ)

Բարև-ը ծագում է **բարի** բառի գրաբարյան եզակի գործիական հոլովաձևից՝ **բարեաւ**-ից, որը հնչում է **բարյավ**: **Բարեաւ**-ը եթե «թարգմանենք» աշխարհաբար՝ նոր հայերեն, կլինի **բարով** (սա էլ ժողովրդական խոսքին բնորոշ բարևն է): Հնչյունափոխվելով **բարեաւ**-ը դարձել է **բարեւ** / **բարև**, որը ողջույնի հայերեն №1 բառն է:

Բարև-ը **բարի արև** բառակապակցությունից բխեցնելը հակագիտական է. դա ժողովրդական ստուգաբանություն է:

1. Ո՞ւմ և ե՞րբ ենք բարև ասում

Հայերս ավանդաբար կարճ ասում ենք **բարև**, երբ հանդիպում ենք հասակակցի, բարեկամի, մտերիմի: Ասում ենք օրվա բոլոր ժամերին, տարբեր իրադրություններում: **Բարև**-ը գործածում ենք նաև ծանոթանալիս կամ էլ որպես խոսակցություն սկսելու միջոց:

2. Ինչպե՞ս ենք պատասխանում բարևին

Բարևին որպես կանոն պատասխանում ենք բարևով:

- **Բարև**, տղերք:

- **Բարև**,- պատասխանում են կարճ ու շարունակում իրենց գործը (Ստ. Զորյան):

Ոմանք բարևին պատասխանելիս երբեմն ուղղակի կրկնում են ողջույնի բառը՝ **բարև**, **բարև**: Օրինակ գրականությունից.

- Բժիշկ Եսայա՞ն...: Ա՜, **բարև, բարև**:

Անընդհատ հին ծանոթներ էին հանդիպում (Զ. Խալափյան):

Խոսակցական լեզվում շատերը բարևին «շռայլորեն» պատասխանում են **հազար բարև** կամ էլ **բարև, հազար բարև**:

- **Հազար բարև**, հարևա՛ն, ուստա Ղազարդ սկսել է խմե՛լ... («Գրական թերթ»):

Բարևի պատասխանի մեջ ժողովուրդը հաճախ Աստծու անունն է տալիս.

- **Բարև**, սպիտակմորուս փահլևաններ:

- **Աստծո՛ւ բարին**, կանա՛չ կտրիճ (Ն. Զարյան):

Կամ էլ այսպես՝ երկուսը միասին. **Բարև, Աստծու բարին**:

3. **Բարև Ձեզ**

Երբ անծանոթ կամ պատկառելի մարդու ենք դիմում, հարգանքի հոգնակիով ասում ենք **Բարև Ձեզ**: Սա քաղաքավարական կամ հարգանքի հոգնակին է. այսպես բարևում ենք XIX դարից սկսած: Գրավոր խոսքում այս **Ձեզ**-ը մեծատառ է գրվում.

- **Բարև Ձեզ**, ես վանեցի եմ, ավելի շուտ վանեցիի թոռ եմ,- Բարեգործականի նախասրահում անվարժ հայերենով ինձ է ներկայանում մանկամարդ մի տիկին (Ս. Կապուտիկյան):

Ծանոթներին, որոնց հետ ընդհանրապես քաղաքավարական հոգնակիով ենք հաղորդակցվում, բնականաբար, կրկին բարևում ենք **Բարև Ձեզ** ասելով:

Պարզապես պետք է ուշադիր լինել, եթե այն դառնում է հոգնակի, ապա փոքրատառ է: Օրինակ՝ «**Բարև ձեզ**, հարգելի՛ պարոն Հայկյան, տիկին Վարդուհի, ուրախ կլինենք մեր տանը հյուրընկալելու ձեզ»:

Հարգական **Բարև Ձեզ**-ն ասում են տարիքով կամ պաշտոնով բարձր ծանոթ մարդուն, որը հաճախ պատասխանում է **բարև**-ով (ու մարդիկ դրանից սովորաբար չեն նեղանում):

- **Բարև Ձեզ**, ընկեր Գարեգին,- ասաց ու պատիվ բռնեց.

- **Բարև**,- պատասխանեցի ես (Գ. Բես):

4. **Բարև ձեզ**

Բարև ձեզ ասում ենք, երբ բարևում ենք մեկից ավելի մարդկանց: Այն գրվում է միայն փոքրատառ: Կրկնում ենք, փոքրատառ է գրվում, եթե անգամ պատվարժան և տարիք ունեցող մարդկանց է ուղղված:

5. **Բարև քեզ**

Հայերենում ընդունված չէ **բարև քեզ** արտահայտությունը՝ որպես ողջունելու ձև: Թեպետ պատահում է: Այսպես.

- Այ **բարև քեզ**, Ալեքսե՛յ, ինչպե՞ս եղավ, որ մեզ էլ հիշեցիր... (Վրթ. Փափազյան):

Կամ էլ՝ Իշուկը գնաց, Փիսիկը եկավ.
Եկավ ու ասավ.
-**Բարև քեզ**, ճռի՛կ... (Խնկո Ապեր):

Խոսակցական լեզվում որոշակի հնչերանգով ասված **բարև քեզ**-ն արտահայտում է անհամաձայնություն՝ շաղախված հեգնանքով: Ահա մեկ օրինակ մամուլից.

- Էդ փողին հըլը չորս հատ էլ կոֆե պիտի բերի,- ասաց Շերենցը:

- **Բարև քեզ**,- ասաց Շողիկը:- Կոֆեի փողը ջոկ պիտի տար («Առավոտ» օրաթերթ):

6. **Բարևին չպատասխանելը**

Բարևին չպատասխանելն անբարեկրթություն է կամ էլ բարևողի նկատմամբ անուշադրության և արհամարհական վերաբերմունքի դրսևորում: Դա համարյա նույնն է, որ մարդը չի բռնում ողջունելու համար իրեն պարզված ձեռքը:
Բարևին մեկ էլ չեն պատասխանում գժտված սիրահարները.

Բարև տվի՝ բարևս չառավ,
Գուցե ինձնից խռոված էր (Գուսան Շահեն):

7. **Բարև-ը նամակներում և հաղորդագրություններում**

Հաճախ հենց **բարև**-ով ենք սկսում մեր անձնական-մտերմիկ նամակները:

2016 թ. քառօրյայի և 2020 թ. քառասունչորսօրյայի ժամանակ ու դրանցից հետո Հայաստանի, Արցախի, Ջավախքի և սփյուռքի հազարավոր դպրոցականներ նամակներ էին գրում հայրենիքի սահմանները պահող հայ զինվորներին: Գրեթե բոլոր նամակներն սկսվում էին այսպես՝ անմիջական և մտերմիկ. «**Բարև**՛, զինվո՛ր», «**Բարև**՛, սիրելի՛ զինվոր» կամ «**Բարև**՛, հա՛յ զինվոր»:

Սովորաբար **բարև**-ով ենք սկսում հեռախոսային կամ ցանցային հաղորդագրությունները (հետևողական և հայրենասեր մարդիկ դա անում են մեսրոպյան տառերով):

Բարև, կյա՛նք: Ո՞նց ես:

Բարև, քա՛ղցրս: Հիանալի: Քո մասին էի մտածում:

8. **Բարևներ և շատ բարև**

Բարև բառի հոգնակին՝ **բարևներ**, որը և **շատ բարև**-ը սովորաբար փոխանցում են ուրիշների միջոցով՝ գործածելով **անել**, **ուղարկել**, **հաղորդել** բայերի հետ (կամ առանց դրանց): Դա ուշադրության և ջերմ վերաբերմունքի դրսևորում է, բարեմաղթություն: Օրինակներ՝

- Ձերոնք **շատ բարև** էին անում, ասում էին, որ քեզ լավ պահես (Ստ. Զորյան):

- **Շատ բարև** կանես քույրիկ Ոսկեհատին (Խ. Դաշտենց):

9. **Բարևում են ոչ միայն մարդկանց**

Ուկրաինացի բանաստեղծ Վ. Կոչնսկին ունի «**Բարև**, իմ Հայաստան» վերնագրով բանաստեղծությունների շարք:
Մանկական պիեսում ծովացուլը մարդկային լեզվով հայերեն ասում է. «**Բարև**, ճերմակ սառցասարերի չքնա՛ղ երկիր... **Բարև**, հյուսիսափա՛յլ...» (Ռ. Մարուխյան):

Բարևը հարգալից վերաբերմունքի դրսևորում է, ջերմության հաղորդիչ, շփման անհրաժեշտ նախապայման: **Բարև** ասելը չխնայենք:

50. ԱՎԱՆԴԱԿԱՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԳՐՎԱԾԸ ՃԻՇՏ ԿԱՐԴԱԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ

(10 դեպք)

Նկատել ենք, որ Հայաստանում շատ մարդիկ կան, որոնք ուղղակի վախենում են ավանդական ուղղագրությունից և գրաբարից (սա հին հայերենն է): Նույնիսկ գրագետ մարդիկ հաճախ պարզապես անճարակ են դառնում, երբ գրաբարյան մի թևավոր խոսք են տեսնում. անգամ կարդալ չեն կարողանում (հասկանալու մասին լռենք): Այնինչ այնքան էլ բարդ խնդիր չէ: Այժմ քայլ առ քայլ ծանոթանանք գրաբար կարդալու կանոններին: Ասենք նաև, որ գրաբար խոսքի պարագայում ուղղագրությունը չպիտի փոխել. այն գրված պիտի լինի դասական ձևով:

Ասույթների միջոցով անդրադառնանք գրաբար գրվածը ճիշտ կարդալու 10 դեպքի:

➢ Դպրոցների մուտքի վերևում, պատերին կամ վահանակների վրա հաճախ ենք տեսնում հայերեն գրված առաջին նախադասությունը, որը Մեսրոպ Մաշտոցը թարգմանել է Աստվածաշնչի Առակաց գրքից՝ «**Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ** (Ճանաչել իմաստությունը և խրատը, իմանալ հանճարի խոսքերը):

1. **Զ** նախդիրը հաջորդող բաղաձայնից առաջ **ըզ** է կարդացվում: Այսպես՝ զխրատ [ըզխրատ], զբանս [ըզբանս]:
Իսկ ձայնավորի հետ **զ**-ն միաձուլ է արտասանվում, բնականաբար, առանց **ը**-ի: Այսպես՝ զօրդին [զօրդին]:

2. Բաղաձայնից առաջ **իւ**-ը (ի+վյուն) **յու** է կարդացվում: Այսպես՝ զիմաստութիւն [զիմաստություն], արիւն [արյուն]:

3. Բառավերջի **ա**-ից և **ո**-ից հետո գրված **յ**-ն չի կարդացվում: Այսպես՝ հանճարոյ [հանճարո], տղայ [տղա]: Իհարկե, կան բացառություններ՝ հայ, գոյ, խոյ, Նոյ:

4. Երբ բաղաձայնով վերջացող բառը **ս**, **դ** կամ **ն** մասնիկ ունի, դրանցից առաջ **ը** է արտասանվում: Այսպես՝զբանս [ըզբանըս], Ձերդ [ձերըդ, այստեղից էլ՝ Ձերդ գերազանցութիւն], զքաղաքն [ըզքաղաքըն]:

5. **Ս**, **դ**, **ն** հոդերից, հոգնակի ուղղականի **ք** և հայցականի **ս** մասնիկներից առաջ **իւ**-ը **իվ** է կարդացվում: Այսպես՝ հովիւ – հովիւս [հովիվըս], հովիւդ [հովիվըդ], հովիւն [հովիվըն], հովիւք [հովիվք], զհովիւս [ըզհովիվըս]:

➢ Տարածված թևավոր խոսք կա, որը գործածում ենք, երբ մեկն իր միջավայրում ըստ արժանվույն չի գնահատվում: Այն հենց գրաբար էլ գործածում ենք (գրում և ասում)՝ **Մարգարէ յիւրում գաւառի պատիւ ոչ ունի** (Մարգարեն իր գավառում պատիվ չունի):

6. Բառասկզբում՝ ձայնավորից առաջ, **յ**-ն **հ** է կարդացվում: Այսպես՝ յանուն [հանուն], յերկինս [հերկինըս], յիւրում [հյուրում]: Այդպես է նաև **ղ**-ից առաջ՝ յղանամ [հղանամ], յղեմ [հղեմ]:

7. **Ւ** (ւ) տառը (անունն է վյուն / հյուն) **ա**, **ե**, **ի** ձայնավորներից և որևէ բաղաձայնից հետո կարդացվում է **վ**: Այսպես՝ գաւառ [գավառ], պատիւ [պատիվ], հոգւոյ [հոգվո]:

➢ Եղիշե պատմիչից (V դար) մեզ է հասել մի ասույթ, որը գնահատում է ուսումը, կրթությունը՝ **Կոյր զրկի ի ճառագայթից արեգական, եւ տգիտութիւն զրկի ի կատարեալ կենաց**

(Կույրը զրկվում է արեգակի ճառագայթներից, իսկ տգետը՝ կատարյալ կյանքից):

8. Բաղաձայնից առաջ՝ փակ վանկում, **ոյ**-ը կարդացվում է **ույ**: Այսպես՝ գոյն [գույն], լոյս [լույս], յոյս [հույս]:

Ն հոդից առաջ **ոյ**-ով վերջացող սակավաթիվ բառերը **օյ**-ով են կարդացվում, ինչպես՝ Նոյն [Նոյըն] (= Նոյը), զխոյն [ըզխոյըն], գոյն [գոյըն. գոյ նշանակում է «ինչ որ կա, գոյություն ունի»]:

9. **Եա**-ն **յա** է կարդացվում: Այսպես՝ մատեան [մատյան], յաւիտեան [հավիտյան], Մամիկոնեան [Մամիկոնյան]:

➢ Անցյալում ուսուցման ընթացքում անհնազանդ և ծույլ աշակերտներին պատժում էին, հաճախ շատ խիստ, մարմնական ցավ պատճառելով: Վստահ էին, որ դա օգնում է: Այս ասույթը դրա մասին է՝ **Որ ոչ լսէ ունկամբ, լուիցէ թիկամբ** (Ով չի լսում ականջով, կլսի թիկունքով):

10. **Ու**-ն ձայնավորից առաջ **վ** է կարդացվում: Այսպես՝ լուիցէ [լվիցե], պատուարժան [պատվարժան], Երուանդ [Երվանդ]:

Իսկ հիմա բարձրաձայն (և վստահ) կարդանք հետևյալ ասույթները.

- **Ամենայն չարիք մտանեն ի միտս մարդոյ յանուսումնութենէ:**
- **Ոչ է բարւոք առնուլ զհաց ի մանկանց եւ արկանել շանց:**
- **Վկայութիւն իմ ճշմարիտ է, զի գիտեմ ուստի եկի եւ յո երթամ:**

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԴԱՎԻԹ ՍԵՎԱՆԻ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ

ԼԵԶՎԱԿԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՒ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Տպաքանակը՝ 400

«Լինգվա» հրատարակչություն
«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամ
Հասցե՝ 0002, Երևան, Թումանյան փող. 42
Հեռ.՝ (+374) 10 52 20 20
http://www.brusov.am